

Stacy Chapman

891.71

W-80

510-2

0237-21/1/22

891.71-3

S-80

106

25 NOV 20

ԼԵՎ ՏՈՒՍՏՈՅ

ՀԱԶԻ-ՄՈՒՐԱԴ

ՎԻՊԱԿ



ՀԵՂԻՆԱԿԻ ԺՆՆԴՅԱՆ
ՀԱՐՑՈՒՐԱՄՅԱԿԻ ԱՌԹԻՎ

1928

891.71
S-808
uy.

ԼԵՎ ՏՈՒՍՏՈՅ

6217

891-71 Մայրաք
3-80 Մայրաք

ՎԱՍՔ-6357	28/10/80		

1002
6217

ՀԱԶԻ-ՄՈՒՐԱԴ

Վ Ի Պ Ա Կ

Թարգմ. Մ. Բ.

Խմբագրեց Աս. ԶՈՐՅԱՆ

ՀԱՅԿԱՍՏԱՆԻ ԿՈՄՍՏԻՏՍԻՆԵ

ԲՄԳՂՈՍՍ-ԿԶՄԻ

ՅԵՐԿՈՒ ԽՈՍՔ

Մրանով «Հաջի Մուրադը» հայերին հրատարակվում է լերկ-
 րորդ անգամ: Առաջին հրատարակությունը կատարել է Կովկ-
 Հայոց Հրատարակչ. ընկ.-ը 1914 թ., թարգմանությունը տալով այն
 ժամանակվա վոչ լրիվ բնագրից: Ներկա թարգմանությունը, սա-
 կաչն, կատարված է «Հաջի Մուրադի» վերջին, հեռ-հեղափոխու-
 թյան հրատարակությունից, վերջը նախկին հրատարակության հա-
 մեմատություններ այն առավելությունն ունի, վոր ամբողջական է,
 այսինքն՝ այն բոլոր գլուխներն ու հատվածները, վոր ջնջել եր
 ցարական գրաքննությունը, գտնելով դրանք անթույլատրելի, վո-
 րովհետև վերաբերում են նրանք ցարական իշխանություն և մաս-
 նավորապես Նիկոլայ Ա-ի գործունեություն քննադատության,—
 այժմ այդ բոլոր գլուխներն ու հատվածները տեղ են գտել այս
 թարգմանության մեջ. ուրիշ խոսքով՝ բնագրերը լիովին վերա-
 կանգնված է: Բացի դրանից, իրեն հավելված, գրքին կցված են
 այն բոլոր հատվածները, վոր ինքը Տոլստոյը չի դետեղել իր վի-
 պակում, վորոնք, սակաչն, արժեքավոր են գրվածքի միջավայրի
 և հերոսների բնութագրի տեսակետից: Գրքի վերջում գրված է
 նաև գրվածքում պատահող թուրքերեն բառերի բացատրական
 բառարան, վոր կազմել է ինքը՝ Տոլստոյը:



Հ Ա Ջ Ի Մ Ո Ւ Ր Ա Դ

Յես գաշտերով տուն ելի վերադառնում: Ամառվա ճիշտ կե-
սըն եր: Մարգարեությունները հավաքել ելին և նոր պատրաստվում
ելին հաճարը հնձելու:

Տարվա այդ ժամանակը ծաղիկների հիանալի ընտրութուն
ե լինում. սպիտակ, վարդագույն հոռավեա, խավոտ հազար-տե-
րեուկներ, կաթնագույն-սպիտակ, մեջտեղը բաց-դեղին «սպրուկ-
մեռնուկներ»՝ իրենց ախորժելի համեմալոր հոտով. դեղին սպի-
կախոտը՝ իր մեղրի հոտով. բարձր կանգնած մանուշակագույն և
սպիտակ կակաշաձե դանդաղածաղիկներ, սողոսկուն վոլոուներ, դե-
ղին, կարմիր, վարդագույն սկոբիսոգներ. մանուշակագույն, կոկ,
բաց-վարդագույն խավով և հազիվ զգացվող ախորժելի հոտով
Չղախոտ. կապտածաղիկներ, վորոնք բաց-կապույտ են ջահել հա-
սակում ու արևի տակ, կապույտ ու շառագունող—չերեկոյան ու
ձերության մոտ, և նշի հոտով գալլախոտի քնքուշ, խսկույն ևեթ
թոշնոց ծաղիկներ:

Ձանազան ծաղիկներից չես մի մեծ փունջ հավաքեցի և ար-
դեն տուն ելի դառնում, չերը առվի մեջ մի սքանչելի, մոռա-
գույն, ամբողջովին ծաղկած մագարիկոն տեսա՝ այն տեսակից,
վոր մեզանում «թաթար» և կոչվում, և վորի շուրջը խնամքով են
հնձում, վոր կանգուն փառ, բայց չեթե անզուշությամբ նրան ել
են հնձում, հնձվորները խոտի միջից դեն են շարտում, վոր իրենց
ձեռքերը չձակոտի: Միրոս ուղեց այդ մագարիկոնը պոկել և փնջի
մեջտեղը դնել: Ի՞նչ առվի փոսը և, դուրս քշելով ծաղկի միջու-
կին կտած, քաղցր ու մեղղ քնած թավամաղ իշամեղուն, սկսեցի
ծաղիկը պոկել: Բայց այդ դժվար եր. բավական չե, վոր ցողունը
ամեն կողմից ձակոտում եր նույնիսկ թաշկինակիս միջից, վորով
ձեռս փաթաթել ելի,—նա այնպես պինդ եր, վոր հինգ բոպե չես
նրա հետ չարչարվեցի, ցողունի թելերը մեկ-մեկ կտրատելով:
Յերբ վերջապես ծաղիկը պոկեցի, ցողունն արդեն զզզված եր,
և ծաղիկն ել այնպես թարմ ու գեղեցիկ չեր թվում: Բացի դրա-
նից՝ իր կոպտությամբ և տձեությամբ փնջի քնքուշ ծաղիկներին
չեր հարմարում: Յես ափսոսեցի, վոր դուր տեղը փչացրի այն

ծաղիկը, վորը իր տեղում լավ էր, ու դեն ձգեցի: «Բայց կյանքի վնասիսի չեռանդ և ուժ», մտածեցի չես, հիշելով այն ճիգերը, վոր գործ դրի ծաղիկը պոկելու վրա: «Ի՛նչպես էր նա բուռն ուժով պաշտպանվում և ի՛նչ թանգ ծախեց իր կյանքը»:

Տուն տանող ճանապարհը անցնում էր խամ թողնված և նոր միայն հերկված հողերով: Յես գնում էլի սևահող գառիվեր ճանապարհով: Հերկված հողը կալվածատիրական էր, շատ մեծ, այնպես վոր չերկու կողմից և առջևից դեպի սարը վոչինչ չեր բուռն, բացի սև, հավասար ակոսված, տակավին չտափանած վարելահողից: Վարը լավ էր, վոչ մի տեղ վոչ բույս էր չերևում, վոչ էլ խոտ, — բոլորը սև էր: «Ի՛նչ ավերիչ արարած է մարդը, վորքան պես-պես կենդանի էլակներ, բույսեր և վոչնչացրել էր կյանքը պահպանելու համար», մտածում էլի չես, ակամա այդ սև, մեռյալ դաշտում մի վորևե կենդանի բան փնտռելով: Առջև, ճանապարհից դեպի աջ, մի ինչ-վոր փոքրիկ թուփ էր չերևում: Յերբ մոտեցա, տեսա, վոր նույնպիսի «թաթար» է, վորի ծաղիկը գուր տեղը պոկեցի ու դեն ձգեցի:

«Թաթարի» թուփը չերեք ձյուղ ունի: Մեկը պոկված էր, և նրա ֆնացորդը ցցվել էր կտրված ձեռի պես: Մյուս չերկուսի վրա մի-մի ծաղիկ կար: Այդ ծաղիկները մի ժամանակ չեղել են կարմիր, այժմ սևացել էին արդեն: Յողուններից մեկը կտրված էր և նրա կեսը, վորի ծալրին մի կեղտոտ ծաղիկ էր, խոնարհվել էր ցած. մյուսը, թեպետ ծեփված էր սև հողի ցելսով, բայց դեռևս վեր էր ցցված: Յերևում էր, վոր ամբողջ թուփը ընկել էր անիվի տակ և հետո արդեն վեր բարձրացել ու այդ պատճառով կանգնած էր կողքի վրա թեքված, բայց և աչնպես կանգնած էր, — կարծես թե պոկել էին նրա մարմնի մի մասնիկը, փորտտիքը տակն ու վրա արել, ձեռը կտրել, աչքը հանել, բայց նա դարձյալ կանգուն է և անձնատուր չի լինում մարդուն, վոր նրա շուրջը վոչնչացրել էր նրա բոլոր չեղբայրներին: «Ա՛յ չեռանդ», — մտածեցի չես, — մարդ «ամեն ինչի հաղթել է, միլիոնավոր խոտ է վոչնչացրել, իսկ սա դարձյալ անձնատուր չի լինում»:

Ու չես մտաբերեցի կովկասյան մի անցած-դնացած պատմություն, վորի մի մասը տեսել էլի չես, մի մասը ականատեսներից էլի լսել, մի մասն էլ չերևակայել էլի ինքս: Այդ պատմությունը, ինչպես կազմվել էր նա հիշողությունս ու չերևակայությունս մեջ, ահա ինչպես է:

1851 թ. վերջերին էր: Նույնքեր ամսի մի ցուրտ չերեկո Հաջի Մուրադը ձի նստած մտնում էր աթարի հոտավետ ծխից միացող չեչենական անհանգիստ Մախկեթ աուլը, վոր ուսաց սանձանից քսան վերստ հեռու չեր:

Մուեղինի* լարված չերգեցողությունը նոր միայն դադարել էր, և աթարի ծխի հոտով լցված լինանչին մաքուր ողում՝ աուլի՝ խորխոսի պես միմյանց սերտորեն կպած խրճիթները ցրվող կովերի բառաչի և վոչխարների մայունի միջից վորոշակի լավում էլին վիճարանող տղամարդկանց կոկորդաչին հնչյունները և կանանց ու չերեխաների ձայներ՝ ցածի աղբյուրի կողմից:

Այս Հաջի-Մուրադը Շամիլի նաչիրն էր, վոր հոչակված էր իր քաջագործություններով. նա ուրիշ կերպ ճանապարհ չեր ընկնում, չեթե վոչ իր նշանով, միքանի տասնչակ մյուրիդների ուղեկցությամբ, վորոնք նրա շուրջը ջիրից էլին խաղում: Այժմ փաթաթված բաշլըղով ու չափնջով, վորի տակից դուրս էր ցցվել հրացանը, նա ձիով գնում էր մի մյուրիդի ուղեկցությամբ, աչխատելով վորքան կարելի չե քիչ նկատվել, ու իր արագաշարժ սև աչքերով դնում էր ճանապարհին պատահող ընակիչներին գեմքերը:

Գյուղամեջ հասնելով՝ Հաջի-Մուրադն այն փողոցով չգնաց, վորը տանում էր դեպի հրապարակ, այլ ձեռնց դեպի ձախ, դեպի մի նեղ փոքրիկ փողոց: Մոտենալով այդ փողոցի չերկուրդ՝ կիսով չափ սարի մեջ փորված խրճիթին՝ նա կանգ առավ՝ չորս կողմը նաչելով: Խրճիթի առաջ՝ ծածքի տակ վոչվոք չկար, իսկ կրտրանը, նոր ծեփած ծխնելուցի չեռև, մուշտակով ծածկված մի մարդ էր պռուկել: Հաջի-Մուրադը մտրակի կոթով հրեց այդ պռուկած մարդուն և չեղուն չպապացրեց: Մուշտակի տակից վեր կացավ մի ձեռուկ՝ դիշերային թասակով և կեղտից փալլող հին բեշմեթը հագին: Ծերունու անթերթերունք աչքերը կարմիր էլին ու թաց, ուստի, կոպերը բանալու համար, թարթում էր: Հաջի-Մուրադը սովորական «ասլամ-ալիքումն» ասաց ու դեմքը բաց արավ:

* Գրքի վերջում գրված են սույն վիպակում պատահող թաթարերեն բառերի համառոտ բացատրությունները:

— Ալիքըում սալամ,—անատամ բերանով ժպտալով պատասխանեց ծերունին, ճանաչելով Հաջի-Մուրադին և, իր նիհար վտաների վրա կանգնելուց հետո, սկսեց ծխնելուչը մոտ ընկած փայտակրունկ քոշերը հագնել: Քոշերն ել հագնելուց հետո նա, առանց շտապելու, հագավ վոչխարի մորթուց կարած, աներես, կուշ-կուշ չեկած մուշտակը ու, քամակը դեպի ցած արած՝ իջավ կտրի մոտ դրած սանդղղով: Թե հագնվելիս, թե ցած իջնելիս ծերունին իր վտիտ, խորշումած և արևառ վզի վրա սրբում եր գլուխը և անատամ բերանը չպղպցնում շարունակ: Յերբ ցած իջավ, նա հլուրասիրարար բռնեց Հաջի-Մուրադի ձեռք սանձն ու աջ սապանդակը, բայց Հաջի-Մուրադի ճարպիկ, ուժեղ մշուրիղը ձեռք իջավ, ծերունուն հեռացրեց և նրան փոխարինեց:

Հաջի-Մուրադն ել ձեռք իջավ և, թեթևակի կաղալով, ծածքի տակ մտավ: Դռնից արագ-արագ նրա դեմ դուրս չեկավ մի տասնուհինգ տարեկան տղա և իր սևորակ, հասուն հաղարձի պես փայլուն աչքերը զարմացած հասեց չեկվորներին վրա:

— Վագիր մզկիթ, հորդ կանչիր,—հրամայեց ծերունին և, Հաջի-Մուրադից առաջ ընկնելով, նրա առջև բացեց խրճիթի ճոնչան դուռը: Այդ իսկ ժամանակ, չերբ Հաջի-Մուրադը ներս եր մտնում, ներքին դռնից դուրս չեկավ բարձերը ձեռքին մի հասակավոր, նրբակազմ նիհար կին, վոր գեղին շապկի վրա հագել էր կարմիր բեշմեթ և կապույտ վարտիկ:

— Գալը բարի, —ասաց կինը և, չերկտակ կուացած, սկսեց բարձերը շարել առաջին պատի մոտ, վոր հլուրը նստի:

— Տղերքդ ասրեն, — պատասխանեց Հաջի-Մուրադը և լափընջին, հրացանն ու թուրը հանելով՝ ավեց ծերունուն:

Ծերունին հրացանն ու թուրը զգուշութամբ մեխից կախեց՝ տանտիրոջ գենքի կողքին, չերկու մեծ պսպղուն կոնքի միջև, վորոնք փայլում էին հարթ սվաղած և մաքուր սպիտակեցրած պատի վրա: Հաջի-Մուրադը, ուղղելով մեջքին կապած հնաձև ատրճանակը, շարած բարձերին մոտեցավ և, չերքեակալի փեշերն իրար վրա բերելով, նստավ բարձերի վրա: Ծերունին նստեց նրա մոտ իր բորիկ կրունկների վրա, աչքերը խփեց և ձեռքերը բարձրացրեց՝ ամենը դեպի վեր արած: Հաջի-Մուրադն ել նույնն արավ: Ապա չերկուսն ել ազոթելով չերեսները շփեցին ձեռներով, միացնելով նրանց մորուքներին ծալրին:

— Նե՛ խարար (ինչ լուր), — հարցրեց Հաջի-Մուրադը ծերունուն:

— Խարար լու (լուր չկա), — պատասխանեց ծերունին, իր կարմիր, ահեկնույան աչքերով նայելով Հաջի-Մուրադի վոչ թե զեմքին, այլ կրծքին: — Յես մեղվանոցում եմ ապրում, հսոր եմ միաջն չեկել վորդուս տեսնելու: Նա գիտի:

Հաջի-Մուրադը գլխի ընկավ, վոր ծերունին խմացածը չի ուզում ասել, բայց Հաջի-Մուրադին հարկավոր և իմանալ ալը, և, թեթև գլխով անելով, ալլես հարցուփորձ չարավ ծերունուն:

— Վոչինչ լավ նոր բան չկա, — խոսեց ծերունին: — Նորը միաջն աջն և, վոր բոլոր նապաստակները խորհուրդ են անում, թե ինչպես արծիվներին քշեն: Իսկ արծիվները մեկ սրան են ծվատում, մեկ նրան: Անցյալ շարաթ շուն ուսները Միչկիցիներին խոտը կրակեցին, նրանց չերեսը սևանա, — չորութամբ ասաց ծերունին:

Ներս մտավ Հաջի-Մուրադի մշուրիղը և, իր ուժեղ վտաների մեծ քալերը կամացուկ փոխելով հողե հատակի վրա, Հաջի-Մուրադի պես լափնջին, հրացանն ու թուրը հանեց և, միաջն դաշույնն ու ատրճանակը մոտը թողնելով, ինքը կախեց նույն մեխերից, վորոնցից Հաջի-Մուրադի զենքերն էին կախված:

— Սա ո՞վ և, — հարցրեց ծերունին Հաջի-Մուրադից՝ ներս մտնողին ցույց տալով:

— Մշուրիդս և. անունը Ելզար և, — ասաց Հաջի-Մուրադը:

— Լավ, — ասաց ծերունին և թաղիքի վրա տեղ ցույց ավեց Ելզարին՝ Հաջի-Մուրադի կողքին:

Ելզարը ծալապատիկ նստավ և իր գեղեցիկ, վոչխարալին աչքերը լուս հասեց խոսակցութուն սկսած ծերունու վրա: Ծերունին պատմում եր, թե ինչպես անցյալ շարաթ իրենց կորիճները չերկու գլխավոր էլին բռնել, մեկին սպանել, իսկ մշուսին ուղարկել Վեզնո՛ Շամիլի մոտ: Հաջի-Մուրադն անուշաղիր եր լուս. նա շուտ-շուտ նայում եր դռանը և ականջ եր գնում դրսի ձայներին: Ծածքի տակ, խրճիթի առաջ, քալիք լավեցին, գուռը ճանչաց, և տանտերը ներս մտավ:

Խրճիթի տերը, Սադան, քառասուն տարեկան մի մարդ եր, կարճ մորուքով, չերկար քթով և նույնպիսի սև, թեև վոչ նույնչափ փայլուն աչքերով, ինչպես տասնհինգ տարեկան աղալինը՝ նրա վորդունը, վոր վագեց-գնաց հորը կանչելու և նրա հետ միասին խրճիթ մտնելով՝ նստավ դռան մոտ: Տանտերը՝ փայտե քոշերը դռան մոտ հանելով՝ հին, մաշված փափախը չեա քաշեց վաղուց չսափրած, սև մագերով ծածկված ծոճրակի վրա և անմիջապես պպեց Հաջի-Մուրադի գեմ:

Ծերունու պես նա լել աչքերը խփեց, ձեռքերը, ափերը վեր բռնած, բարձրացրեց, աղոթք ասաց, ձեռներով չերեսը շփեց և ապա միայն խոսել սկսեց: Նա պատմեց, թե Շամիրից հրաման կա, վոր Հաջի-Մուրադին վողջ կամ մեռած բռնեն, թե Շամիրի ուղարկած մարդիկը չերեկ միայն գնացին, թե ժողովուրդը վախենում և Շամիրին չհնազանդվել, և թե այդ պատճառով պետք է զգուշ լինել:

— Իմ տանը,—ասաց Սադոն,—քանի չես կենդանի չեմ, իմ կուսակին վողջովք ձեռ չի տալ: Բայց թե ի՞նչպես կլինի զաշտում: Պետք է մտածել:

Հաջի-Մուրադն ուշադրությամբ լսում էր և հավանությամբ գլուխը շարժում, և չերք Սադոն խոսքը վերջացրեց, նա ասաց.

— Կամ: Այժմ մի մարդ է հարկավոր ուսանելի մոտ նամակ ուղարկելու: Իմ մյուսրիդը կգնա, բայց միայն ճանապարհ ցույց տվող է պետք:

— Յեղբորս՝ Բաթային կուղարկեմ,—ասաց Սադոն:—Բաթային կանչիր,—գիմեց նա վորդուն:

Տղան, ասես թե զսպանակի վրա նստած, վեր թռավ, իր կայտառ վտանների վրա կանգնեց և արագ-արագ, ձեռները շարժելով, դուրս չեկավ տնից: Տասը բոպելից հետո նա վերադարձավ մի սև-արևառ, ջրուտ, կարճ վտաններով չեչենի հետ, վորի հագին մի գեղին, քրքրված չերքեսկա չեր, պատուտած—ծոպ-ծոպ—թեքերով և ցած իջեցրած և սունապաններով: Հաջի-Մուրադը բարևեց նորեկին և անմիջապես, առանց ավելորդ խոսքերի, ասաց.

— Իմ մյուսրիդիս կարո՞ղ ես ուսանելի մոտ տանել:

— Կարելի չէ,—ուրախ-ուրախ պատասխանեց Բաթան:—Ամեն բան կարելի չէ: Բացի ինձանից վոչ մի չեչեն չի կարող գնալ: Թե չէ մեկը կասի, թե կգնա, ամեն բան կխոստանա, բայց վոչինչ չի անիլ: Իսկ չես կարող եմ:

— Կա՞վ,—ասաց Հաջի-Մուրադը:— Աշխատանքիդ համար կտանաս չերեք,—ասաց նա՝ չերեք մատը ցցելով:

Բաթան գլուխը շարժեց՝ կամենալով ասել, թե հասկացավ, բայց ավելացրեց, թե իր համար փողը չէ կարևորը, այլ Հաջի-Մուրադին ծառայելը պատիվ է իր համար: Սարերում ամենքը ճանաչում են Հաջի-Մուրադին և գիտեն, թե ինչպես էր նա թակում խոզ ուսանելին:

— Կամ,—ասաց Հաջի-Մուրադը:—Թոկի չերկարն է լավ, խոսքի—կարճը:

— Դեհ, կլուծմ,—ասաց Բաթան:

— Ինչ տեղ Արդունը թեքվում է՝ դարբիուսի դեմ, անտառում մի բացուտ կա և չերկու դեզ խոտ: Գիտե՞ս:

— Գիտեմ:

— Այնտեղ իմ չերեք ձիավորներն ինձ սպասում են,—ասաց Հաջի-Մուրադը:

— Այա,—ասաց Բաթան՝ գլուխը շարժելով:

— Խան-Մահոմադին կհարցնես: Խան-Մահոման գիտի, թե ինչ պետք է անել և ինչ ասել: Նրան պիտի ուսաց գլխավորի, վորոնցովի, իշխանի մոտ տանել: Կարո՞ղ ես:

— Կտանեմ:

— Տանել և չեա բերել: Կարո՞ղ ես:

— Կարելի չէ:

— Կտանես ու կվերադառնաս անտառ: Յես ել այնտեղ կլինեմ:

— Ամեն բան կանեմ,—ասաց Բաթան, վերկացավ և, ձեռքերը կրծքին գնելով, դուրս չեկավ:

— Մի մարդ ել Ձեխի պետք է ուղարկել,—ասաց Հաջի-Մուրադը տանտիրոջ, չերք Բաթան դուրս չեկավ:—Ձեխում անա թե ինչ պետք է անել,—սկսեց նա, բռնելով չերքեսկալի խողըր-նեբից մեկը, բայց իսկույն ևեթ ձեռը ցած թողեց և լսեց, տեսնելով ներս մտնող չերկու կնոջ:

Մեկը Սադուի կինն էր, այն վոչ ջահել, նիհար կինը, վոր բարձերը շարեց: Մյուսը բոլորովին մանկամարդ մի աղջիկ էր՝ կարմիր վարտիկով և դեղին բեշմեթով, ամբողջ լանջը արծաթե դրամների վարագուրով ծածկած: Նիհարիկ մեջքի թիկունքների միջև ընկած նրա կարճ, բայց հաստ ու կոշտ սև ծամի ծալքից մի արծաթ մանեթանոց էր կախված. նույնպես սևորակ, հողարձի պես աչեր, ինչպես հորն ու չեղբորն ելին, ցուրտ ելին թարմ չերեսին, վոր աշխատում էր խիստ չերեալ: Հյուսիսին նա չերնաչում, բայց նկատելի չեր, վոր նրանց ներկայությունը զգում էր:

Սադուի կինը ձեռքին մի ցածրիկ, կլոր սեղան էր բերում, վորի վրա դրված էին թեյ, փիլգիշներ, չուղոտ բլիթներ, պանիր, չյորեք (բարակ տափակ հաց) և մեղր: Աղջիկը բերում էր կոնքը, ջրամանը և սրբիչը:

Սադոն ու Հաջի-Մուրադը—չերկուսն էլ լուռ ելին ամբողջ ժամանակ, չերք կանայք՝ իրենց կարմիր, առանց ներբանի կակուղ չուվակներով հանպիստ շարժվելով՝ բերածը շարում ելին հյու-

րերի առջև: Երբարը՝ իր վոչխարի աչքերը ծալապատիկ վտաններին հառած, արձանի պես անշարժ էր այն բոլոր ժամանակ, քանի կանաչք խրճիթումն էլին: Միայն լերը նրանք գնացին, և դռան լեռն լոռիցն նրանց մեղմ քայլերը, Երբարը թեթևացած շունչ քաշեց, իսկ Հաջի-Մուրադը դուրս քաշեց չերքեհկալի խոզըրներից մեկը, հանեց միջի փամփուշտը և փամփուշտի տակից մի կլորած թուղթ:

— Տալ վորդուս, — ասաց նա՝ թուղթը ցուց տալով:

— Պատասխանը ու՞մ բերեն, — հարցրեց Սադոն:

— Քեզ, իսկ դու ինձ կհասցնես:

— Այդպես ել կլինի, — ասաց Սադոն և թուղթը իր չերքեհկալի խոզըրի մեջ գրեց: Ապա ջրամանը վերցնելով՝ կոնքը Հաջի-Մուրադի մոտ քաշեց: Հաջի-Մուրադը բեշմեթի թևերը իր ջրոտ դաստակից վեր սպիտակ թևերի վրա քշտեց և բռնեց սառնորակ, Վճխա ջրի տակ, վոր ածու՞մ էր Սադոն ջրամանից: Մաքուր, բայց կոշտ սրբիչով ձեռները սրբելուց հետո Հաջի-Մուրադը մտտեցավ ուտելիքին: Նույնը Երբարն արավ: Մինչ հյուրերն ուտում էլին, Սադոն նրանց դեմ ու դեմ նստած միքանի անգամ իր շնորհակալութունը հայտնեց նրանց այցելութիան համար: Գոհան մոտ նստած տղան՝ իր սե-սե փայլուն աչքերը Հաջի-Մուրադից չհեռացնելով, ժպտում էր, կարծես թե իր ժպտով հաստատում էր հոր ասածները:

Չնայելով վոր Հաջի-Մուրադը մի որից ավելի բան չէր կերել, նա միքիչ պանիր ու հաց կերավ միայն և, դաշուչնի տակից դանակը հանելով, մեղր վերցրեց և հացի վրա քսեց:

— Մեր մեղրը լաջիւ է: Այս տարվա մեղրը բոլոր տարիների մեղրից բարձր է. թե շատ է և թե լավ, — ասաց ձերուներն, վոր, ինչպես չերևում էր, գոհ էր, վոր Հաջի-Մուրադը ուտում է իրա մեղրը:

— Շնորհակալութուն, — ասաց Հաջի-Մուրադը և ուտելիքից լեռ քաշվեց: Երբարն ուզում էր ելի ուտել, բայց նա չէր իր մշուրչիկի պես, սեղանից հեռացավ և կոնքն ու ջրամանը Հաջի-Մուրադին տվեց:

Սադոն գիտեր, վոր, Հաջի-Մուրադին ընդունելով, կյանքը վտանգի չէր լինթարկում, վորովհետև Շամիլի և Հաջի-Մուրադի միջև ծագած վեճից հետո Չեչնայի բոլոր բնակիչներին հայտարարված էր, մահվան պատժի սպառնալիքով, Հաջի-Մուրադին չընդունել: Նա գիտեր, վոր սուլի բնակիչներն ամեն բոսյե կա-

բող էլին իմանալ, վոր Հաջի-Մուրադը նրա տանն է, և կարող էլին պահանջել, վոր իրենց ձեռքը հանձնեք նրան: Բայց այդ վոչ միայն չէր շիտթում Սադոնին, այլ և ուրախութուն էր պատճառում նրան: Հյուրին պաշտպանելը, նույնիսկ կյանքի գնով, Սադոն իր պարտականութունն էր համարում և ուրախանում, պարծենում էր, վոր վարվում է այնպես, ինչպես պետք է:

— Քանի դու իմ տանն ես և գլուխս դեռ ուտերիս վրա չե, վոչվոք քեզ վոչ մի բան չի անիլ, — կրկնեց նա Հաջի-Մուրադին:

Հաջի-Մուրադը նրա փայլուն աչքերի մեջ նայեց և հասկանալով, վոր այդ խոսքերը անկեղծ են, փոքր ինչ հանդիսավորությամբ ասաց.

— Թող կյանքդ ու ուրախութունդ անպակաս լինի:

Սադոն անխոս ձեռները կրծքին դրեց ինչան շնորհակալության այդ լավ խոսքերի համար:

Խրճիթի փեղկերը փակելով և բուխարու մեջ ցախ դնելուց հետո Սադոն մի առանձին բերկրությամբ և հուզված տրամադրությամբ հյուրասենյակից դուրս լեկավ և խրճիթի այն բաժանմունքը մտավ, ուր նրա ամբողջ ընտանիքն էր ապրում: Կանաչք գեռես քնած չէլին. նրանք խոտում էլին հյուրասենյակում դիշերող վտանգավոր հյուրերի մասին:

II

Այդ իսկ գիշեր վոզվիթենակալա առաջավոր բերդի ամրոցից, վոր քսան վերստ հեռու չէր այն սուլից, ուր Հաջի-Մուրադն էր գիշերում, չերք վիճվոր և մի լեռնթասպա դուրս լեկան Շահգիրիյան դռնից դենը գնալու համար: Զինվորները կիսամուշտակներով ու փափախներով էլին, կլորած վերաբեռները ուտները զցած և մեծ, ծնկներից ձաքավոր կոշիկներ հագած, վորպիսին այդ ժամանակ հագնում էլին կովկասի զինվորները:

Նրանք հրացաններն ուտերին նախ գնում էլին ձառնապարհով, բայց անցնելով հինգ հարյուր քալաչափ, դուրս լեկան ձառնապարհից, կոշիկներով տերևները խշխշացնելով, մի քսան քալաքին դեպի աջ ու կտրված չինարու մոտ կանգ առան, վորի սե բունը միման մեջ ել չերևում էր: Գաղտնապահակը սովորաբար այս չինարու մոտ էր ուզարկվում:

Քանի գեռ գինվորները գնում էլին անտատով, պաջառ աստղերը ասես թե փախչում էլին ծառերի կատարներին վրայով,

խակ այժմ, չերբ կանգ ելին առել, նրանք պայծառ քայլում ելին ծառերի մերկ ճյուղերի միջև:

— Շնորհակալութիւն. չոր ե,—ասաց լենթասպա Պանովը՝ ուսից վերցնելով չերկար սվինավոր հրացանը և, գետնին շրջակայքից վերցնելով՝ դեմ արավ չինարու բնին: Յերեք զինվորներն էլ նույնն արին:

— Եղպես ել կա—կորցրել եմ,—նեղացած մըթմըթաց Պանովը,—կամ մոռացել եմ, կամ ճանապարհին ե գուրս ընկել:

— Ի՞նչ ես փնտռում,—հարցրեց զինվորներից մեկը ուրախ-զվարթ ձայնով:

— Ծխամորճա,—սատանան գիտե, թե ո՞ւր ե կորել:

— Ձիբուխը հո մնացե՞լ ե,—հարցրեց զվարթ ձայնը:

— Ձիբուխը... ա՛յ:

— Ուղղակի հողի՞ մեջ:

— Ե՛հ, ինչ ես ասում:

— Եղ մենք ձեռաց կտարքենք:

Գաղտնի պահակին ծխելն արդեւլված եր, բայց դա գրեթե գաղտնապահակ չեր, այլ ավելի շուտ մի առաջավոր պահակ, վոր ուղարկվում եր, նրա համար, վորպեսզի լեռնականները չկարողանան աննկատելի կերպով, ինչպես առաջ ելին անում, թնդանոթներ բերել և ամբողջ վրա արձակել. ուստի Պանովը հարկավոր չեր համարում ծխելուց զրկել իրեն, այդ պատճառով էլ ընդունեց ուրախ զինվորի առաջարկը: Ուրախ զինվորը գրպանից դանակը հանեց և սկսեց գետննը փորել: Մի փոքրիկ փոս փորելուց հետո նա հարթեց աչն, չիբուխը հարմարեցրեց, հետո փոսի մեջ ծխախոտ գրեց, սեղմեց աչն, ու ծխամորճը պատրաստ եր: Վառվեց լուցկին՝ մի ակնթարթ լուսավորելով փորի վրա պռակած զինվորի վոսկրոտ դեմքը: Ձիբուխը փստփստաց, և Պանովը զգաց վառված մախորկաչի ախորժեղի հոտը:

— Սարքեցի՞ր,—ասաց նա՝ վոտքի կանգնելով:

— Բա թողի՛:

— Այ դոչա՞ղ Ավդեյկ, աչքարաց մարդ ես չեղել: Դեհ, արա մի տեսնեմ:

Ավդեյկը գլորվեց կողքի վրա, Պանովին տեղ տալով և բերանից ծուխը բաց թողնելով: Պանովը փորի վրա պռակեց և, թեև չիբուխի ծայրը սրբելով, սկսեց ծուխը ներս քաշել: Ծխելը պրծնելուց հետո զինվորների միջև խոսակցութիւնը բացվեց.

— Ասում են, թե վաշտապետն (ոտանին) ելի արկղն

և մտել. ով գիտի՝ ելի տանուլ ե տվել,—ասաց զինվորներից մեկը ծուլ ձայնով:

— Կտա,—ասաց Պանովը:

— Հայտնի բան ե, լավ սպա չե,—հաստատեց Ավդեյկը:

— Լավը՝ լավ ե,—մտալ շարունակեց խոսակցութիւն սկսողը,—լմ կարծիքով վաշտը նրա հետ պիտի խոսի. թե՛ վոր վերցրել ես, ասա, վորքան ե և չերբ կտաս:

— Ինչպես վաշտը կվորոշի,—ասաց Պանովը՝ ծխամորճը թողնելով:

— Հայտնի բան ե, վաշտը մեծ ուժ ե,—հաստատեց Ավդեյկը:

— Ձե՞ վոր պետք ե վարսակ առնել, գարնան համար ել կոշիկներ պատրաստել, փող ե հարկավոր. բայց նա ի՞նչպես ե վերցրել...—սնդում եր դժգոհը:

— Ասում եմ, ինչպես վաշտը կուզի,—կրկնեց Պանովը:—

Առաջին անգամը հո չի,—վերցնում ե ու տալիս:

Կովկասում այդ ժամանակ ամեն մի վաշտ իր ընտրած մարդկանց ձեռքով եր կառավարում իր անտեսութիւնը: Յուրաքանչյուր մարդու համար նա գանձարանից 6 ու. 50 կ. եր ստանում և ինքն իրեն կերակրում. կազմը եր տնկում, խոտ հնձում, իր սալերը պահում, վաշտի կուշտ ձիերով պարծենում: Իսկ վաշտի փողը արկղումն եր, վորի բանալին վաշտի հրամանատարի մոտն եր լինում, և հաճախ եր պատահում, վոր վաշտի հրամանատարը արկղից փող եր պարտք վերցնում: Այդպես էլ պատահել եր այժմ, և հենց դրա մասին էլ խոսում ելին զինվորները: Մուսլաղեմ զինվոր Նիկիտինը հրամանատարից հաշիվ եր ուզում պահանջել, իսկ Պանովը ու Ավդեյկը կարծում ելին, վոր այդ հարկավոր չեր: Պանովից հետո Նիկիտինն էլ ծխեց և, վերարկուն տակը փռելով, նստավ ու մեջքը ծառին դեմ տվեց: Ձինվորները լռեցին: Լավում եր միայն, թե ինչպես քամին նրանց գլխավերեի ծառերի կատարներն եր շարժում: Հանկարծ այդ ընդհատվող մեղմ սոսափուլունի միջից լսվեց շնագայլերի կաղկանձուներ, ճիչը, լացն ու քրքիջը:

— Այ, անիծվածները ինչպես են հոհում,—ասաց Ավդեյկը:

— Եղ նրանք քեզ վրա չեն ծիծաղում, վոր ունիդ ծուռ ե,—ասաց չորրորդ զինվորը խախտական բարակ ձայնով:

Դարձալ ամեն ինչ լռեց, միայն քամին եր ծառերի վոտակները շարժում, մերթ բանալով, մերթ ծածկելով աստղերը:

— Ի՞նչ ե, Անտոնիչ,— հանկարծ հարցրեց Պանովից ուրախ Ավդեյկերը,— պատահում է, վոր տխրում ես:

— Ինչ տխրութիւն,— չուզեմ ասել պատասխանեց Պանովը:

— Իսկ չես չերբեմն կնպես եմ տխրում, կնպես եմ տխրում, վոր, կարծես, ինքս ել չեմ իմանում, թե ինչ կարող եմ անել ինձ հետ:

— Տես հո, — ասաց Պանովը:

— Են ժամանակ վոր փողս խմիչքի տվի, բոլորը հո տխրութիւնից եր: Ե՛նպես ելի տխրում, կնպես ելի տխրում... Մտածեցի՛ արի՛, մի լավ հարբեմ:

— Բայց կնպես ել ե պատահում, վոր գինուց ավելի վատ ե լինում:

— Եդպես ել չեղավ, բայց ի՞նչ արած:

— Իսկ ինչո՞ւ համար ես եդքան տխրում:

— Յէ՛ս: Տան համար եմ տխրում:

— Ի՞նչ ե, հարձուտ ելիք ապրում:

— Վոչ թե հարուստ, այլ կանոնավոր ելինք ապրում: Լավ ելինք ապրում:

Յեւ Ավդեյկեն սկսեց պատմել, ինչ վոր արգեն միքանի նանգամ պատմել եր նույն Պանովին:

— Յես իմ կամքովս չեղորս տեղ ծառայելու չեմ չեկել,— պատմում եր Ավդեյկերը:— Նա չերեխաներ ուներ, ինքը հինգերորդն եր, իսկ ինձ հենց նոր ելին ամուսնացրել: Մայրս սկսեց խնդրել: Մտածում եմ. ի՞նչ կա վոր, գուցե մի որ արած լավութիւնս հիշեն: Գնացի աղալի կուշտը: Մեր աղեն լավ մարդ ե, ասում ե՛ գոչնոց, գնա: Եդպես ել չեկա չեղորս փոխարեն:

— Ի՞նչ կա վոր, եդ լավ ե, — ասաց Պանովը:

— Բայց, սոյ, հավատում ես, Անտոնիչ, հիմի տխրում եմ: Յեւ ամենից շատ նրա համար եմ տխրում, թե ինչո՞ւ համար չեկա չեղորս տեղալ: Նա հիմի թագավորի պես ե ապրում, իսկ ելս հետեղ տանջվում եմ: Յեւ ինչքան շատ եմ մտածում, ենքան վատ: Մեղքս, չերեում ե, եդպես ե:

Ավդեյկեր լռեց:

— Ել չքաշե՛նք, — հարցրեց Ավդեյկերը:

— Լավ, պատրաստիք:

Բայց գինվորները ծխել չկարողացան: Նոր եր միայն Ավդեյկեր վեր կացել և ուզում ծխամորձը պատրաստել, չերք քամու շքնջլունի միջից ճանապարհի կողմից քայլերի ձայն չեկավ: Պանովը հրացանը վերցրեց և վտաով հրեց նիկիտինին: Նիկիտինը վտաքի

կանգնեց ու վերարկուն վերցրեց: Վեր կացավ և չերրորդը — Բոնդարենկոն:

— Իսկ չես, տղերք, ինչ չերադ տեսա...

Ավդեյկեր Բոնդարենկոյին լռեցրեց, և գինվորները շնչազուսպ ականջ դրին: Քայլերը կոշիկ չհագնող մարդկանց քայլեր ելին: Պատարում ավելի և ավելի պարզ լավում եր տերեւների և ճուղերի ճրճրթոցը: Ապա լավից խոսակցութիւնս այն առանձին, կոկորդաչին լեզվով, վորով չեզնչներն են խոսում: Զինվորներն այժմ վոչ միայն լսում, այլ և տեսնում ելին չերկու ստվեր, վորոնք անցնում ելին ծառերի արանքի լուսավոր տեղով: Ստվերներից մեկը ցածր եր, մյուսը — բարձր: Յերք ստվերները հավասարվեցին գինվորների, Պանովը հրացանը ձեռին բռնած, մյուս ընկերների հետ, ճանապարհը դուրս չեկավ:

— Ո՞վ ե գալիս, — ձայնեց նա:

— Սաղաղ չեչեն, — խոսեց նա, վոր ավելի ցածր եր: Դա Բաթման եր: — Հրացան չոք, թուր չոք, — ասաց նա՛ իր վրա ցուց տալով: — Իշխանին են ուզում տեսնել:

Նա, վոր ավելի բարձր եր, լուռ կանգնած եր ընկերոջ կողքին: Նա ել գենք չուներ:

Ուրեմն լրտես ե, — գնդապետի մտտ և գնում, բացատրեց Պանովը՝ ընկերներին:

— Իշխան Վորոնցովը խիստ հարկավոր ե, մեծ գործ կա, — ասաց Բաթման:

— Լավ, լավ, կտանենք, — ասաց Պանովը: — Դե դու տար Բոնդարենկոյին հետ, — գրմեց նա Ավդեյկին, — և չերք կհանձնես որադահին, կրկին չեկ: Տես հո, — ասաց Պանովը, — դուռ, ասն, թող առջևիցդ գնան:

— Իսկ է՛ս ինչ ե, — ասաց Ավդեյկեր և սվինավոր հրացանն աչնպես շարժեց, կարծես թե մեկին ծակում ե: — Մի անգամ վոր խրեմ — փուքը դուրս կգա:

— Դե վոր փուքը դուրս գա, ել ինչի՞ չե պետք, — ասաց Բոնդարենկոն:

— Դե, մարդ:

Յերք լրտեսների հետ գնացող չերկու գինվորների քայլերը լռեցին, Պանովն ու նիկիտինը վերադարձան իրենց տեղը:

— Սառանան ել դրանց հենց գիշերներն ե բերում, — ասաց նիկիտինը:

— Ուրեմն հարկավոր ե, — ասաց Պանովը: — Բայց դով ե, —

ալելուացրեց նա և, կոլորած վերարկուն պարզելով, հագալ և նստեց ծառի մոտ:

Յերկու ժամից հետո Ավդեյնն ել վերադարձաւ Բոնդարենկովի հետ:

— Հը՞, հանձնեցի՞ր, — հարցրեց Պանովը:

— Հանձնեցինք: Գնդապետի մոտ դեռևս քնած չեն: Ուղղակի նրա մոտ ել տարանք: Բալց եղ կնդագլուխները լավ տղեք են, — շարունակեց Ավդեյնը: — Աստված վկա: Վոնց եր նրանց հետ խոսում:

— Դու, հաշանի չե, կխոսես, — գոչո՞՞ նկատեց Նիկիտինը:

— Ընձաբիտ, իսկը ուսաստանցինք: Մեկը ամուսնացած եւ կին, ասում եմ, բար: Բար, ասում ե: Բարանչուկ, ասում եմ, բար: Բար, շատ կա: Զուխտ: Զուխտ, ասում ե: Եղպես լավ զրկց ելինք անում: Լավ տղեք են:

— Ինչպես չե, լավ են, — ասաց Նիկիտինը, — դու նրան մեն-մենակ պատահիր, աղիքներդ կթափի:

— Յերեկ շուտով լուչսը կրացվի, — ասաց Պանովը:

— Հա, աստղերն արդեն մարում են, — ասաց Ավդեյնը նստելով: Յեւ վրնվորները նորից լսեցին:

Զորանոցների և զինվորների տնակների պատուհանները վաղուց արդեն մութն էլին, իսկ բերդի լավագուցն անբեց մեկի պատուհանները դեռևս լուսավորված էլին: Այդ տանը ապրում էր Կուրինչան գնդի հրամանատարը, գլխավոր հրամանատարի վորդին, Ֆլիզել-ադյուտանտ իշխան Սեմյոն Միխայլովիչ Վորոնցովը: Վորոնցովը ապրում էր իր կնոջ՝ Պետերբուրգի նշանավոր գեղեցկուհի Մարիա Վասիլյենայի հետ, և Կովկասի այդ փոքրիկ բերդում ապրում էր շքեղ, ինչպես վոչվոք չերբեք չէր ապրել այդտեղ: Վորոնցովին և մանավանդ նրա կնոջն այնպես էր թվում, թե ալգտեղ նրանք վոչ միայն համեստ, այլև զրկանքներով լին կշանք են վարում, իսկ տեղական բնակիչներին այդ կշանքը գարմացնում էր իր արտակարգ շքեղութամբ:

Այժմ, գիշերվա տասն և չերկու ժամին, ամբողջապես մի գորդով ծածկված, վաչր ձգած ծանր վարադուլներով մեծ հուրասրահում՝ չորս մոմով լուսավորված թղթախաղի սեղանի շուրջը տանտերերը հյուրերի հետ նստած թուզթ էլին խաղում: Խաղացողներից մեկը ինքը տանտերն էր՝ չերկալն չերեսով, շիկահեք

գնդապետ Վորոնցովը՝ Ֆլիզել-ադյուտանտի վենգելներով ու աքսեղանատով. նրա խաղակիցը Պետերբուրգի համալսարանի կանգնողու էր, մի մաղմաղոտ, մուսլ տեսքով չերտասարդ, վորին իշխանուհի Վորոնցովան նոր էր հրավիրել վորպես ուսուցիչ առաջին մարտուց ունեցած փոքր վորդու համար: Նրանց դեմը խաղում էլին չերկու սպաներ, մեկը լալն դեմքով, կարմրերես, գվարդիալից փոխադրված վաշտի հրամանատար Պոլտորացկին, և շատ ձիգ նստած, գեղեցիկ դեմքի սառն արտահայտութամբ — գնդի ադյուտանտը: Ինքն իշխանուհի Մարիա Վասիլյենան, վոր մի խոշոր, մեծ-մեծ աչքերով, մրահոն գեղեցկուհի չեր, Պոլտորացկու կողքին նստած, նրա թղթախաղին էր նաչում, և նրա կրկնովինը Պոլտորացկու վոտներին էր դիպչում: Նրա թեխոքերում, թե հաչացքներում, թե ժպտի ու մարմնի բոլոր շարժումների մեջ և թե նրանից բուրոզ անուշահոտութամբ մեջ կար մի բան, վոր Պոլտորացկուն մոռացնել էր տալիս ամեն ինչ, բացի նրա մերձավորութամբ գիտակցութունից, և նա սխալն անում էր սխալի չետեից, ալելի ու ալելի դաչրացնելով իր խաղընկերոջ:

1002
6217

— Չե, այդ անկարելի չե: Դարձալ տուզը վեր չեկալ, — ասաց ադյուտանտը բոլորովին կարմրած, չերը Պոլտորացկին տուզը գցեց ցած:

Պոլտորացկին, կարծես քնից նոր վարթներով, չհասկանալով, իր բարի, լալնաղիր սե աչքերով գոչո՞՞ ադյուտանտին էր նաչում:

— Դե, ներեցեք նրան, — ժպտալով ասաց Մարիա Վասիլյենան: — Տեսում եք, չես ձեզ ասում էլի, — դիմեց նա Պոլտորացկուն:

— Դուք ամենեին այդ չեյիք ասում, — ժպտալով ասաց Պոլտորացկին:

— Միթե այդ չասացի, — պատասխանեց իշխանուհին և նուչնպես ժպտաց: Յեւ այդ ժպտապատասխանը աչնչափ սաստիկ հուզեց և ուրախացրեց Պոլտորացկուն, վոր նա շառապուհեց և, խաղաթղթերը վերցնելով, սկսեց խառնել:

— Խառնողը դու չես, — խստութամբ ասաց ադյուտանտը և սկսեց իր ձերմակ, մատանիով դարգարված ձեռով աչնպես բաժանել թղթերը, կարծես թե ուզում էր, վորքան կարելի էր, շուտ աղատվել նրանցից:

Հյուրասրահ մտավ իշխանի սենեկապանը և գեկուցեց, թե որապահը իշխանին պահանջում է:

— Ներեցեք, պարոններ, — ասաց իշխանը անպիտակապատուգանութամբ ուսերեն խոսելով: — Դու իմ սեղը կնստես, Marie:

— Համաձայն եք,—հարցրեց իշխանուհին, արազ ու թեթիկ
կանդնելով իր ամբողջ բարձր հասակով, մեծաքանակ զգեստը խըշ-
խըշացնելով և ժպտալով բախտավոր կնոջ իր փայլուն ժպտով:

— Յես միշտ ամեն բանի պատրաստ եմ,—ասաց աղջուտանու-
տը, շատ գոհ լինելով, վոր իր դեմ խաղալու չե աչժմ բոլորովին խա-
ղալ չկամացող իշխանուհին: Իսկ Պոլտորացիին ժպտալով ձեռքերը
տաշածեց միայն:

Ռորբերը վերջանալու վրա չեր, չերը իշխանը հյուրասրահ
վերադարձավ: Նա ներս մտավ առանձնապես հուզված և ուրախ:

- Գիտե՞ք, չես ինչ կատաշարիկեմ ձեզ:
- Ի՞նչ:
- Շամպայն խմենք:
- Դրա համար չես միշտ պատրաստ եմ,—ասաց Պոլտոր-
ացիին:
- Վոչինչ, դա շատ ախորժելի չե,—ասաց աղջուտանուտը:
- Վասիլի՛չ, մատուցեք,—ասաց իշխանը:
- Քեզ ինչո՞ւ համար կանչեցին,—հարցրեց Մարիա Վասիլ-
լենան:

- Որպազնու եր և ելի մի մարդ:
- Ո՞վ: Ի՞նչ,—շտապ-շտապ հարցրեց Մարիա Վասիլլենան:
- Ձեմ կարող ասել,—ուսերը վեր քաշելով պատասխանեց
Վորոնցովը:

— Ձեա կարող ասել,—կրկնեց Մարիա Վասիլլենան:—Այդ
մենք կտեսնենք:

Շամպայնը բերին: Հյուրերը մի-մի բաժակ խմեցին և, խա-
ղը վերջացնելուց ու հաշիվները տեսնելուց հետո, սկսեցին հրա-
ժեշտ տալ:

- Ձեր վաշտն ե նշանակված վաղը անտառ գնալու,—հար-
ցրեց իշխանը Պոլտորացիուն:
- Ի՞մը: Ի՞նչ ե վոր:
- Ուրեմն վաղը ձեզ հետ կտեսնվենք,—ասաց իշխանը թե-
թիկալի ժպտալով:

— Շատ ուրախ եմ,—ասաց Պոլտորացիին, լավ չհասկանա-
լով աչն, ինչ Վորոնցովնու եր ասում նրան, ու մտածողված եր մի-
այն, թե ինչպես ե աչժմ սեղմելու Մարիա Վասիլլենայի ձեռը:

Մարիա Վասիլլենան, ինչպես և միշտ, վոչ միայն ամուր սեղ-
մեց Պոլտորացիու ձեռը, այլ և սաստիկ թավ տվեց: Յեվ մի ան-
գամ ել հիշեցնելով նրա սխալը, չերը չորս-աչքը խաղաց, նա

ժպտաց, ինչպես Պոլտորացիուն թվաց, հիանալի, սիրալիբ ու
նշանակալից ժպտով:

Պոլտորացիին տուն եր գնում աչնպիսի գմալված տրամա-
դրութլամը, վորը կարող են հասկանալ միայն աչն մարդիկ, վո-
րոնք նրա պես բարձր շրջանում են մեծացել ու դաստիարակվել,
չերը նրանք՝ միքանի ալիս առանձնացած զինվորական կյանք
վարելուց հետո, կրկին պատահում են իրենց նախկին շրջանի մի
կնոջ, աչն ել մի աչնպիսի կնոջ, ինչպես իշխանուհի Վորոնցո-
վան եր:

Մոտենալով աչն տնակին, ուր նա ընկերոջ հետ եր բնա-
կում, մուտքի դուռը հրեց, բայց դուռը փակ եր: Նա ծեծեց—դու-
ռը չեր բացվում: Նա շարացավ և սկսեց վռտով ու թրով փակ
դուռը ծեծել: Դռան չեան քալեր լավեցին, և Վավիլյան, Պոլտո-
րացիու անալին ճորս ծառան, դռան փակը բաց արավ:

- Ի՞նչ ես դու չեկ դուռը փակել: Տխմար:
- Միթե կարելի՞ չե, Ալեքսեյ Վլադիմիր...
- Ելի հարբած ես: Այ չես քեզ ցուցց կտամ, թե ինչպես
կարելի չե...

Պոլտորացիին ուզում եր Վավիլյանին խփել, բայց միտքը
փոխեց:

- Ե՛հ, սատանան քեզ հետ: Մոմը վառիր:
- Ես լուպելիս:

Վավիլյան արդարև խմած եր, իսկ խմել եր նրա համար, վոր
միթերապահի մոտ՝ անվանակոչութլան եր գնացել: Յերը տուն
վերադարձավ, նա մտածմունքի մեջ ընկավ, իր կյանքը հանդեր-
ձապետ Իվան Մաթվեյկիչի կյանքի հետ համեմատելով: Իվան
Մաթվեյկիչը չեկամուտներ ուներ, ամուսնացած եր և հուշս ուներ
մի տարուց հետո բոլորովին ազատվել: Իսկ Վավիլյանին չերեխա-
լութլունից տվել ելին պարոններին ծառայելու, և ա՛հա նա քա-
ռասունն անց եր, բայց չեր պատկվել և իր անկարգ պարսի մոտ:
Ռազմական կյանք եր վարում: Պարոնը լավ մարդ եր, քիչ եր
կովում,—բայց այդ ի՞նչ կյանք եր: «Ոոստացավ կովկասից վերա-
դառնալուց հետո ազատութլուն տալ,—այդ ազատութլունով չե
նր գնամ:—Շան կյանք ե», մտածում եր Վավիլյան: Յեվ նա
աչնպես քնել եր ուզում, վոր վախենալով թե մի գուցե մեկը
ներս մտնի և մի բան թոյնի, դռան փակը պեց և քնեց:

Պոլտորացիկին մտալ սենյակը, ուր նա քնում էր ընկերոջ՝ Տիխոնովի հետ միասին:

— Ի՞նչ է, տանձել տվիր,—հարցրեց նոր զարթնած Տիխոնովը:

— Ձե, մի տասնուչորս ուսրլի տարա, և մի շիշ էլ կլիկո խմեցինք:

— Յեվ Մարիա Վասիլենայի՞ն էլիք նաչում:

— Յեվ Մարիա Վասիլենայի՞ն էլի նաչում,—կրկնեց Պոլտորացիկին:

— Շուտով պետք կլինի վեր կենալ,—ասաց Տիխոնովը,—վեցին արդեն հարկավոր և ճանապարհ ընկնել:

— Վա՛վրա,—պոռաց Պոլտորացիկին:—Տես հա, եզուց ժամը հնգին ինձ կարգին զարթեցրու:

— Ի՞նչպես զարթեցնեմ, չերբ դուք կովում եք:

— Յես քեզ ասում եմ, վոր զարթեցնես, լսեցի՞ր:

— Լսում եմ:

Վա՛վրան գնաց, հետը տանելով կոշիկներն ու շորերը, իսկ Պոլտորացիկին անկողնում պառկեց, ժպտալով ծխախոտը վառեց և մոմը հանգցրեց: Մթնօթյան մեջ նա իր առջև տեսնում էր Մարիա Վասիլենայի ժպտուն դեմքը:

Վորոնցովների տանը իսկուհն չքնեցին: Յերբ հչուրերը գնացին, Մարիա Վասիլենան մոտեցավ մարդուն և, նրա առաջ կանգնելով, ասաց խստաթխամբ.

— Eh bien, vous allez me dir ce que c'est ? (Դե, հիմա ինձ կասեք, թե ինչու՞մն է բանը):

— Mais, ma chère... (Բայց, սիրելիս...):

— Pas de ma chère ? C'est un emissaire, n'est-ce pas ? (Սմենեի՞ն սիրելի չեմ: Դա լրտես էր, այդպես չե՞):

— Quand même je ne puis pas vous le dir. (Մինչև անգամ չեթե լրտես էլ լինեք, չես զարձյալ ասել չեմ կարող):

— Vous ne pouvez pas ? Alor c'est moi que vais vous le dir. (Ձեք կարող, ուրեմն չես ձեզ կասեմ):

— Vous ? (Դո՞ւք):

— Հաջի-Մուրադն է, հո՞, —ասաց իշխանուհին, վոր, միքանի որ էր արդեն, լսում էր Հաջի-Մուրադի հետ տարվող բանակցութիւններին մասին, ուստի կարծում էր, թե մարդու մոտ հենց ինքը Հաջի-Մուրադն է լեզիլ:

Վորոնցովը ժխտել չէր կարող, բայց կնոջը հիասթափեցրեց

նրանով, չերբ ասավ, վոր չեկողն ինքը Հաջի-Մուրադը չէր, այլ միաչն լրտերը, վոր հայտնել էր, թե եզուց Հաջի-Մուրադը կզա անտառի այն տեղը, ուր պետք է ծառեր կտրտվեն:

Բերդի միապագաղ կյանքում չերիտասարդ Վորոնցովները— մարդն էլ, կինն էլ—այս դեպքի առթիվ ուրախ էլին: Միքիչ խոսելուց հետո, թե վորքան հաճելի կլինի այդ լուրը նրա հորը, գիշերվա ժամը չերեքին մարդ ու կին պառկեցին քնելու:

IV

Այն չերեք անքուն գիշերից հետո, վոր նա անցրեց խուսափելով Շամիլի կողմից իր գեմ ուղարկված մշուրիչներից, Հաջի-Մուրադը իսկուհն եկթ քնեց, հենց վոր Սադոն նրան բարի գիշեր մաղթելուց հետո խրճիթից դուրս չեկավ: Նա քնել էր առանց հանվելու և կոթնել էր ձեռքին, վորի արմունկը ընկզմված էր տանախրոջ դրած աղվամազի կարմիր բարձերի մեջ: Նրանից վոչ հետո՝ պատի մոտ, ելզարն էր քնած: Ելզարը պառկել էր մեջքի վրա, իր ուժեղ ջահել անդամները լայն տարածած, այնպես վոր բարձր կուրծքը՝ ոպիտակ չերքեակաչի սև խողըններով, ավելի բարձր էր, քան թե նրա չես ընկած, նոր թրաշած կապուշտ գլուխը, վոր բարձից վաչը էր ընկել: Նրա ցցված և աղվամազով հագվիվ-հագ միքիչ ծածկված վերին պոռը, ինչպես չերեխաներինը, մերթ սեզմվում էր, մերթ բացվում, կարծես մի բան ուսեղիս լիներ: Նա էլ այնպես էր քնած, ինչպես Հաջի-Մուրադը, շորերով, ատրճանակը և դաշուհնը գոտկից կախած: Խրճիթի բուխարում վառվում էլին ցախերի վերջին մնացորդները, իսկ պատի միջի ճրագասեղը ազոտ լույս էր տալիս գիշերվա ճրագը:

Կես գիշերին հչուրասենյակի դուռը ճոնչաց, և Հաջի-Մուրադը իսկուհն վեր կացավ և ձեռը ատրճանակին տարավ: Ներս մտավ Սադոն, վոտները հողե հատակի վրա մեղմորեն փոխելով:

— Ի՞նչ է պետք,—հարցրեց Հաջի-Մուրադը, վոր կարծես թե բոլորովին չէր քնել:

— Մտածել է պետք,—ասաց Սադոն, Հաջի-Մուրադի առջև նստելով:—Մի կին կտրից տեսել է, թե ինչպես դու չեկել ես,—ասաց նա, և մարդուն պատմել է, իսկ այժմ ամբողջ առւն է խմանում: Ես բոպելիս հարեանի կինը չեկել է կնոջս մոտ և պատմել, թե ձեռերը մզկիթ են հալաքվել և ուզում են քեզ բռնել:

— Պետք է գնալ,—ասաց Հաջի-Մուրադը:

— Չիերը պատրաստ են,—ասաց Սաղոն և խրճիթից արագ դուրս լեկավ:

— Ելլանք,—չնչաց Հաջի-Մուրադը, և ելլարը իր անունը և վոր գլխավորն և, իր մուրշիդի ձայնը լսելով, վեր թռավ, իր ուժեղ վտանների վրա կանգնեց և փափախը գրասեց: Հաջի-Մուրադը գենքերը կախեց և չափնջին վրան ձգեց: Նույնը ելլարն արավ, և լերկուսն էլ անխոտ խրճիթից դուրս լեկան ծածքի տակը: Սեաչա տղան ձիերը մոտ բերեց: Փողոցի գետնին դիպչող ձիու սըմբակներին ձայնից հարեանի տան դռնից մեկի գլուխը դուրս ցցվեց, և, փայտե քոշերը չըխկացնելով, մի ինչ-վոր մարդ սարնիվեր գեպի մզկիթը վազեց:

Լուսին չկար, սև լերկնքում միայն աստղերն էլին պայծաս փայլում, և խավարի մեջ նկատելի էին խրճիթների կտուրները զծագրութունները և ամենից ավելի աուլի վերի մասում գտնվող մզկիթի շենքը՝ իր մինարեթով: Մզկիթից խուլ ձայներ էլին գալիս:

Հաջի-Մուրադը՝ շտապով հրացանը բռնելով, վտար նեղ ասպանդակը կոխեց և, առանց ձայն հանելու, մարմինը աննշմարելի կերպով ձիու վրա ձգելով, նստեց թամքի բարձի վրա:

— Քող աստված վարձատրի ձեզ,—ասաց նա՝ գլխիցով տանտիրոջը և աջ վտար սովորական շարժումով մյուս ասպանդակը փնտռելով, ապա ձին բռնող սղալին մարակով հրեց զգուշութլամբ, վոր նա լեռ քաշվի: Տղան լեռ քաշվեց, և ձին, կարծես թե ինքն իմանալով, թե ինչ պիտի անի, աշխուժ քաշելով նեղ փողոցից դեպի գլխավոր ճանապարհը շարժվեց: Ելլարը գնում էր նրա լեռեից, Սաղոն՝ մուշտակը հագին, ձեռքերն արագ-արագ շարժելով, գրեթե վազում էր նրանց լեռեից, անցնելով նեղ փողոցի մերթ մի, մերթ մյուս կողմը: Ծանապարհը դուրս գալու տեղում մի սովեր լերեաց, ապա մի ուրիշը:

— Կանգնիր, թվ և գնում: Կանգնիր, — աղաղակեց մի ձայն, և միքանի հոգի ճանապարհը կտրեցին:

Կանգ ասնելու փոխարեն՝ Հաջի-Մուրադը գոտիից տարձանակը դուրս քաշեց և ձին ուղղակի ճանապարհը կտրող մարդկանց վրա քշեց: Ծանապարհին կանգնած մարդիկ ցրվեցին, և Հաջի-Մուրադը, էլ լեռ չնայելով, ձին արագ քշեց ճանապարհով դեպի ցած: Նրա լեռեից ելլարն էր արշավասուչը գնում: Նրանց լեռեից լերկու արաքոց լավեց, լերկու գնդակ սուլեց, վոր վոշ նրան կպավ, վոշ էլ ելլարին: Նույն ընթացքով Հաջի-Մուրադը շարունակեա

լի ճանապարհը: Յերեք հարյուր քալ անցնելուց հետո թեթևակի հեացող ձիուն կանգնեցրեց նա և սկսեց ականջ դնել: Առջևում, ցածը, ազմկում էր արագասահ ջուրը: Յետևում՝ աուլում՝ իրար ձայնակցելով կանչում էին արագադները: Այս ձայների միջից մոտեցող ձիերի տրոփուն լավեց և Հաջի-Մուրադի քամակին—խոսակցութուն: Հաջի-Մուրադը ձին քշեց և նույն հավասար ընթացքով առաջ գնաց:

Յետևից լեկողները արշավելով էլին գալիս և շուտով հասան Հաջի-Մուրադին: Քսան ձիավորներ էլին: Նրանք աուլի բնակիչներն էլին, վորոնք վճռել էին Հաջի-Մուրադին բռնել կամ գոնե, Շամիլի առաջ իրենց արգարացնելու համար, ցույց տալ, թե ուզում են նրան բռնել: Յերը նրանք այնքան մոտեցան, վոր խավարում լերկում էլին, Հաջի-Մուրադը կանգ առավ, սանձը թողեց և, ձախ ձեռի սովորական շարժումով հրացանի պատանը բանալով, աջով հանեց այն: Միևնույնը ելլարն արավ:

— Ի՞նչ էք ուզում,— գոտաց Հաջի-Մուրադը:— Բռնել էք ուզում: Դեհ, բռնեցեք:

Յեզ նա հրացանը բարձրացրեց:

Աուլի բնակիչները կանգ առան: Հաջի-Մուրադը՝ հրացանը ձեռքին բռնած, սկսեց իջնել ձորը: Ձիավորները առանց մոտենալու նրան, հետևում էին նրան: Յերը Հաջի-Մուրադը ձորի մյուս կողմն անցավ, նրա լեռեից գնացող ձիավորները ձայն տվին, վոր նա լսի, թե ինչ են ուզում ասել նրան: Վորպես պատասխան դրան՝ Հաջի-Մուրադը հրացանը արձակեց և ձիու գլուխը բաց թողեց: Յերը նա ձին կանգնեցրեց, հետամուտ լեկողների ձայներն էլ չեխին լսում. չէր լսում և աքլորների կանչը, բաց ավելի պարզ լսելի լեր անտառում ջրի խոխոջը և բվեճի վողը: Անտառի սև պատը բոլորովին մոտ էր: Դա այն լսկ անտառն էր, ուր նրա մուրիդները նրան էլին սղասում: Յերը Հաջի-Մուրադը անտառին մոտեցավ, կանգ առավ և, թոքերի մեջ շատ ող ձձկնով, սուլեց, ապա լուռ ականջ դրեց: Մի բոպիլից հետո մի համանման սուլոց լավեց անտառից: Հաջի-Մուրադը ճանապարհից ծավեց և անտառը գնաց: Հարյուր քալ անցնելուց հետո ձառերի բների արանքից Հաջի-Մուրադը տեսավ մի խարուկ, խարուկի մոտ նստոտած մարդկանց սովերները և մի թամքած, վտանները բխոված ձի, վոր կիսով չափ լուսավորված էր կրակի լուսով: Խարուկի շուրջը նստած էին չորս մարդ:

Կրակի մոտ նստած մարդկանցից մեկը շտապ վերկացավ և

Հաջի-Մուրադին մոտենալով, նրա ձիու սանձն ու ասպանդակը բռնեց: Դա Հաջի-Մուրադի անվանյալ չեղրայրն էր, նրա սնտե-սութուենը վարողը:

— Կրակը հանգցրեք, — ասաց Հաջի-Մուրադը՝ ձիուց իջնելով: Մարդիկը սկսեցին կրակը դեռ ու դեն ցրել և այլովոզ ցա-խերը տրորել:

— Բաթան չեղե՛լ և այտեղ, — հարցրեց Հաջի-Մուրադը փռած լափնջուն մոտենալով:

— Յեղավ, Խան-Մահոմալի հետ վաղուց են գնացել:

— Վճր ճանապարհով գնացին:

— Այս, — պատասխանեց Խաննեֆին, Հաջի-Մուրադի չեկած ճանապարհի հակառակ կողմը ցույց տալով:

— Լավ, — ասաց Հաջի-Մուրադը և, հրացանը հանելով, սկսեց ցնել: — Պետք է դուռ լինել, լեռերիցս ընկել ելին, — ասաց Հաջի-Մուրադը, գիմելով կրակը հանգցնողին:

Դա չեչեն Համգալսն էր: Համգալսն լափնջուն մոտեցավ, նրա վրա ընկած՝ պատչանի մեջ գրած հրացանը վերցրեց և լուսւ մունջ գնաց բացուտի ծայրը, այնտեղ, վորտեղից Հաջի-Մու-րադը չեկավ: Ելլարը, վոր ձիուց իջել էր, առավ Հաջի-Մուրադի ձին և, չերկուսի զլուխը վեր քաշելով, ծառերից կապեց, հետո Համգալսի պես հրացանը ուտին դրած՝ կանգնեց բացուտի մյուս ծայրին: Կրակն արդեն հանգցրած էր, և այժմ անտառը այնպես սևաթուր չեր չերևում, ինչպես առաջ, և չերկնքում թեպետ և ա-զոտ, բայց աստղերը պլպլում ելին:

Հաջի-Մուրադը՝ աստղերին, Բագումքին նայելով, վոր ար-դեն չերկնքի կեսին էր հասել, հաշվեց, վոր կեսգիշերից շատ է անցել, և վոր վաղուց արդեն ժամանակ էր գիշերվա աղոթքն անելու: Խաննեֆիից նա ջրաման ուզեց, վոր խուրջինում միշտ ի-րենց հետ տանում ելին, և, լափնջին վրան ձգելով, ջրի մոտ գնաց:

Կոշիկները հանելուց և լվացումն անելուց հետո Հաջի-Մու-րադը վոտարորիկ կանգնեց լափնջու վրա, հետո չոքեց, առաջ մատները սկանջների մեջ խրեց, աչքերը փակեց և ապա՝ դեպի արևելք դառնալով, սովորական աղոթքն ասաց:

Յերբ աղոթքը վերջացրեց, նա իր տեղը վերադարձավ, ուր խուրջինն էր, և, լափնջու վրա նստելով, ձեռքերը ծնկներին կռթնեց և, գլուխը կախ արած, մտածմունքի մեջ ընկավ:

Հաջի-Մուրադը միշտ հավատում էր իր բախտին: Մի վորեն

գործի ձեռնամուխ լինելիս հաջողութան կողմից նա կանխատես հաստատ համոզված էր լինում, — և ամեն բան ժպտում էր նրան: Բացի հազվագիպ բացատութուեններից աչգպես էր նրա ամբողջ փոթորկալից պատերազմական կյանքը: Այգպես էլ, նա հույս ու-նեք, վոր այժմ կլինի: Նա չերևակայում էր, թե ինչպես այն գոր-քի հետ, վոր նրան Վորոնցովը կտա, Շամիլի վրա կգնա, նրան դերի կտանի ու նրանից վրեժխնդիր կլինի, և ինչպես սուսաց թա-գավորը նրան պատիվ կտա, և նա վերստին կհառավարի վոչ մի-այն Ավարիան, այլև համայն Չեչեն, վոր կհնազանդի իրեն: Այս մտածմունքների ժամանակ նա ինքն էլ չհկատեց, թե ինչ-պես քնեց:

Յերազում նա տեսավ, թե ինչպես իր կտրիճների հետ, չեր-գեր ասելով և «Հաջի-Մուրադը գալիս է» պոռալով, Շամիլի վրա լի սլանում և նրան կանանց հետ միասին բռնում. ու լավում է, թե ինչպես նրա կանայքը լալիս են ու կոծում: Նա արթնացավ: «Լախլաս» չերգը և «Հաջի-Մուրադը գալիս է» դոչուենները և Շամիլի կանանց լացն ու կոծը՝ շնագայլերի կաղկանձուենը, լացն ու քրքիջն ելին, վոր նրան զարթեցրին: Հաջի-Մուրադը գլուխը բարձրացրեց, ծառերի ընթրի միջից արևելքում արդեն լուսացող չերկնքին նայեց և նրանից հետո նստած մյուրիդից Խան-Մահոմալի մասին հարցրեց: Յերբ խմացավ, վոր Խան-Մահոման գեռես չի վերադարձել, Հաջի-Մուրադը գլուխը կախեց և խոկուչն նիրհեց նորից:

Նրան զարթեցրեց Խան-Մահոմալի ուրախ ձայնը, վոր Բա-թալի հետ դեսպանութունից վերադարձել էր: Խան-Մահոման խոկուչն նստավ Հաջի-Մուրադի կողքին և սկսեց պատմել, թե ինչպես ղինվորներ պատահեցին նրանց և իրեն իշխանի մոտ տարան, ինչպես է նա խոսել իրեն՝ իշխանի հետ, ինչպես իշխանը ուրախացել է և խոստացել նրանց հանդիպել այնտեղ, ուր ուս-նեքը անտառ պիտի կտրեն: Շալի բացուտում, Միշիկից դենը: Բաթան ընդհատում էր իր ընկերակցի խոսակցութունը և ման-րամասնութուններ ավելացնում:

Հաջի-Մուրադը մանրամասն հարցուփորձ արավ, թե Վո-րոնցովը հատուկ ինչ խոսքերով պատասխանեց Հաջի-Մուրադի առաջարկութան՝ ուսաների կողմն անցնելու առթիվ: Թե Խան-Մահոման և թե Բաթան միարեքան ասացին, թե իշխանը խոս-տացավ Հաջի-Մուրադին վորպես հյուրի ընդունել և այնպես անել, վոր նրա համար լավ լինի: Հաջի-Մուրադը մեկ էլ ճանա-

պարհի մասին հարցրեց, և իբրև Սան-Մահոման հավատացրեց նրան, թե ճանապարհը լավ և իմանում և ուղղակի աչնտեղ կըտանի, Հաջի-Մուբարդ փողը հանեց և խոստացած չերեք սուրբին Բաթալին տվեց, իր մարդկանց ևլ հրամայեց, վոր խուրջինից հանեն իրա վոսկեքանդակ գենքերը և սպարոշալոր փափախը, իսկ իրենց մլուրիդներին կարողաղբեց մաքրվեն, վոր լավ տեսքով գնան ուսանելի մոտ: Մինչ գենքերը, թամբերը, ձիու հարքերը և ձիերը սրբում-մաքրում ելին, աստղերը մարեցին, բուրբոլին լուսացավ, և առավոտան գով քամին փչեց:

V

Առավոտան կանուխ, չերը գեռես մութն եր, Պոլսորացկու հրամանատարութեամբ չերկու վաշտ՝ կացիններ վերցրած, ճանապարհ ընկան տասը վերստ Շահգիրելի գոնից աչն կողմ և, հրացանաձիգների շղթան ցրվելուց հետո, հենց վոր լուսացավ, սկսեցին անասու կտրակել: Ժամը ութին մոտ մեղը, վոր միախառնվել եր խարուչներում ալրվող թշշան ու ճարձատող թաց ճլուզների հոտովեա ծխին, սկսեց վեր բարձրանալ, և ծառեր կտրուտողները, վարոնք առաջ հինգ քալի վրա միմյանց չելին տեսնում, ալլ լսում ելին իրար, սկսեցին տեսնել թե խարուչները և թե անասուից անցնող, կտրած-թափված ծառերով ծածկված ճանապարհը: Մասախուղի մեջ արեգակը չերբեմն չերեում եր վորպես մի լուսավոր բիծ, չերբեմն ևլ թագնվում եր նորից: Ճանապարհից մի փոքր հետո՝ բացուտում թմբուկների վրա նստած ելին— Պոլսորացկին իր սուբարտերն-սպա Տիխանովի հետ, չերկու սպա չերբորդ վաշտից և մի նախկին կավարիբարդ, վոր մենամարտութեան պատճառով աստիճանից զրկվել եր, Պոլսորացկու ընկերը պաժերի կորսուտից— բարոն Յրեգեն: Թմբուկների շուրջը թափված ելին աղուտաների թղթեր, ծխախոտի մնացորդներ և գատարկ շշեր: Սպաններն ողի ելին խմել, աղուտ արել և այժմ պոսեք ելին խմում: Թմբկահարը չերբորդ շիշն եր բաց անում: Չնախելով վոր Պոլսորացկին քիչ եր քնել, նա հոգեկան կարողութունների լարման և բարի, անհոգ ուրախութեան աչն առանձին տրամադրութեան մեջ եր, վոր նա միշտ զրուսմ եր իր զինվորներին և ընկերներին շրջանում՝ աչնտեղ, ուր վասնդ կարող եր լինել:

Սպաների միջև աշխուժ խոսակցութուն եր վերջին նորութեան— գեներալ Սիկստովի մահվան մասին: Վոչվոր ալլ մահ-

վան մեջ չեր տեսնում կլանքի աչն կարևորագուցն վարկլանը, չերը նա վերջանում և և աչն աղբուրին վերադառնում, վորից չեկել եր, ալլ միաչն տեսնվում եր արիութլուսը մի քաջ սպայի: Վոր թուրը ձեռքին հարձակվել և լեռնականներին վրա և անխնա կոտորել նրանց:

Թեպետ ամենքը, մանավանդ ուղմական գործողութունների մասնակցած սպաները զխակչին և կարող ելին գիտենալ, վոր աչն ժամանակ կովկասում պատերազմելիս, և առհասարակ չերբեք և վոչ մի տեղ սուսերամարտի ժամանակ տեղի չի ունենում թրերով կոտորած, վոր միշտ լենթաղբում են ու նկարագրում, իսկ չեթե թրով և սլիններով մի ալլպիսի կոտորած տեղի չել ունենում և, սովորաբար միշտ կոտորում ու ծակծկում են միաչն վախճողներին,— սուսերամարտի աչն կեղծիքը սպաները ընդունում ելին, և դա աչն հանգիստ հպարտութունն ու բերկրանքն եր պատճառում նրանց, վորով վոմանք կորիճներ, մլուսները, ընդհակառակը, ամենհամեստ զիրքով թմբուկների վրա նստած՝ ծխում ելին, խմում և կատակնեա անում, չմտածելով մահվան մասին, վոր ինչպես Սիկստովին, ամեն մի ըոպե նրանցից լուրաքանչուրին կարող եր վրա հասնել: Յեվ իրոք, կարծես թե ի հաստատութուն նրանց սպասումի՝ խոսակցութեան կեսին ճանապարհի ձախ կողմում հրացանի մի խրախուսիչ, զեղեցիկ, սուր ճալթման ձաչն լավեց, և գնդակը՝ ուրախ սուլելով, թոսով մշուշապատ ողի միջով և ծախն զիստով: Զինվորների հրացանների միքանի ծանր և զիլ կրակոցները պատասխանեցին թշնամու կրակոցին:

— Եհե, — ուրախ ձաչնով գոչեց Պոլսորացկին, — ալլ հո գորաշղթալի մեջ եր: Դեհ, չեղբայր կոստա, — զիմեց նա Յրեգելին — բախաղ և: Վաշտից մոտ գնա: Ալլ բոպելիս ամենք աչնպիսի կոխվ սարքենք, վոր քեֆդ գա: Երկալացուսն ևլ կոտանք:

Աստիճանազուրկ բարոնը վեր կացավ ու արաղ քալիբով գնաց ծխի կողմը, ուր նրա վաշտն եր: Պոլսորացկու համար բերին նրա կարարպական փոքրիկ թուխ-աչքեր ձին, նա հեծավ և, վաշտը շարք-շարք կանդեցնելուց հետո, տարավ դորաշղթալի մոտ՝ զեպի հրացանածգութեան կողմը: Զորաշղթան կանգնած եր անտառի ծալրին՝ զստիվալը չերկ ձորակի մոտ: Քամին զեպի անտառի կողմն եր փչում, և վոչ միաչն ձորակի զառիվալը, ալլ և մլուս կողմն ևլ պարզ չերեում եր:

Յերը Պոլսորացկին գորաշղթալին մոտեցավ, մասախուղի

միջից արեգակը լերեաց, և ձորակի մշուս կողմում, օշնտեղ սկըս-
 վող մանրածառ անտառի մոտ, հարլուր սամենաչափ հետու, մի
 քանի ձիավորներ լերեացին: Դրանք աչն չհչեններն ելին, վո-
 րոնք Հաջի-Մուրադի լեռից ելին ընկել և ուղում ելին նրա
 սուսնների մոտ գնալը տեսնել: Նրանցից մեկը գորաշղթալի վրա հրա-
 ցան արձակեց: Զորաշղթալից միքանի զինվոր պատասխանեցին
 նրանց: Չհչենները լեռ գնացին, և հրաձանսածգուլունը գաղա-
 քեց, բայց չերը Պոլտորացիին իր վաշտով մոտեցավ, նա հրա-
 մալեց, վոր կրակեն, և հենց վոր հրամանը արվեց, ամբողջ զո-
 րաշղթալում գծով հրացանների անընդհատ, ուրախ և խրախու-
 սիչ արաքորաքոյներ լավեցին, վորոնց ուղեկցում ելին գեղեցի-
 կորեն սփռվող ձիի վորքրիկ քուլաները: Զինվորները, այդ զվար-
 ձուլունից ուրախացած, շտապ-շտապ լցնում ելին հրացանները
 և իրար լեռից կրակում: Չհչենները, հավանորեն, գրգիռ զգա-
 ցին և առաջ գալով իրար լեռից միքանի անգամ կրակեցին
 զինվորների վրա:

Նրանց կրակոցից մի զինվոր վերափորվեց: Այդ զինվորը
 աչն իսկ Ավդեկեն եր, վոր գաղանապահակումն եր: Յերը ընկեր-
 աները նրան մոտեցան, վորի վրա պատկած, լերիւ ձեռքով
 բռնել եր փորի վերքը և, հավասարաչափ որորվելով, կամաց տըն-
 քում եր:

— Նոր ելի սկսել հրացանս լցնել, մեկ ել տեսնեմ՝ չբխկաց,—
 ասաց նրա կողքին լեղած զինվորը: Մեկ ել տեսնեմ՝ նա
 հրացանը ձեռքից բաց և թողել:

Ավդեկը Պոլտորացիու վաշտիցն եր: Խմբված զինվորներին
 տեսնելով՝ Պոլտորացիին մոտեցավ նրանց:

— Ի՞նչ ե, ադա, զխոլե՞լ ե, — ասաց նա: — Վճրահող:

Ավդեկը չեր պատասխանում:

— Նոր միաչն հրացանս լցնել ելի սկսել, ձեռք ազնվու-
 թլուն, — խոսեց Ավդեկին հեռ լեղած զինվորը, — լսում եմ՝ չբխկոց,
 նալում եմ — սա հրացանը վեր գցեց:

— Տը՛տը՛, — լեղուն չպղացրեց Պոլտորացիին: — Ի՞նչ ե, Ավ-
 դեկ, ցավո՞ւմ ե:

— Չի ցավում, ման գալ չի թողնում: Միքիչ սղի, ձեռք
 ազնվութլուն:

Աչն սղուց, աչինքն սպիրաից, վոր զինվորները կովկասում
 խմում ելին, ճարվեց, և Պանովը, հոնքերը կխակով, սպիրտը Ավ-
 դեկին մոտեցրեց: Ավդեկն սկսեց խմել, բայց խակուն ձեռով լեռ
 հրեց:

— Սիրոս չի վերցնում, — ասաց նա, — ինքդ խմիր:

Պանովը մնացածը խմեց: Ավդեկը նորից փորձեց վեր կենալ
 և կրկին ընկավ: Մի վերարկու փեղեկն ու Ավդեկին վրան դրին

— Ձերդ ազնվութլուն, գնդապետը գալիս ե, — ասաց ֆելդ-
 ֆերելը Պոլտորացիուն:

— Ե՛հ, լավ, դու կարգադրելը, — ասաց Պոլտորացիին և,
 մարակը քաշելով, արշավասուլը սլացավ Վորոնցովին գիմավո-
 րելու:

Վորոնցովը հեծել եր իր զուտ անգլխական, զտարլուն աշ-
 խետ ձին. նրան ուղեկցում ելին զնդի աղյուտանտը, մի կազակ
 և մի չհչեն-թարգման:

— Ի՞նչ ե պատահել, — հարցրեց նա Պոլտորացիուց:

— Մի խումբ ե հայտնվել և գորաշղթալի վրա հարձակվել, —
 պատասխանեց Պոլտորացիին:

— Դե, գե, այդ բոլորը ձեր սարքած բաներն են:

— Յես չեմ արել, իշխան, — ժպտալով ասաց Պոլտորացիին, —
 նրանք են լեկել՝ սկսել:

— Լսեցի, վոր զինվճր են վերափորել:

— Այո, շատ ափսոս: Լավ զինվոր ե:

— Ծանր են վերափորել:

— Կարծեմ ծանր ե, — փորն ե:

— Իսկ լեռ, զիտե՞ք, ուր եմ գնում, — հարցրեց Վորոնցովը:

— Չգիտեմ:

— Մի՞թե գլխի չեք ընկնում:

— Վոչ:

— Հաջի-Մուրադը դուրս ե լեկել և ալժմ իսկ կգիմավորի
 մեզ:

— Չի կարող պատահել:

— Յերեկ նրա կողմից լրարեր եր լեկել, — ասաց Վորոնցո-
 վը, հաղիվ գսպելով ուրախութլան ժպիտը: — Ալժմ նա ինձ սպասե-
 լու չե Ծալի բացուտում, ուրեմն դուք գորաշղթան ցրեցեք մինչև
 բացուտը և ապա ինձ մոտ լեկեք:

— Լսում եմ, — ասաց Պոլտորացիին ձեռքը վափախի մոտ
 գնելով ու վաշտի մոտ գնաց: Ինքը գորաշղթան տարավ աջ կող-
 մը, իսկ ձախ կողմը աչք նույնը անելու համար հրամայեց ֆելդ-
 ֆերելին: Այդ միջոցին վերափորված Ավդեկին զինվորները բերդը
 տարան:

Պոլտորացիին արդեն Վորոնցովի մոտ եր վերադառնում

չերբ տեսավ, վոր քտակից ձիավորներ են ուղում հասնել իրան: Եւ կանգ առավ և սպասեց նրանց:

— Գրբիբ. ծնվել եմ Յերմեսում. դա մի փոքրիկ առւ և, ինչպես մեզ մոտ ասում են, մի իշի գլխի չափ,—սկսեց նա:—Մեղանից վոչ հեռու՝ չերկու գնդակի տարածության վրա, Սոունգախն ե, ուր խաներն ելին բնակվում: Յեվ մեր ընտանիքը նրանց հետ մոտ եր: Մայրս, չերբ մեծ չեղրորս՝ Ոսմանին, ծնել ե, խանի մեծ վորդուն՝ Աբունունցալ-խանին և կերակրել, հետո մյուսին՝ Ուսմա-խանին և ծիծ ավել և սնուցել, իսկ իմ չերկրորդ չեղրայրս՝ Ահմեդը մեռել ե: Յեվ աչն ժամանակ, չերբ մայրս ծնել ե ինձ, խանի կինն ել Բուրաչ-խանին և ծնել: Մայրս չի կամեցել գնալ ծծմայր լինել: Հայրս հրամայել ե, բայց մայրս չի ուզեցել. նա տսել ե. «Ելի իմս սովամահ կլինի—չեմ գնալ»: Աչն ժամանակ հայրս,—նա տաք մարդ եր,—դաշուչնով խփել ե և կսպառեք, չեթե մորս նրա ձեռից չխլելին: Այդպես ել նա ինձ չի տալիս և հետո ինքը մի չերդ եր կապել դրա մասին:—Բայց այդ հարկավոր ե արդյոք պատմել:

— Չե, հարկավոր ե, պատմիր բոլորը,—ասաց Լորիս-Մելիքովը:

Հաջի-Մուրադը մտածմունքի մեջ ընկավ: Նա հիշեց մորը, չերբ նա իրեն պառկեցնում եր կտրանը՝ մուշտակի տակ, իր կողքին քնելու, ու նա մորից խնդրում եր ցուց տալ կողքի աչն տեղը, ուր մնացել եր հոր հասցրած վերքի հետքը:

— Այո: Այդպես մայրս չի գնացել ծծմայր լինելու,—ասաց նա՝ գլուխը թափ տալով,—խանի կինը ուրիշին և վերցրել, բայց և աչնպես նա մորս սիրում եր: Յերեք խան կար. Աբունունցալ-խան՝ իմ Ոսման չեղրորս կաթնեղրայրը, Ուսմա-խան՝ իմ անվանյալ չեղրայրը, և Բուրաչ-խան, կրտսերը, նա, վորին Շամիլը անդունդը գլորեց: Սակայն դրա մասին հետո: Տասնհինգ տարեկան ելի չես, չերբ առններում մյուսրիգներ սկսեցին շրջել: Փայտե թրերը քարերին ելին խփում և ազալակում. «Մուսուլման»

ներ, խաղալաթ» * : Բոլոր չեչենները մշուրիզների կողմն անցան, ալարացիներն ել սկսեցին անցնել նրանց կողմը: Այդ ժամանակ չես պալատումն ելի ապրում: Կարծես խանի չեղբայրը լինելի: Ինչ վոր կամենում ելի, աչն ել անում ելի, և հարստացա: Յես ձիեր ել ունելի, զենքեր ել, և փող ել կար: Ապրում ելի իմ հաճուքին և վոչ մի բանի վրա չեի մտածում: Աչպես չես ապրեցի մինչև աչն ժամանակը, չերը Դազի-Մոլլալին սպանեցին, և նրա տեղը Համզաթը բռնեց: Համզաթը պատգամավորներ ուղարկեց խաներին ասելու, վոր, չեթև նրանք խաղալաթը չընդունեն, Խունդալը քարուքանդ կանի: Աչս մասին արգեն մտածել եր հարկավոր: Խաները առաներից վախենում ելին, վախենում ելին խաղալաթը ընդունել, և խանի կինը ինձ իր չերկրորդ վորդու՝ Ումմախանի հետ Թիֆլիս ուղարկեց՝ ուսաց գլխավոր կառավարչից սպնութլուն խնդրելու Համզաթի դեմ: Կառավարչատեղը Ռոզենն եր, բարոնը: Նա վոչ ինձ ընդունեց, վոչ ել Ումմախանին: Հրամայեց ասել, թե կոզնի, բայց վոչինչ չարավ: Միաչն նրա սպաները գալիս ելին մեզ մոտ և Ումմախանի հետ թուզթ խաղում: Նրանք նրան զինի ելին խմեցնում և վատ տեղեր տանում, և նա բոլորը, ինչ վոր ուներ, նրանց տանուլ ալեց: Մարմնով Ումմախանը ուժեղ եր, ինչպես չեզ, և քաջ, ինչպես առուձ, իսկ հոգով թույլ, ինչպես ջուր: Վերջին ձիերն ու զենքն ել տանուլ կտար, չեթև չես նրան չտանելի: Թիֆլիսից հետո մաքերս վոխվեցին, և չես սկսեցի խանի կնոջն ու շահել խաներին համոզել, վոր խաղալաթն ընդունեն:

— Ինչ՞ու մաքերդ փոխվեցին, — հարցրեց Լորիս-Մելիքովը, — սուսները դուր չեկան:

Հաջի-Մուրազը առժամանակ լռեց:

— Չե, դուր չեկան, — զրուականապես ասաց նա և աչքերը խփեց: — Յեզ ելի մի աչնոխտի գործ կար, վոր չես ցանկացա խաղալաթն ընդունել:

— Ի՞նչ գործ կար:

— Յեքմեսի մոտ չես ու խանը չերեք մշուրիզի հետ ընդհարումն ունեցանք, չերկուսը փախան, իսկ չերրորդին չես աործուտակով սպանեցի: Յերը մոտեցա նրա զենքերը վերցնելու, նա զեռ կենդանի չեր: Նա նայեց ինձ: «Դու, — ասում ե, — ինձ սպանեցիր: Ինձ համար այդ լավ ե: Բայց դու մուսուլման կա՞ և՛ սպանեցիր: Ինձ համար այդ լավ ե: Բայց դու մուսուլման կա՞ և՛ ջահել և՛ ուժեղ, ընդա՞նիք խաղալաթը: Աստված և ճբամաչում»:

* Յես հալիլաթի 5-րդ հատվածը:

— Յեզ դու ընդունեցիր:

— Չընդունեցի, բայց սկսեցի մտածել, — ասաց Հաջի-Մուրազը և շարունակեց իր պատմութլունը:

— Յերը Համզաթը Խունդալին մոտեցավ, մենք ձերերին նրա մոտ ուղարկեցինք և պատվիրեցինք ասել, թե մենք համաձայն ենք խաղալաթն ընդունելու, միաչն թե նա մի ուսումնական մարդ ուղարկի հասկացնելու, թե ինչպես պետք ե կատարել: Համզաթը հրամայեց, վոր ձերերի բեղերը թրաշին, ունեզները ծակեն, նրանց քթերից բլիթներ կախեն, և ապա չես ուղարկեց: Ծերերն ասացին, թե Համզաթը պատրաստ ե մի շելիս ուղարկել, վոր խաղալաթը մեզ սովորեցնի, միաչն մի պաշմանով, վոր խանի կինը իր փոքր վորդուն ուղարկի նրա մոտ, վորպես ամանաթ (պատանդ): Խանի կինը հավատաց և Բուլաչ-Խանին Համզաթի մոտ ուղարկեց: Բուլաչ-խանին Համզաթը լավ ընդունեց և մարդիկ ուղարկեց մեզ մոտ մեծ չեղբայրներին ել կանչելու: Նա հրամայեց ասել, թե ուզում ե խաներին աչնպես ծառայել, ինչպես իր հայրն և նրանց հորը ծառայել: Խանի կինը թույլ կլին եր, հիմար ու հանդուզն, ինչպես բոլոր կանայք, չերը նրանք իրենց կամքով են ապրում: Նա վախեցավ չերկու վորդուն ել ուղարկել և մենակ Ումմախանին ուղարկեց: Յես նրա հետ գնացի: Մշուրիզները մի վերստ առաջ ելին չեկել մեզ դիմավորելու, և չերզում ելին, և հրացան արձակում, և մեր շուրջը ջերիդ խաղում. Իսկ չերը տեղ հասանք, Համզաթը վրանից դուրս չեկավ, Ումմախանի ասպանդակին մոտեցավ և նրան ընդունեց ինչպես խանի: Նա ասաց. «Ձեր տանը չես վոչ մի վատութլուն չեմ արել և չեմ ել ուզում անել: Միաչն դուք ինձ մի սպանեք և մի խանգարեք, վոր չես մարդկանց զեպի խաղալաթ դարձնեմ, իսկ չես զորքիս հետ միասին աչնպես կծառայեմ ձեզ, ինչպես հայրս ձեր հորը: Թողեք, վոր չես ձեր տանը ապրեմ: Իմ խորհուրդներովս չես ձեզ կոզնեմ, իսկ դուք արեք՝ ինչ ուզում եք»: Ումմախանը խոսելու կողմից շատ բուժ եր: Նա չեր իմանում ինչ ասեր և լռել եր: Աչն ժամանակ չես ասացի, վոր, չեթև աչնպես ե, թող Համզաթը Խունդալի գնա. խանի կինը և խանը նրան պատով կընդունեն: Բայց չթողին, վոր խոսքս վերջացնեմ, և աչստեղ չես առաջին անգամ Շամիլի հետ ընդհարումն ունեցա: Նա չել աչնոխտ եր, իմամի կողքին: «Բեզ չեն հարցնում, այլ խանին», — ասաց նա ինձ: Յես լռեցի, իսկ Համզաթը Ումմախանին վրանը տարավ: Հետո Համզաթը ինձ կանչեց և հրամայեց, վոր իրա մարդկանց հետ Խուն-

զախ գնամ: Գնացի: Նրա մարդիկ սկսեցին խանի կնոջը համոզել, վոր մեծ վորդուն ել Համգաթի մոտ ուղարկի: Յես տեսա, վոր այստեղ դավաճանութուն կա, և խանի կնոջն ասացի, վոր վորդուն չուղարկի: Բայց կնկա գլխում այնքան խելք կա, վորքան ձիվ վրա մագ: Խանի կինը հավատաց և հրամայեց վորդուն, վոր գնա: Արունունցալ-խանը չեր ուզում: Այն ժամանակ նա ասաց. «Յերևի դու վախենում ես»:—Մեղվի պես նա գիտեր, թե խալթելու համար նրա վոր տեղն ավելի ցավ կպատճառի: Արունունցալ-խանը կրակ կտրեց, այլևս չշարունակեց խոսել նրա հետ և հրամայեց, վոր ձին թամբեն: Յես նրա հետ գնացի: Համգաթը մեզ ավելի լավ դիմավորեց, քան թե Ումմա-խանին: Յերկու գնդակի տարածութուն նա մեր առաջն եր դուրս չեկել՝ սարի տակ դիմավորելու: Նրան հետևում էին նշանակիր ձիավորներ, չերգում էին, հրացան արձակում, ջերիդ խաղում: Յերբ բանակը հասանք, Համգաթը խանին վրանը տարավ, իսկ չես մնացի ձիերի հետ: Սարի տակին էլի չես, չերբ Համգաթի վրանում սկսեցին կրակել: Յես վազեցի դեպի վրանը: Ումմա-խանը չերեսի վրա փոխած եր արջան լճի մեջ, իսկ Արունունցալ-խանը կըսում եր մյուրիդների հետ: Նրա չերեսի կեսը կտրված եր և կախ ընկած: Կտրած մասը նա մի ձեռով բռնել եր, իսկ մյուսով ամեն մի մոտեցողին կոտորում եր: Աչքիս առաջ նա Համգաթի չեղբորը կոտորեց և ուզում եր մյուսին ել, բայց այդ ժամանակ մյուրիդները գնդակահարեցին նրան, և նա ընկավ:

Հաջի-Մուրադը կանգ առավ, նրա արևառ գեմքը կաս-կարմըրեց, աչքերը արչունով լցվեցին:

- Սարսափը տիրեց ինձ, և չես փախա:
- Միթե,—ասաց Լորիս-Մելիքովը:—Յես կարծում ելի, թե դու չերբեք վոչ մի բանից չես վախեցել:
- Հետո՞ չերբեք: Դրանից հետո չես միշտ մտաբերում ելի այդ ամոթը, և չերբ մտաբերում ելի, արդեն վոչ մի բանից չելի վախենում:

XII

— Բայց այժմ բավական ե: Պետք ե աղոթել,—ասաց Հաջի-Մուրադը, չերքեակալի ծոցազրպանից հանեց Վորսնցովի բրեգետը, զգուշութամբ գսպանակը սեղմեց և, գլուխը թեքելով ու մանկական ժպիտը գսպելով, ականջ դրեց: Ժամացույցը խփեց տասներկու և մի քառորդ:

— Кунак Воронцов пешкеш (Վորսնցով բարեկամի ընծան ե),—ասաց նա ժպտալով:

— Հն, լավ ժամացույց ե,—ասաց Լորիս-Մելիքովը:—Ուրեմըն դու գնա աղոթելու, իսկ չես կսպասեմ:

— Յախշի (Լավ),—ասաց Հաջի-Մուրադը և ննջարան գնաց: Յերբ Լորիս-Մելիքովը մենակ մնաց, Հաջի-Մուրադի պատմածներից ամենազլխավորը գրեց իր հուշատետրում, հետո ծխախոտ ձխեց և սկսեց սենյակում անցուդարձ անել: Մոտենալով ննջարանին հակառակ դռան՝ Լորիս-Մելիքովը լսեց մի ինչ-վոր բանի մասին լեռանդով թուրքերեն խոսող մարդկանց ձայներ: Նա գլխի ընկավ, վոր դրանք Հաջի-Մուրադի մյուրիդներն էլին և, դուռը բանալով, ներս մտավ:

Սենյակում կանգնած եր այն առանձին, թթու, կաշվի հոտը, վոր լինում ե լեռնականների մոտ: Պատուհանի մոտ՝ հատակին փռած չափնջու վրա նստած եր շլիկի, դեղնահեր Համգալուն՝ պատըռտած, չուղոտ բեշմեթով, և սանձ եր գործում: Իր խոսքս ձայնով նա մի ինչ-վոր բան եր ասում տաք-տաք, իսկ չերբ Լորիս-Մելիքովը ներս մտավ, իսկուչն լոեց և իր գործը շարունակեց: Նրա դեմ կանգնած եր զվարթ Խան-Մահոման, սպիտակ ատամները ցցած, անարտևանունք սև աչքերը ցոլացնելով, և անընդհատ միևնույն բանն եր կրկնում: Գեղեցիկ Նլզարը՝ ուժեղ կոների թեքերը քշտած, սրբում եր մեխից կախած թամբի կապերը: Գըլ-խավոր գործ տեսնողը և տնտեսության կառավարիչը, Խանեֆին, սենյակում չեր: Նա փոհանոցում ճաշ եր պատրաստում:

— Ինչի՞ մասին էլիք վիճում,—հարցրեց Լորիս-Մելիքովը Խան-Մահոմայից, նրան բարեկրով:

— Սա հենց մի գլուխ Շամիլին և գովում,—ասաց Խան-Մահոման, ձեռը Լորիս-Մելիքովին պարզելով:—Ասում ե՞ Շամիլը մեծ մարդ ե: Համ ուսումնական ե, համ սուրբ, համ ջիգիտ:

- Ել ի՞նչպես ե նրանից հեռացել, վոր ելի նրան և գովում:
- Հեռացել ե, բայց գովում ե,—ատամները ցցելով և աչքերը ցոլացնելով ասաց Խան-Մահոման:

— Ինչ ե, դու նրան ելի՞ սուրբ ես համարում,—հարցրեց Լորիս-Մելիքովը:

— Թե սուրբ չլիներ, ժողովուրդը նրան չեր լսել,—չուտ վրա բերեց Համգալուն:

— Սուրբը Շամիլը չե, սուրբը Մանսուրն եր,—ասաց Խան-Մահոման:—Նա իսկապես սուրբ եր: Յերբ նա իմամ եր, ամ-

բողջ ժողովուրդը ուրիշ եր: Նա աուլից աուլ եր գնում, և ժողովուրդը առաջն եր դուրս գալիս նրա չերքեսկալի փեշը համբուրելու, մեղքերն եր զղջում և չերզվում եր ալլես վատ բան չանել: Ծերերն ասում ելին՝ այն ժամանակ բոլոր մարդիկ սրբերի պես ելին—չեյին ծխում, չեյին խմում, աղոթքները բաց չեյին թողնում. վերավորանքները ներում ելին միմյանց, մինչև անգամ արջունը ներում ելին: Այն ժամանակ լեթե փող կամ մի իր ելին գտնում, ձողերից կապում ելին և ճանապարհին ցցում: Այն ժամանակ աստված ել ամեն բանում աջողութուն եր տալիս ժողովրդին, և այնպես չեր, ինչպես հիմի,—ասաց Սան-Մահոման:

— Մարերում այժմ ել վնչ խմում են, վնչ ծխում,—ասաց Համզալոն:

— Քո Շամիլը լամորո չե,—ասաց Սան-Մահոման, աչքով անելով Լորիս-Մելիքովին: «Լամորոլը» լեռնականները արհամարհական անուհն եր:

— Մարեցին ե լամորո,—պատասխանեց Համզալոն:—Արծիվները հենց սարերում ել բնակում են:

— Այ կորիճ, հաջող կտրեցիր,—ատամները ցցելով խոսեց Սան-Մահոման, ուրախանալով, վոր հակառակորդն այդպիսի ճարպիկ պատասխան տվեց:

Լորիս-Մելիքովի ձեռքին ծխախոտի արծաթե տուփ տեսնելով՝ նա ծխախոտ խնդրեց: Յեվ չերը Լորիս-Մելիքովն ասաց, թե չե վոր ծխելը նրանց արդելված ե, նա աչքով-գլխով արավ դեպի Հաջի-Մուրադի սենյակը՝ և ասաց, թե կարելի չե, չերը չեն տեսնում: Յեվ իսկույն ծխել սկսեց՝ ներս չբաշելով և ծուխը դուրս թողնելիս կարմիր պոչները անշնորհք ծալելով:

— Եդ լավ չի,—խիստ ասաց Համզալոն և սենյակից դուրս լեկավ: Սան-Մահոման դեպի նրան ել աչքով արավ և ծխելով սկսեց հարցուփորձ անել Լորիս-Մելիքովին, թե ինչ սեղից կարելի չե ավելի լավ մետաքսե բեշմեթ և սպիտակ փափախ գնել:

- Հը՞, մի՞թե այդքան շատ փող ունես:
- Կա, հերիք կանի, — աչքով անելով ասաց Սան-Մահոման:
- Դու հարցրու, թե ի՞նչ տեղից ե նրա փողը,—ասաց Ելգարը, իր սիրուն, ժպտուն դեմքը Լորիս-Մելիքովին դարձնելով:
- Տարել եմ խաղի մեջ,—արագ վրա բերեց Սան-Մահոման:
- Յեվ նա պատմեց, թե ինչպես չերեկ, թիֆլիսում ման գալիս, պատահել ե մի խումբ մարդկանց՝ ուսաների և հայերի, վոր

բոնք գրամի չերկու չերեսն ելին խաղում (որլյանկա): Սաղազրամը շատ եր—չերեք վոսկի և շատ արծաթ: Սան-Մահոման իսկույն խաղը հասկացավ և՛ գրպանում չեղած սև փողերը զընդ-զընգացնելով, խաղացողների շրջանը մտավ ու ասաց, թե ամբողջ գումարն ե խաղում:

— Եդ ի՞նչպես ամբողջ գումարը: Միթե դու ունեյլի՞ր,—հարցրեց Լորիս-Մելիքովը:

— Ընդամենը տասներկու կոպեկ ունեյի,—ատամները ցցելով ասաց Սան-Մահոման:

- Լավ, լեթե տանձը տալիր:
- Ա՛յ... հրես:

Յեվ Սան-Մահոման ատրճանակը ցույց տվեց:

- Ի՞նչ ե, կտալի՞ր:
- Ինչու պիտի տալի, կփախչելի, իսկ լեթե մեկն ու մեկը բռներ, կսպանելի: Պրծավ գնաց:

— Յեվ ի՞նչ, տարա՞ր:

— Այն, բոլորը հավաքեցի ու հեռացա:

Լորիս-Մելիքովը Սան-Մահոմային և Ելգարին միանգամայն հասկանում եր: Սան-Մահոման մի ուրախ, քեֆասեր մարդ եր, վոր չեր իմանում, թե ավելորդ չեռանդը ինչ բանի վրա դործ գներ. միշտ ուրախ-զվարթ և թեթևամիտ եր, թե իր և թե ուրիշների կյանքի հետ խաղում եր և կյանքի այդ խաղի համար այժմ ուսաների կողմն եր անցել և վաղն ել նույն կյանքի խաղի համար կարող եր կրկին Շամիլի կողմը անցնել: Ելգարը նույնպես բոլորովին հասկանալի չեր. իր մշուրշիգին նա լիովին նվիրված մարդ եր, հանգիստ, ուժեղ և հաստատակամ: Լորիս-Մելիքովի համար միայն հրաշեկ Համզալոն եր անհասկանալի: Լորիս-Մելիքովը տեսնում եր, վոր այդ մարդը վոչ միայն նվիրված եր Շամիլին, այլև անդիմադրելի զզվանք, արհամարհանք, գարշանք ու ատեղութուն եր տածում դեպի բոլոր ուսաները, և այդ պատճառով Լորիս-Մելիքովը հասկանալ չեր կարողանում, թե ինչու չեր ուսաների մոտ չեկել: Լորիս-Մելիքովը մի միտք հղացավ, վորին համակարծիք ելին և իշխանալորներից միքանիսը, թե Հաջի-Մուրադի դուրս գալը և նրա պատմածները Շամիլի հետ ունեցած թշնամության մասին՝ խարերայութուն եր, վոր նա չեկել եր միայն ուսաների թույլ կողմերը տեսնելու և, նորից սարերը փախչելով, ուժերը դարձնել դեպի այն կողմը, ուր ուսաները թույլ ելին: Յեվ Համզալոն իր ամբողջ ելուժամը հաստատում եր այդ չին-

թաղությունը: «Նրանք և ինքը Հաջի-Մուրադը,—կարծում եր
Լորիս-Մելիքովը,—իրենց դիտավորութիւնը կարող են ծածկել,
բայց սա իր աշխարհ ատելութեամբ ինքն իրեն մատնում եր:

Լորիս-Մելիքովը փորձեց նրա հետ խոսել: Նա հարցրեց,
արդուք չի տխրում: Բայց նա՛ իր գործը չթողնելով և մի աչքով՝
Լորիս-Մելիքովին խեթ նայելով՝ խոստոս ձայնով մոնչաց:

— Չէ, տխուր չի:

Այդպես ել պատասխանեց մյուս հարցերին:

Մինչ Լորիս-Մելիքովը նոքարների սենյակումն եր, ներս
մտավ Հաջի-Մուրադի և չորրորդ մշուրիդը, ավարացի Խանեֆին,
մազոտ լեռեսով ու վզով, դուրս ընկած թավամազ լանջով, վոր
կարծես թե մորթով եր ծածկված: Դա մի քաջառողջ, չերկար ու
բարակ դատողութիւններ չանող աշխատավոր եր, վոր շարունակ
իր գործով եր տարված և ելգարի պես առանց դատողութեան
հնազանդում եր իր տիրոջը:

Յերբ նա նոքարների սենյակը մտավ բրինձ վերցնելու, Լո-
րիս-Մելիքովը նրան կանգնեցրեց և հարցուփորձ արավ, թե ինչ
տեղից ե և վորքան ժամանակ ե, վոր Հաջի-Մուրադի մոտ ե:

— Հինգ տարի չե,—պատասխանեց Խանեֆին Լորիս-Մելի-
քովի հարցին:—Յես ու նա մի առւից ենք: Հայրս նրա հորեղ-
բորը սպանեց, նրանք ել ինձ ելին ուզում սպանել,—ասաց նա,
միացած հոնքերի տակից հանդիստ նայելով Լորիս-Մելիքովի չե-
րեսին:—Այն ժամանակ չես խնդրեցի, վոր ինձ չեղբայր ընդունեն:

— Ի՞նչ ե նշանակում չեղբայր ընդունեն:

— Յերկու ամիս գլուխս չեյի թրաշում, չեղունգներս չեյի
կտրատում և նրանց մոտ չեկա: Նրանք ինձ Ֆաթիմաթի, իրանց
մոր մոտ տարան: Ֆաթիմաթն ինձ ծիծ տվեց, և չես նրա չեղբայ-
րը դարձա:

Կողքի սենյակից լսվեց Հաջի-Մուրադի ձայնը: Ելգարը իս-
կուզն իմացավ, կոր տերը կանչում ե և, ձեռքերը սրբելով, մեծ-
մեծ քայլերով ընդունարան գնաց:

— Կանչում ե իր մոտ,—ասաց նա վերադառնալով:

Լորիս-Մելիքովը, ուրախ Խան-Մահոմալին մի ծխատոտ ել
տալով, գնաց ընդունարանը:

XIII

Յերբ Լորիս-Մելիքովը ընդունարան մտավ, Հաջի-Մուրադը
ուրախ դեմքով դիմավորեց նրան:

— Ի՞նչ ե, շարունակե՞մ,—ասաց նա, թախտի վրա նստելով:

— Այո, անպատճառ,—ասաց Լորիս-Մելիքովը,—իսկ չես քո
նոքարների մոտ ելի գնացել, խոսեցի նրանց հետ: Մեկը ուրախ
տղա չե,—ավելացրեց Լորիս-Մելիքովը:

— Հա, Խան-Մահոման՝ թեթև մարդ ե, — ասաց Հաջի-Մու-
րադը:

— Բայց ջահելը, սիրունը ինձ դուր չեկավ:

— Հա, ելգարը: Նա ջահել ե, բայց հաստատակամ ե, չեր-
կաթի պես ե:

Նրանք լռեցին:

— Ուրեմն շարունակե՞մ:

— Այո՛, այո՛:

— Յես ասացի, թե խաներին ինչպես սպանեցին: Դե, նրանց
սպանեցին, և Համզաթը Խունդախ մտավ ու խանի ապարանքում
նստեց,—սկսեց Հաջի-Մուրադը:—Միայն խանուհի մայրն եր մնա-
ցել: Համզաթը նրան իր մոտ կանչեց: Նա սկսեց Համզաթին հան-
դիմանել: Համզաթը աչքով արավ, և նրա Ասելգար մշուրիդը քա-
մակից խփեց ու սպանեց նրան:

— Նրան ինչու սպանեց,—հարցրեց Լորիս-Մելիքովը:

— Հապա ի՞նչ աներ. առջևի փոտներն անց եր կացրել, չե-
տիններն ել պիտի անցկացներ: Ամբողջ ցեղը պիտի փոխնացներ:
Այդպես ել արավ: Ծամիլը փոքրին սպանեց, անդունդ գլորելով...
Ամբողջ Ալվարիան Համզաթին հպատակվեց, միայն չես ու չեղբայրս
հպատակվել չուզեցինք: Խաների փոխարեն նրա արջունն եր մեզ
հարկավոր: Յերեսանց մենք ցուց կլինք տալիս, վոր հնազանդ-
վել ենք, բայց միայն մտածում ելինք, թե ինչպես նրա արջունն
առնենք, վրեժխնդիր լինենք: Պապիս հետ խորհրդակցեցինք և
վորոշեցինք սպասել, չերբ նա ապարանքից դուրս կգա, և դարա-
նից սպանել նրան: Մեկը լսել եր մեր խոսակցութիւնը, Համզա-
թին ասել, և նա պապիս իր մոտ կանչեց ու ասաց. «Տես, չեթե
ճշմարիտ ե, վոր թոռներդ չարիք են խորհում իմ դեմ, նրանց
հետ դու չել մի գերանից կկախվես: Յես աստուծո գործն եմ անում,
և ինձ խանգարել չի կարելի: Գնա և միտդ պահիր, ինչ վոր
ասացի»: Պապս տուն չեկավ և մեզ ասաց: Այն ժամանակ մենք
վճահեցինք չսպասել, այլ առաջին իսկ տոնին այդ բանը իրագոր-
ծել մզկիթում: Ընկերներս հրաժարվեցին,—մնացինք չես ու չեղ-
բայրս: Յերկ-չերկու ատրճանակ վերցրինք, չափնջիներս ձգեցինք
և մզկիթ գնացինք: Համզաթը չերեսուն մշուրիդի հետ ներս
մտավ: Նրանց թրերը մերկացրած ելին: Համզաթի կողքից գնում

եր Ասելդարը, նրա սիրելի մյուրիզը, — ան իսկ մյուրիզը, վոր խանուհու գլուխը կտրեց: Յերբ նա մեղ տեսավ, պոռաց, վոր մենք յափնջիներս հանենք, և մոտեցավ ինձ: Դաշուհնը ձեռքս եր. լես նրան սպանեցի ու Համգաթի վրա հարձակվեցի: Բայց Ոսման լեղբարս արդեն կրակել եր նրա վրա: Համգաթը դեռևս կենդանի լեր և դաշուհնով լեղբորս վրա հարձակվեց, բայց լես նրա գլխին տվի ու վերջացրի: Յերեսուն մյուրիզ եր, իսկ մենք չերկու հոգի: Ոսման լեղբորս նրանք սպանեցին, իսկ լես պաշտպանվեցի, պատուհանից դուրս թոս ու հեռացա: Յերբ իմացան, վոր Համգաթը սպանված է, ամբողջ ժողովուրդը վոտքի կանգնեց, և մյուրիզները փախան, իսկ չփախչողներին կոտորեցին:

Հաջի Մուրադը կանգ առավ և ծանր շունչ քաշեց:

— Այդ բոլորը լավ եր, — շարունակեց նա, — հետո ամեն ինչ փոխվեց: Համգաթի տեղը Շամիլը բռնեց: Նա ուղարկեց պատգամավորներ ինձ մոտ ասելու, վոր իրա հետ միասին ուսաների-վեմ գնամ: իսկ լեթե հրաժարվեմ, սպառնում եր թունդախաբ քարու քանդ անել և ինձ ել սպանել: Յես ասացի, վոր նրա մոտ չեմ գնալ, նրան ել ինձ մոտ չեմ թողնիլ:

— Ինչո՞ւ չգնացիր նրա մոտ, — հարցրեց Լորիս-Մելիքովը:

Հաջի-Մուրադը նոթերը կիտեց և իսկուհն չպատասխանեց:

— Ձեր կարելի: Շամիլի վրա լեր լեղբորս ու Արուսուհեյալ-խանի արյունը: Յես չգնացի նրա մոտ: Ռոզենը, գեներալը, սպալի աստիճան ուղարկեց ինձ և հրամայեց, վոր Ավարիայի կառավարիչը լինեմ: Ամեն բան լավ կլիներ, բայց Ռոզենը Ավարիայի կառավարիչ առաջ Դադի-Կուսմբի Մահ-մեդ-Միրզա-խանին եր նշանակել, իսկ հետո Ահմեդ-խանին: Սա ինձ ատելով ատում եր: Սանի կնոջ աղջկան, Սալթանեթին նշանել եր իր վորդու համար, բայց նրան չտվին: Նա կարծում եր, թե մե-ր լոր վորդու համար, բայց նրան չտվին: Նա կարծում եր, թե մե-ր լոր վորդու չես եմ: Նա ինձ ատելով ատում եր և իր նոքարներին դավորը լես եմ: Նա ինձ ատելով ատում եր և իր նոքարներին ուղարկեց ինձ սպանելու, բայց լես թոս-հեռացա նրանից: Այն ժամանակ նա գեներալ Կլուզինաուի առաջ ինձ զրպարտեց. — ասաց, թե ավարացիներին լես չեմ թողնում, վոր գինավորներին փախտ տան: Նա նրան ասաց նույնպես, թե չարմա չեմ գնում՝ ա-հա այս, — ասաց Հաջի-Մուրադը՝ փափախի չարման ցույց տա-լով, — և թե այդ նշանակում եր, վոր լես Շամիլին եմ նվիրված: Գեներալը չհավատաց և չհրամայեց, վոր ինձ ձեռ տան: Բայց ճերբ գեներալը Թիֆլիս գնաց, Ահմեդ-խանը իր ասածն արավ-մի վաշտ գինավորներով ինձ ձերբակալեց, շղթաներով կաշկան-

դեց և թնգանոթից կապեց: Վեց որ ինձ այդպես պահեցին: Յոթնե-րորդ որը կապանքներս արձակեցին և Թեմիր-Սան-Շուրա տա-րան: Քառասուն զինվոր եր տանում՝ լցրած հրացաններով: Ձեռներս կապած էլին, և հրամայված եր սպանել ինձ, լեթե փախ-չել ուզեմ: Այդ լես գիտելի: Յերբ մենք Մոկսոխի մոտից անց-նում էլինք, կածանը շատ նեղ եր, ալ կողմում հիսուն սաժենի չափ մի անդուհ: Յես անցա զինվորի ալ կողմը, դեպի անդուհ-դի լեզերը: Ձինվորը ուզում եր ինձ կանգնեցնել, բայց՝ լետե-վիցս նրան քարը տալով, անդուհը թոս: Ձինվորը տեղն ու տեղը մեռավ, իսկ լես ահա վողջ եմ մնացել: Կողերս, գլուխս, ձեռներս, վոտներս — բոլորը ջարդեցի: Փորձեցի սողալ — չկարողա-ցա: Գլուխս պտույտ լեկավ, և քնեցի: Յերբ արթնացա, թաց էլի, արյան մեջ: Մի հովիտ տեսավ, ժողովուրդ կանչեց, աուլ տարան: Կողերս, գլուխս առողջացան, վոտս ել առողջացավ, միայն թե մնաց այսպես կարճ:

Յեկ Հաջի-Մուրադը մեկնեց իր ծուռ վոտը:

— Ծառայում ե, այդքանն ել հերիք ե, — ասաց նա: — Ժողո-վորդը լեց, սկսեց մոտոս գալ: Յես առողջացա և տեղափոխվեցի Յեմես: Ավարացիները նորից ինձ կանչեցին, վոր նրանց կառա-վարեմ, — հանգիստ, անձնավստահ գոռոզեթյամբ ասաց Հաջի-Մու-րադը: — Յեկ լես համաձայնեցի:

Հաջի-Մուրադը արագ վեր կացավ և, խուրջինից թղթապա-նակը հանելով, չերկու դեղնած նամակ հանեց և Լորիս-Մելիքո-վին տվեց: Նամակները Կլուզենաուից էլին: Լորիս-Մելիքովը կար-գաց նամակները: Առաջին նամակում գրած եր.

«Պրապորշչիկ Հաջի-Մուրադ: Դու ինձ ծառայում էլիր, և լես քեզանից գոհ էլի և քեզ լավ մարդ էլի համարում: Նորերս գեներալ-մայոր Ահմեդ-խանը հաղորդեց ինձ, վոր դու դավաճան ես, վոր դու չարմա լես կրում, վոր դու Շամիլի հետ հարաբերու-թյուն ունես, վոր դու ժողովուրդը սովորեցրել ես ուսաց իշխա-նություն չհնազանդել: Յես հրամայեցի, վոր քեզ ձերբակալեն և ինձ մոտ բերեն, — դու փախար. չգիտեմ, լավ հետևանք կունենա թե վատ, վորովհետև լես չգիտեմ, մեղավոր ես դու, թե վոչ: Այժմ լսիր ինձ: Յեթե մեծ թագավորի առաջ խիղճը մաքուր ե, լեթե դու վոչ մի մեղք չունես, արի ինձ մոտ: Վոչվորից մի վախենալ, լես քո պաշտպանդ եմ: Սանը քեզ վոչինչ չի անիլ — նա ինքը իմ իշխանությունս ներքո լես: Ուրեմն վախենալու բան չունես»:

Հետո Կլուզենաուն գրում եր, թե ինչպես նա միշտ իր խոսքի

տերն ե չեղել և ճշմարտասեր, և դարձյալ հորդորում եր Հաջի-Մու-
րադին իր մոտ գնալ:

Յերբ Լորիս-Մելիքովը առաջին նամակը վերջացրեց, Հաջի-
Մուրադը մի ուրիշ նամակ հանեց, բայց, առաջիմ Լորիս-Մելիքո-
վի ձեռք չտալով, պատմեց, թե առաջին նամակին նա ինչպես
եր պատասխանել:

— Յես նրան գրեցի, թե չարմա դնում ելի վնչ թե Շամիլի,
այլ հոգուս փրկության համար. թե Շամիլի կողմն անցնել չես չեմ
ուզում և չեմ կարող, վորովհետև նրա միջոցով սպանվել են մայրս,
չեղբայրներս և ազգականներս, բայց ուսաների մոտ ել գալ չեմ
կարող, վորովհետև ինձ անպատվել են: Խուսափում, չերբ չես
կաշկանդված ելի, անպիտաններից մեկը ինձ վրա... վրաս: Յեվ
չես ձեզ մոտ գալ չեմ կարող, մինչև վոր այդ մարդը չսպանվի: Իսկ
գլխավորն այն է, վոր խարերս Ահմեդ-խանից չերկչուղ եմ կրում:
Դրանից հետո գեներալն այս նամակն ինքը ուղարկեց, — ասաց
Հաջի-Մուրադը, մի ուրիշ գեղնած թուղթ տալով Լորիս-Մելի-
քովին:

«Դու իմ նամակին պատասխանեցիր, շնորհակալ եմ, — կար-
դաց Լորիս-Մելիքովը: — Դու գրում ես, թե չես վախենում վերա-
դառնալ, բայց մի գլխուրի կողմից քեզ հասցրած անպատվու-
թյունն արգելում է քեզ այդ անել: Իսկ չես քեզ հավատացնում
եմ, վոր ուսաց որենքն արդար է, և դու աչքովդ կտեսնես այն
մարդու պատիժը, վոր համարձակվել է անարգել քեզ: Յես ար-
դեն հրամայել եմ, վոր այդ հետադոտեն: Լսիր, Հաջի-Մուրադ: Յես
իրավունք ունեմ քեզանից դժգոհ լինելու, վորովհետև դու ինձ ու
պատվիս չես հավատում, բայց չես քեզ ներում եմ, իմանալով առ-
հասարակ լեռնականների ընավորության անպատահությունը: Յե-
թե խիղճդ մաքուր է, չեթե դու չարմա միայն հոգուդ փրկու-
թյան համար ես կրում, այն ժամանակ դու իրավացի չես և կա-
րող ես համարձակ նայել ուս կառավարության և իմ աչքին,
իսկ քեզ անարգողը, հավատացնում եմ, կպատվի, **գուչիգ քեզ
կհանձնվի**, և դու կտեսնես, կիմանաս, թե ինչ է նշանակում
ուսաց որենքը: Մանավանդ, վոր ուսաները ուրիշ աչքով են նա-
յում ամեն բանի վրա. նրանց աչքում դու քեզ վալը չես ձգել, վոր
մի սրիկա քեզ անպատվել է: Յես ինքս գիմրիցիներին իրավունք
տվի չարմա կրելու և նրանց վարմունքին նայում եմ, ինչպես
հարկն է. հետևաբար, կրկնում եմ, վախենալու պատճառ չունես:
Յեկ ինձ մոտ այն մարդու հետ, վորին այժմ չես քեզ մոտ եմ ու-

զարկում. նա հավատարիմ է ինձ, **թե՛ անմեղից սուրկը չի**, այլ
մտերիմը այն մարդու, վոր վայելում է կառավարության առան-
ձին ուշադրությունը:

Հետո կյուզենաուն դարձյալ համոզում եր Հաջի-Մուրադին
գալ իր մոտ:

— Յես սրան չհավատացի, — ասաց Հաջի-Մուրադը, չերբ
Լորիս-Մելիքովը նամակն ավարտեց, — և կյուզենաունի մոտ չգնա-
ցի: Ինձ համար կարևորն այն էր, վոր չես վրեժխնդիր լինեմ Ահ-
մեդ-խանին, իսկ ուսաների պատճառով չես այդ չեչի կարողանում:
Մինչդեռ այդ նույն ժամանակ Ահմեդ-խանը Յելմեսը շրջապա-
տեց և ուզում եր ինձ բռնել կամ սպանել: Մարդ չես քիչ ունեչի
և նրանից պաշտպանվել չեչի կարող: Յեվ հենց այդ ժամանակ
ահա Շամիլի ուղարկած մարդը չեկավ՝ հետը նամակ բերելով: Նա
խոստանում եր ինձ ոգնել Ահմեդ-խանից ազատվելու, սպանել
նրան և ամբողջ Ավարիան ինձ եր տալիս կառավարելու: Յերկար
մտածեցի և անցա Շամիլի կողմը: Յեվ ահա այդ ժամանակից ի
վեր չես կովում եչի ուսաների դեմ:

Այստեղ Հաջի-Մուրադը իր բոլոր ուզմական գործերը պատ-
մեց: Այդ գործերը շատ եչին և Լորիս-Մելիքովին մասամբ հայտ-
նի: Նրա բոլոր արշավանքներն ու ասպատակություններն իրենց
տեղափոխությունների արտակարգ արագությամբ և հարձակում-
ների անվեհեթույթյամբ զարմանալի եչին և միշտ հաջողությամբ
եչին պակավում:

— Իմ ու Շամիլի միջև մտերմություն չերբեք չի չեղել, —
իր պատմությունն ավարտեց Հաջի-Մուրադը, — բայց նա ինձա-
նից վախենում եր, և չես նրան հարկավոր եչի: Իսկ այդ ժամա-
նակ այնպես պատահեց, վոր ինձանից հարցրին, թե Շամիլից հե-
տո ո՞վ իմամ կլինի: Յես ասացի, թե իմամ նա կլինի, վորի թու-
րը սուր է: Այդ Շամիլին ասացին, և նա ուզեց ազատվել ինձա-
նից: Նա ինձ թաշտասարան ուղարկեց: Յես գնացի, հազար վոչ-
խար խրեցի, չերեք հարյուր ձի: Բայց նա ինձ ասաց, թե այն չեմ
արել, ինչ վոր հարկավոր եր և նաչիրությունից հեռացրեց ինձ և
հրամայեց, վոր բոլոր փողը իրան ուղարկեմ: Հազար վոսկի
ուղարկեցի նրան: Նա իր մյուրիդներին ուղարկեց, և բոլոր կալ-
վածներս խրեցին ինձանից: Պահանջում եր, վոր գնամ իր մոտ:
Դիտեչի, վոր սպանել է ուզում, և չգնացի: Նա մարդիկ ուղար-
ինձ բռնելու, չես գիմարելով՝ ազատվեցի՝ և փախա Վորոնցովի
մոտ: Միայն ընտանիքս չվերցրի: Մալրս ել, կինս ել, վորդիս ել

Նրա մոտ են: Ասա Սարգարին, քանի վոր ընտանիքս այնտեղ ե, չես վոչինչ անել չեմ կարող:

— Կասեմ,—ասաց Լորիս-Մելիքովը:

— Հոգս, աշխատի, ինչ վոր իմն ե՝ քոնն ե. միայն իշխանի մոտ ոգնիր: Յես կապված եմ, և չվանի ծայրը Շամիրի ձեռին ե:

Հաջի-Մուրադը այս խոսքերով վերջացրեց իր պատմութունը Լորիս-Մելիքովին:

XIV

Ինկտեմբերի քսանին Վորոնցովը հետևյալը գրեց ղինվորական միրխատը Չերնըշովին (նամակը ֆրանսերեն եր).

«Վերջին թղթատարով չես չգրեցի ձեզ, սիրելի իշխան, վորովհետև կանխապես վճռել ելի կամենում, թե Հաջի-Մուրադի հետ մենք ինչ պիտի անենք: Յերկու-չերեք որ ե, վոր չես այնքան ել առողջ չեմ զգում ինձ: Վերջին նամակովս չես հաղորդեցի ձեզ, վոր Հաջի-Մուրադը չեկել և այտեղ. Թիֆլիս նա չեկավ ութին. հետևյալ որը չես նրա հետ ծանոթացա, և ութը կամ իննը որ չես նրա հետ խոսում ու խորհում ելի, թե հետագայում մեզ համար նա ինչ կարող ե անել, բայց մանավանդ, թե մենք այժմ նրա հետ ինչ անենք, վորովհետև նա սաստիկ հոգս ե քաշում իր ընտանիքի վիճակի մասին և ասում ե, լիակատար անկեղծության բոլոր նշաններով, թե, քանի վոր նրա ընտանիքը Շամիրի ձեռին ե, նա անդամալուծված ե և անկարող ե մեզ ծառայել և սիրալիր ընդունելություն ու ներման փոխարեն, վոր նրանց ավինք, իր շնորհապարտությունն ապացուցանել: Այն հանգամանքը, վոր իր սիրելիներե՛րի վիճակը անհայտ ե իրեն, տենդալին դրուժություն ե ստեղծում նրա համար, և նրա հետ աչտեղ ապրելու իմ կողմից նշանակված անձինք հավատացնում են ինձ, վոր նա գիշերները չի քնում, գրեթե վոչինչ չի ուտում, շարունակ աղոթում ե և միայն թուլությունն ե խնդրում միքանի կազակի հետ ձիով ման գալու—նրա համար միակ հնարավոր զվարճությունն ու շարժողությունը, վոր չերկարամյա սովորության պատճառով անհրաժեշտ ե: Ամեն որ նա ինձ մոտ ե գալիս իմանալու, թե արդյոք վորեև տեղեկություն ունեմ նրա ընտանիքի մասին, և խնդրում ե ինձանից, վոր չես զանազան գծերի վրա մեր սրամազրուժյան տակ գտնված բոլոր գերիներին ժողովեմ, վորպեսզի փոխանակություն համար Շամիրին առաջարկենք և դրա

վրա նա միքիչ փող ել կավելացնի: Կան մարդիկ, վորոնք այդ նպատակի համար նրան փող կտան: Նա շարունակ կրկնում եր ինձ. «Ընտանիքս փրկեցեք և ապա հնարավորութուն տվեք ձեզ ծառայելու (նրա կարծիքով ամենից լավը լեզգիները գիծն ե), և չեթե մի ամսից հետո մեժ ծառայություններ չմատուցանեմ ձեզ, պատժեցեք ինձ, ինչպես հարկավոր կհամարեք»:

«Յես նրան պատասխանեցի, թե այդ բոլորը շատ արգարացի չե թվում և թե մեզ մոտ մինչև իսկ շատ մարդիկ կգտնվեն, վորոնք նրան չեյին հավատա, չեթե նրա ընտանիքը սարբերում մնար, և վոչ թե մեզ մոտ վորպես պատանդ. թե չես ամեն բան կանեմ, ինչ վոր հնարավոր ե, մեր սահմաններում գերիներին ժողովելու և, իրավունք չունենալով, համաձայն մեր կանոնադրության, փրկանքի փող տալ նրան՝ իր տալիքի վրա ավելացնելու, վոր նա ինքը կճարի, չես գուցե ուրիշ միջոցներ գտնեմ նրան ոգնելու: Իրանից հետո չես պարզ ասացի իմ կարծիքը, թե Շամիրը չերեք և վոչ մի դեպքում նրա ընտանիքը բաց չի թողնիր, թե նա գուցե ուղղակի կհաջանե նրան այդ, կխոստանա լիակատար ներումն և նախկին պաշտոնները, կսպառնա, չեթե նա չվերադառնա, վոչնչացնել մորը, կնոջը և վեց չերեխաներին: Յես նրան հարցրի՝ արդյոք կարո՞ղ ե անկեղծորեն ասել, թե ինչ կաներ, չեթե Շամիրից մի ալգպիտի ծանուցագիր ստանար: Հաջի-Մուրադը աչքերն ու ձեռները դեպի չերկինք բարձրացրեց և ասաց ինձ, թե ամեն ինչ աստուծո ձեռին ե, բայց ինքը չերեք իր թշնամուն անձնատուր չի լինիր, վորովհետև ինքը լիովին հավատացած ե, վոր Շամիրն իրեն չի ներիր, և ինքը չերկար ժամանակ կենդանի չի մնալ: Ինչ վերաբերում ե ընտանիքը բնաջինջ անելուն, նա չի կարծում, վոր Շամիրն այնքան թեթևամիտ վարվի, 1) վորպեսզի նրան ավելի կատաղի ու վտանգավոր թշնամի դարձնի, 2) Դադատում կան շատ ազդեցիկ մարդիկ, վորոնք խորհուրդ չեն տալ նրան այդ անելու: Վերջապես նա միքանի անգամ կրկնեց ինձ, թե ապագալի նկատմամբ ինչպես և լինի աստուծո կամքը, բայց այժմ միայն ընտանիքը փրկելու միտքն ե նրան գրադեցնում. թե նա, հանուն աստուծո, աղաչում-պաղատում ե ինձ, վոր չես ոգնեմ նրան և իրավունք տամ Չեչնաչի շրջակայքը վերադառնալու, ուր նա, մեր իշխանավորների միջնորդութամբ և նրանց թուլությունյամբ, իր ընտանիքի հետ հարբերություններ ունենալ կարողանար, նրա ներկա դրության և ազատելու միջոցների մասին շարունակ տեղեկություններ ստա-

նար. թե թշնամու չերկրի այդ կողմերում շատ անձինք և մինչև անգամ միքանի նաչր քիչ թե շատ նվիրված են իրեն. թե ուսանե-
րի նվաճած կամ չհզոք մնացած այդ ամբողջ բնակութան մեջ
նրա համար հեշտ կլինի այն նպատակին հասնելու, վոր գիշեր-
ցերեկ հանգիստ չի տալիս իրեն, և վորի իրագործումը կհանդու-
տացնե նրան և հնարավորութուն կտա մեր ոգտին գործելու և
մեր վստահութանն արժանանալու: Նա խնդրում է, վոր քսան-
չերեսուն խիզախ կազակների ուղեկցութամբ կրկին չես իրեն
Գրոզնի ուղարկեմ, վորոնք ծառայելին իրեն թշնամիներից պաշտ-
պանելու և մեզ համար իր արտահայտած դիտավորութունների
ճշմարտութունը չերաշխավորելու:

«Դուք կհասկանաք, սիրելի իշխան, այդ բոլորը նեղ դու-
թյան մեջ գրեց ինձ, վորովհետե, ինչ վոր ել անեմ, ինձ վրա
մեծ պատասխանատվութուն կա: Լիովին նրան հավատ ընծայե-
լըն ել վերին աստիճանի անզգուշութուն կլինեք. բայց չեթե կա-
մենաչինք փախչելու միջոցները նրանից խլել, մենք ստիպված
պիտի լինենք նրան փակել. իսկ այդ, իմ կարծիքով, անարդա-
րութուն և անքաղաքականութուն կլինեք: Մի այգախի միջոց,
վորի լուրն անհապաղ կտարածվեր համայն Դաղստանում, այնտեղ
մեզ շատ կվսասեր, կգցեր արամադրութունը այն մարդկանց (իսկ
դրանց թիվը շատ է), վորոնք քիչ թե շատ պատրաստ են աշխա-
րա Շամիլի դեմ գնալու և վորոնք շատ են հետաքրքրվում իմա-
մի մեզ մոտ գտնվող ամենաքաջ և ձեռներեց ոգնականի վիճա-
կով, վոր հարկադրված չեղավ մեզ անձնատուր լինելու: Հենց վոր
Հաջի-Մուրադի հետ վարվենք, ինչպես գերու հետ, նրա՝ Շամի-
լին դավաճանելը, կկորցնեք իր բոլոր բարենպաստ տպավորու-
թյունը մեզ համար:

«Այդ պատճառով չես կարծում եմ, թե ուրիշ կերպ վարվել
չելի կարող, քան ինչպես չես վարվեցի, զգալով, սակայն, վոր մեծ
սխալի համար կարելի կլինի մեղադրել ինձ, չեթե Հաջի-Մուրադը
մտածի վերստին փախչել: Ծառայութան մեջ և այսպիսի խճճված
գործերում դժվար է, չեթե չասենք՝ անհնարին է, մի ուղիղ ճա-
նապարհով գնալ, չենթարկվելով սխալվելու վտանգին և պատաս-
խանատվութունը հանձն չառնելով. բայց քանի վոր ճանապար-
հը ուղիղ է թվում, պետք է գնալ,—ինչ լինելու չե, թող լինի:

«Խնդրում եմ ձեզանից, սիրելի իշխան, արկանել այս նո-
րին մեծութուն թագավոր Կալայրի հայեցողութան, և չես բախ-
տավոր կլինեմ, չեթե մեր ոգոտափառ տերը բարեհաճի վար-

մունքիս հավանութուն տալ: Բոլորը, ինչ վոր չես վերը գրեցի,
գրեցի նույնպես և զենեքայինը Զավս-դովսկուն ու Կոզլովսկուն, վոր-
պեսզի վերջինս անմիջական հարաբերութուններ ունենա Հաջի-
Մուրադի հետ, վորին չես նախազգուշացրի, թե առանց Կոզլով-
սկու հավանութան վոչինչ անել և վոչ մի տեղ գնալ չի կա-
րող: Յես նրան հայտնեցի, թե մեղ համար ավելի լավ է, չեթե
մեր ձրավոր պահակները ուղեկցութամբ դուրս գա ման գալու,
ապա թե վոչ Շամիլը կսկսի լուր տարածել, թե Հաջի-Մուրադին
մենք փակած ենք պահում. բայց միևնույն ժամանակ չես նրա-
նից խոստումն առա, վոր նա չերբեք Վոզգվիժենսկայա չի գնալ,
վորովհետև վորդիս, վորին նախապես անձնատուր չեղավ նա
և վորին նա իր կուսակին (բարեկամն) է համարում, այդ կողմի կա-
ռավարիչը չի, և կարող ելին թյուրիմացութուններ (անախոր-
ժութուններ) ծագել: Բայց Վոզգվիժենսկայան շատ մոտ է մեզ
թշնամի բազմամարդ գյուղից, մինչդեռ Գրոզնին, իր հավատար-
մատարների հետ հարաբերութուն ունենալու համար, վոր նա ցան-
կանում է, ամեն կողմից շատ հարմար է:

«Բացի քսան ընտիր կազակից, վորոնք, նրա իսկ խնդրան-
քի համաձայն, վոչ մի քաչլ նրանից չես չեն մնալ, չես ուղար-
կեցի նաև ոտամիտոր Լորիս-Մելիքովին¹, վոր մի արժանավոր,
գերընտիր, խելացի սպա չե, թուրքերեն խոսում է, Հաջի-Մուրա-
դին լավ ճանաչում, և սա կարծես թե նույնպես հավատ է ընծա-
յում նրան: Տասը որ, վոր Հաջի-Մուրադը այստեղ անցկացրեց,
նա մի տան մեջ ապրեց չենթ-գնդապետ իշխան Թարխանովի
հետ, վոր Շուշու գավառապետն է և գործերով այստեղ եր գտըն-
վում. դա ճշմարտապես-արժանահավատ մի մարդ է, և չես լի-
ովին հավատ եմ ընծայում նրան: Նա ևս արժանացել է Հաջի-Մու-
րադի վստահութան, և միայն նրա միջոցով, վորովհետև նա շատ
լավ խոսում է թուրքերեն, մենք խոսեցինք ամենաուրբ և զազա-
նի գործերի մասին:

«Հաջի-Մուրադի վերաբերութամբ չես խորհրդակցեցի Թար-
խանովի հետ, և նա միանգամայն համաձայն է ինձ, վոր կամ
այնպես պետք է վարվել, ինչպես չես եմ վարվել, կամ թե Հա-
ջի-Մուրադին բանտարկել և ամեն տեսակ հնարավոր խիստ մի-
ջոցներով հսկել,—վորովհետև միանգամ վոր վատ վարվենք, նրան
պահպանելը հեշտ չի լինի,—կամ թե չերկրի սահմաններից պետք
է նրան բոլորովին հեռացնել: Սակայն այս չերկու վերջին մի-

¹ Կոնս Միխայիլ Տարեկովիչ Լորիս-Մելիքով:

Ջոյնները վոչ միայն բոլորովին կրօնչնչացնելին այն ոգուտը, վոր բղխում ե Հաջի-Մուրադի ե Շամիլի խոսովութունից, այլ և անխուսափելի կերպով կզարեցնելին լեռնականների տրտունջները դարգացումը և լեռնականների ապստամբութեան հնարավորութունը Շամիլի իշխանութեան դեմ: Իշխան թարխանովի ինձ ասաց, թե ինքը հավատացած ե, վոր Հաջի-Մուրադը ճշմարիտ ե խոսում, և թե Հաջի-Մուրադը չի կասկածում, վոր Շամիլը չեբբեք նրան չի ներիլ և կհրամայե նրան սպանել, չնայելով խոստացած ներումին: Միակ բանը, վոր կարողացել եր մտահոգութուն պատճառել թարխանովին Հաջի-Մուրադի հետ ունեցած հարաբերութունների ընթացքում,—դա նրա սերտ կապն ե իր կրոնի հետ, և նա չի թագցնում, վոր այդ կողմից Շամիլը կարող ե ազդել նրա վրա: Բայց, ինչպես վերն ասացի, նա չեբբեք Հաջի-Մուրադին չի համոզել, թե վերադառնալուց հետո իսկուչն կամ քիչ ժամանակ անց նրան չի սպանի:

«Ահա բոլորը, սիրելի իշխան, ինչ վոր ուզում ելի ասել ձեզ այսակերի գործերի այս միջազեպի մասին»:

XV

Այս զեկուցագիրը Թիֆլիսից ուղարկվեց զեկտեմբերի 24-ին: Իսկ 52 թվի նոր տարվա նախորելին սուրհանդակը, տասը ձի հալից գցելուց և տասը կառապան ձեծելով՝ արշունլվա անելուց հետո, հասցրեց այն ժամանակվա զինվորական մինխտր Չերնըշովին, և 1852 թ. հոկտեմբերի 1-ին Չերնըշովը ուրիշ գործերի թվում Վորոնցովի այդ զեկուցագիրն ել Նիկոլայ կալսեր տարավ:

Չերնըշովը Վորոնցովին չեբ սիրում թե այն ընդհանուր հարգանքի համար, վոր վայելում եր Վորոնցովը, թե նրա խոշոր հարստութեան համար, թե նրա համար, վոր Վորոնցովը իսկական բարեք եր, իսկ Չերնըշովը, այնուամենայնիվ, parvenu չե, և, վոր գլխավորն ե, կալսեր՝ զեպի Վորոնցովը տածած առանձին տրամադրութեան համար, այդ պատճառով Չերնըշովը, վորքան կարողանում եր, ամեն մի առիթից ոգտվում եր Վորոնցովին վրասելու: Անցյալ զեկուցման ժամանակ Չերնըշովին հաջողեց Նիկոլայի զժգոհութունը հարուցանել Վորոնցովի դեմ նրա համար, վոր իշխանավորների անփութութեան շնորհիվ լեռնականները համարյա թե ամբողջովին կոտորել ելին կովկասյան մի փոքրիկ գորամաս: Այժմ նա մտազիր եր Վորոնցովի՝ Հաջի-Մուրադի նկատմամբ արած կարգադրութունը ներկայացնել աննպաստ կողմից: Նա ուզում եր կալսեր

Ներշնչել, թե Վորոնցովը միշտ իմնաս ուռաների չե հովանավորում ու մինչև անգամ թուլ վարվում բնիկների հետ և կովկասում Հաջի-Մուրադին թողնելով,—խելացի չե վարվել. թե Հաջի-Մուրադը լոկ մեր պաշտպանութեան միջոցները տեսնելու նպատակով ե չեկել մեզ մոտ, և թե այդ պատճառով ավելի լավ ե Հաջի-Մուրադին Ռուսաստանի կենտրոնը ուղարկել և միայն այն ժամանակ նրանից ոգուտ քաղել, չեբը նրա ընտանիքը սարերից կազատվի և կարելի կլինի համոզվել, վոր նա նվիրված ե մեզ:

Սակայն այդ ծրագիրը Չերնըշովին չհաջողվեց սոսկ այն պատճառով, վոր հուշվարի 1-ին առավոտյան Նիկոլայն առանձնապես լավ տրամադրութեան մեջ չեբ և վոչվորից և վոչ մի անսակ առաջարկութուն նա չեբ ընդունիլ հենց միայն հակաճառութեան գագցումից դրդված. մանավանդ նա տրամադիր չեբ Չերնըշովից առաջարկութուն ընդունելու, վորին՝ առժամանակ անփոխարինելի համարելով՝ հանդուրժում եր միայն, բայց իմանալով, թե զեկարբխանների դատավարութեան ժամանակ նա ինչպես եր աշխատում Ջախար Չերնըշովին կորցնել տալ և ինչպես եր փորձում նրա կարողութեանը արհանալ, նրան համարում եր շատ ցածոգի մարդ: Այնպես վոր Նիկոլայի վատ տրամադրութեան շնորհիվ Հաջի-Մուրադը կովկասում մնաց, և նրա վիճակը այնպես չփոխվեց, ինչպես կարող եր փոխվել, չեթե Չերնըշովը իր զեկուցումը մի ուրիշ ժամանակ աներ:

Ինչը և կես ժամն եր, չեբը քսան աստիճան ցրտի մառախուղում Չերնըշովի հաստ, մորուքավոր կառապանը՝ բացկապուց թավշա սուր անկուններով գրակը զլխին, փոքրիկ սահնակի ստաջակողմը նստած, մի այնպիսի սահնակի, վորպիսին Նիկոլայն եր նստում զբոսնելու ժամանակ, չեկավ կանգնեց Չմեռաչին պալատի շքամուտքի առջև, մտերմարար գլուխ տվեց իր բարեկամին՝ իշխան Դոլորուկիի կառապանին, վոր իր աղաչին վաղուց արդեն իջեցրել եր ու ինքը կանգնել շքամուտքի մոտ, և չեբասանակները հագի հաստ բամբակե մուշտակի քամակի տակ դրած, շփում եր սառած ձեռները:

Չերնըշովի հագին թավամաղ, ալեխառն կղբենու ոճիքով շինել եր, գլխին՝ աքլորի փետուրներով զարդարած չեռանկունի գլխարկ: Ծնկներին ձգած արջի մորթին չեռ քաշելով՝ նա գուշութեամբ հանեց սահնակից առանց կրկնակողիկների (նա պարծենում ե, վոր կրկնակողիկներ գործ չի անում) սառած վոտները և խրոխտալով, խթանները զնզնպացնելով, գորգի վրայով

անցավ և իր բարապանի իր առջև պատկառանքով բաց արած դռնով նախասրահը մտավ: Նախասենյակում շինելը ձգելով վաղեվազ իրեն մոտեցած ծեր-սենեկապանի թևերի վրա՝ Չերնըշովը մոտեցավ հայելուն և գանգուր կեղծ մազերի վրայից զգուշությամբ գլխարկը վերցրեց: Հայելուն հայելով՝ ծերացած ձեռների սովորական շարժումով նա քունքի մազերն ու ցցուկը վոլորեց, խաչը, աքսելրանտը և մեծատառերով եպոլետներն ուղղեց ու վատ հնազանդվող ծեր վոտները թուլ-թուլ վոխելով սկսեց թեք սանդուղի վրա փոսած գորգի վրայով բարձրանալ: Անցնելով դռների մոտ տոնական համազգեստներով կանգնած և խորին ակնածությամբ իրեն գլուխ տվող սենեկապանների մոտից, Չերնըշովը ընդունարան մտավ: Հերթապահը՝ նոր նշանակված Ֆլիգել-ադյուտանտը, վոր փայլում էր իր նոր նշանազգեստով, աքսելրանտով, ուսածոպերով և կարմիր՝ տակավին չմաշված չերեսով, սև բարակ բեղերով, և դեպի աչքերը սանրած քունքի մազերով, ինչպես Նիկոլայ Պավլովիչն էր սանրում, պատկառանքով դիմավորեց նրան: Զինվորական մինիստրի ոգնական իշխան Վասիլիյ Դոլգորուկին բուխ դեմքի ձանձրացող արտահայտությամբ, զարդարված նույնպիսի ալտամորուքներով, բեղերով և քունքի մազերով, վորպիսին Նիկոլայն էր կրում, բարևեց նրան:

— L'empereur?... (Կնչարը), — դիմեց Չերնըշովը Ֆլիգել-ադյուտանտին, հարցական հայացք ձգելով առանձնասենյակի դռան վրա:

— Sa Majesté vient de rentre (Նորին մեծութունը նոր միայն վերադարձան), — ասաց Ֆլիգել-ադյուտանտը, չերեի բավականությամբ լսելով իր ձայնի հնչյունը և, մեղմ վոտներն այնպես սահուն փոխելով, վոր չեթե նրա գլխին ջրով լի մի բաժակ լիներ, չեր թափվիլ, մոտեցավ անձայն բացվող դռան և, իր ամբողջ հյուսթյամբ պատկառանք տածելով դեպի այն տեղը, ուր նա մտնում էր, աներևութացավ դռան չեռև: Այդ միջոցին Դոլգորուկին, իր թղթապանակը բանալով, սկսեց միջի թղթերը սուսգել: Իսկ Չերնըշովը մուսլ դեմքով անցուդարձ էր անում, վոտները փափկացնելով (разминая) և մտաբերելով այն ամենը, ինչ վոր կայսեր պետք է զեկուցել: Չերնըշովն առանձնասենյակի դռան մոտ էր, չեր այն նորից բացվեց, և այնտեղից դուրս չեկավ առաջվանից ավելի փայլուն ու պատկառալից Ֆլիգել-ադյուտանտը և ձեռի շարժումով հրավիրեց մինիստրին ու նրա ոգնականին թագավորի մոտ:

Հրդեհից հետո Չմեռային պալատը վաղուց արդեն նորոգված էր, բաց Նիկոլայը դեռևս այնտեղ վերին հարկում էր բնակվում: Այն առանձնասենյակը, ուր նա ընդունում էր զեկուցում անող մինիստրներին և բարձրագույն պաշտոնյաներին, մի շատ բարձր՝ չորս մեծ պատուհաններով սենյակ էր: Գլխավոր պատից կախված էր Ալեքսանդր Վ կայսեր մեծ պատկերը: Պատուհանների միջև չերկու բյուրո կար: Պատերի մոտ մի քանի աթոռ էր շարված, սենյակի մեջտեղում — մի անագին գրասեղան, գրասեղանի առաջ — Նիկոլայի բազկաթոռը, և աթոռներ՝ ընդունվողների համար: Նիկոլայը սև սյուրտուկով, առանց եպոլետների, կիսա-ուսազերներով, նստած էր գրասեղանի մոտ, իր անագին՝ ուռած փորով իրանը չեռ ձգած, և կենսագուրկ հայացքով անշարժ նստած էր ներս մտնողներին: Յերկայն, սպիտակ զեմքը՝ մեծ ու թեք ճակատով, վոր դուրս էր պրծնում հարթ սանրած և արվեստական կերպով կուստ գլուխը ծածկող կեղծ մազերի հետ մնացած քնքամազերի տակից, այսոր առանձնապես սառն էր և անշարժ: Նրա աչքերը, վոր միշտ պղտոր էին, այսոր սովորականից ավելի պղտոր էին նայում. ծեր շրթունքները դեպի վեր տարած բեղերի տակից և լեցուն, նոր միայն ածիրած այտերը՝ բարձր ոճիքին հենված, ականջների մոտ թողած մազերի ուղիղ ճավերով ու ոճիքին սեղմած ծնոտով հանդերձ նրա դեմքին տալիս էին դժգոհության, մինչև անգամ բարկության արտահայտություն:

Այդ դժգոհության պատճառը հուշածութունն էր: Իսկ հոգնածության պատճառն էլ այն էր, վոր նա չերեկ դիմականդեանում էր և, իր սովորության համաձայն, կավալերգարդի սաղավարտով՝ գլխին թռչուն, իրա շուրջը խոնվող և չերկչոտությամբ իրա անագին և ինքնավստահ կերպարանքից չեռ քաշվող հասարակության մեջ ման գալիս կրկին հանդիպեց այն դիմակին, վորը անցյալ դիմականդեանին, իր սպիտակությամբ, գեղանի կազմը վածքով և քնքուշ ձայնով զրգոեց նրա ծերունական հեշտասիրությունը և խոստացավ հետևյալ դիմականդեանին պատահել նրան: Յերեկվա դիմականդեանին նա մոտեցավ Նիկոլային, և սա այլևս բաց չթողեց նրան: Սա նրան տարավ հատկապես այդ նպատակի համար պատրաստի պանվող ոթյակը, ուր նա իր Թիկնոջ (գամայի) հետ կարող էր առանձնացած մնալ: Անխոս հասնելով ոթյակի դուռը՝ Նիկոլայն իր շուրջը նայեց, աչքերով սպասավորին փնտռելով, բաց սպասավորը չկար: Նիկոլայը մուսլվեց

և, ինքը դուռը հրելով, իր տիկնոջը ներս թողեց իրենից առաջ: — Il y a quelqu' un (Այստեղ մարդ կա), — ասաց զիմակը՝ կանգ առնելով:

Արդարև ոթյակը բռնված էր. թավշե փոքրիկ բազմոցի վրա, իրար կողքի նստած ելին մի ուլան սպա ու մի մատաղահաս, սիրուն, շիկագանգուր կլին՝ դոմինո հագած, առանց զիմակի: Նիկոլայի բարկացկոտ ուղղածիդ կերպարանքը տեսնելով՝ շիկաներ կինը իսկուհն զիմակը հագավ: Իսկ ուլան սպան սարսափահար լեղած, տեղից չբարձրանալով, անշարժ աչքերով Նիկոլային էր նայում:

Չնայելով վոր Նիկոլայը շատ էր ընտելացել այն սարսափին, վոր ինքը պատճառում էր մարդկանց, և այդ սարսափը միշտ ախորժելի չէր նրան, սակայն նա սիրում էր չերբեմն սարսափահար լեղած մարդկանց ապշեցնել նրանց ուղղած սիրալիք խոսքով: Այնպես էլ արավ այժմ:

— Իե, չեղբայր, դու ինձանից ջահել ես, — ասաց նա սարսափից արձանացած չերիտասարդին, — կարող ես տեղդ ինձ տալ:

Սպան վեր թռավ և, գունատվելով ու կարմրելով, կորացած-անխոս դուրս չեկավ ոթյակից իր զիմակի լետեից, և Նիկոլայը մնաց իր տիկնոջ (դամալի) հետ մենակ:

Դիմակը մի սիրուն քսան տարեկան անմեղ աղջիկ դուրս չեկավ՝ մի շվեդացի դաստիարակչուհու դուստր: Այդ աղջիկը Նիկոլային պատմեց, թե ինչպես դեռևս չերխաչուծվուհից՝ պատկերներին հիման վրա, սիրահարվել և նրան, պաշտել և վորոշել, ինչպես էլ լինի, նրա ուշադրությունը արժանանալ: Յեվ անա արժանացավ, և այժմ իրեն, ինչպես ինքն էր ասում, այլևս վոչ մի բան հարկավոր չի: Այդ աղջիկը տարվեց այնտեղ, ուր Նիկոլայը սովորաբար տեսակցութուն էր ունենում կանանց հետ, և Նիկոլայը նրա հետ մի ժամից ավելի ժամանակ անց կացրեց:

Յերբ այդ գիշեր նա իր սենյակը վերադարձավ և պատկեց իր նեղ ու կոշտ անկողնում, վորով պարծենում էր նա, և ծածկըվեց իր թիկնոցով, վոր նա նու չնքան, — և այդպես էլ ասում էր, — նշանավոր էր համարում, վորքան և Նապոլեոնի գլխարկը, չերկար քնել չկարողացավ: Նա մերթ մտաբերում էր այդ որիորդի սպիտակ դեմքի չերկչոտ և բերկրալից արտահայտությունը, մերթ իր մշտական սիրուհու՝ Նելիդովայի ուժեղ, լիք-լիքը ուսերը, և համեմատում էր մեկին մյուսի հետ: Վոր ամուսնացած մարդու ցոփությունը լավ բան չի, նրա մտքով անգամ չէր անցնում, և

նա շատ կզարմանար, չեթե մեկն ու մեկը դրա համար նրան դադարաբեր: Բայց, չնայելով վոր նա հավատացած էր, թե վարվել է այնպես, ինչպես վայել է, նրա մեջ մի տեսակ զկուտուք էր մնացել, և այդ զգացումը խլացնելու համար նա սկսեց մտածել այն մասին, ինչ վոր նրանց շատ հանգստացնում էր. թե ինքը ինչ մեծ մարդ է:

Չնայելով վոր նա ուշ քնեց, ժամը ութին վեր կացավ և իր սովորական հարգարանքն անելուց հետո՝ մեծ և կուշտ մարմին սառուց քսեց և սպա աստուհու աղոթեց — նա ասաց իր սովորական, մանկութունից արտասանվող աղոթքները՝ «Աստվածածին», «Հավատամ», «Հալը մեր», վոչ մի նշանակություն չտալով՝ արտասանած խոսքերին — փոքր դուհից դեպի գետափը դուրս չեկավ՝ վերարկվով ու գլխարկով: Գետափին նրան պատահեց իրավագիտութան ուսուցիչարանի մի աշակերտ՝ համազգեստով ու շլայով: Յերբ նա տեսավ ուսուցիչարանի համազգեստը, վրբ ազատամտութան պատճառով չէր սիրում, Նիկոլայ Պավլովիչը հանքերը կիտեց, բայց աշակերտի բարձր հասակը և չուանդալի բարեձևությունը և պատիվ տալը՝ նրա դժգոհությունը մեղմացրին:

- Ի՞նչպես է ազգանունդ, — հարցրեց նա:
- Պոլոսատով, ձերդ կալսերական մեծություն:
- Կարիճ:

Աշակերտը շարունակ կանգնած էր՝ ձեռը շլայալի մոտ բռնած: Նիկոլայը կանգ առավ:

- Ուզո՞ւմ ես զինվորական ծառայություն մտնել:
- Ամենևին վո՛չ, ձերդ կալսերական մեծություն:
- Տխմար:

Յեվ Նիկոլայը, չերեսը շուռ տալով, առաջ գնաց և սկսեց առաջին իսկ պատահած խոսքերն արտասանել: «Կոպերվին, Կոպերվինո», — կրկնեց նա մի քանի անգամ չերկեկա որիորդի անունը:

«Գարշելի չե, գարշելի չե»: Նա չէր մտածում, թե ինչ էր ասում, այլ խլացնում էր իր զգացումը՝ ասածի վրա ուշադրություն զարձնելով: «Այո, առանց ինձ Ռուսաստանը ինչ կլիներ», — ասաց նա ինքն իրեն, զգալով, վոր դժգոհ զգացումը մոտենում է: «Այո, առանց ինձ ի՞նչ կլիներ վոչ միայն Ռուսաստանը, այլև Յեվրոպան»: Յեվ նա մտաբերեց իր աներձագին, պրուսացոց թագավորին, և նրա թուլությունն ու հիմարությունը, և գլուխն որսրեց:

Վերադարձին նա տեսավ Յելենա Պավլովայի փակ կառքը,

վոր կարմրագգեստ սպասավորի հետ մոտենում եր Սայթըվովի շքամուտքին: Նրա համար Յելենա Պավլովնան այն դատարկ մարդկանց անձնավորումն էր, վորոնք խոսում են վոչ միայն գիտութիան, բանաստեղծութիան, այլ և մարդկանց կառավարելու մասին, չերևակայելով, թե իրենք ավելի լավ կարող են իրենց կառավարել, քան թե նա, Նիկոլայն էր իրենց կառավարում: Նա գիտեր, թե վորքան ել վոր ճնշում էր այդ մարդկանց, նրանք դարձյալ ու դարձյալ վեր են բարձրանում: Յեվ նա հիշեց իր՝ նոր մեռած Միխայիլ Պավլովիչ չեղորը: Յեվ մի անախորժ և վշտալի գգացում համակեց նրան: Նա մռայլեց ու կրկին սկսեց առաջին պատահած խոսքերը շնջալ: Շնջալ դադարեց այն ժամանակ միայն, չերբ պալատը մտավ:

Մտնելով իր կացարանը և հայելու առաջ ականջների մոտ չեղած բակներարդները, քուճի մագերն ու կատարին դրած կեղծ մագերը կարգի բերելուց հետո՝ նա բեզերն ոլորելով գնաց ուղղակի իր առանձնասենյակը, ուր ղեկուցումներ էր ընդունում:

Ամենից առաջ նա ընդունեց Չերնըշովին: Նիկոլայի դեմքից և վոր գլխավորն է, աչքերից Չերնըշովի իսկույն հասկացավ, վոր այսոր նա առանձնապես վատ տրամադրություն մեջ է և, իմանալով նրա չերեկվա արկածը, հասկացավ, թե ինչից էր այդ առաջ գալիս: Չերնըշովին սառը բարևելուց և նստել հրավիրելուց հետո Նիկոլայը իր կենսագրուկ աչքերը հռեց նրա վրա:

Չերնըշովի ղեկուցման առաջին գործը վերաբերում էր համբարակային վարչության պաշտոնյաների նոր բացված գողութիանը, չերկրորդը՝ պրուսական սահմանի վրա գործեր տեղափոխելուն, հետո գալիս էր նոր-տարվա համար այն միքանի անձանց պարզեներ նշանակելը, վորոնք մոտացվել էին առաջին ցուցակում, ապա Վորոնցովի ղեկուցումը՝ Հալի-Մուրադի ուսաց կողմնանցնելու մասին և, վերջապես, պրոֆեսսորի կյանքի դեմ մահափորձ կատարող բժշկական ճեմարանի ուսանողի անախորժ գործը:

Նիկոլայը լուռ, շքթուճքները սեղմած, իր մեծ սպիտակ ձեռով, վորի անանուն մատին կար մի մատանի, հարթում էր թղթի թերթերը և լուռ գողութիան գործը, աչքը չհեռացնելով Չերնըշովի ճակատից ու ցցունքից:

Նիկոլայը համոզված էր, վոր գողանում են ամենքը: Նա գիտեր, վոր հենց այժմ հարկավոր է պատժել համբարակային պաշտոնյաներին, ու վճռեց նրանց բոլորին զինվոր տալ, բայց նա նույնպես գիտեր, վոր այդ արգելք չի կարող լինել նրանց տե-

ղը բունդներին նույնն անելու: Աստիճանավորների հատկութունն է գողանալ, իսկ իրա պարտականութունն է նրանց պատժել և, չնայելով վոր այդ բոլորը նրան ձանձրացրել էր, բայց և այնպես նա այդ պարտականութունը բարեխղճությամբ էր կատարում:

— Յերևում է, վոր մեզ մոտ Ռուսաստանում մի ազնիվ մարդ կա միայն, — ասաց նա:

Չերնըշովի իսկույն հասկացավ, վոր այդ միակ ազնիվ մարդը Ռուսաստանում ինքը Նիկոլայն էր, և հավանությամբ ժպտաց:

— Յերևի այդպես է, ձերդ մեծութուն, — ասաց նա:

— Թող, չես կմակագրեմ, — ասաց Նիկոլայը և թուղթը վերցնելով սեղանի ձախ կողմը դրեց:

Դրանից հետո Չերնըշովը սկսեց ղեկուցել պարզեարշտունների և զորքի տեղափոխություն մասին: Նիկոլայը ցուցակը նայեց, միքանի անուն ջնջեց և ապա կարճ ու կտրուկ կարգադրեց, վոր չերկու ղիվիզիա տեղափոխեն պրուսական սահմանագլուխ:

Նիկոլայը վոչ մի կերպ չեր կարողանում ներել պրուսացոց թագավորին՝ 48 թ. նրա տված սահմանադրությունը և, այդ պատճառով թե նամակներում և թե խոսքով ամենամտերմական զգացումներն արտահայտելով իր աներձագին, նա հարկավոր էր համարում պրուսական սահմանագծի վրա համենայն դեպս զորք ունենալ: Այդ զորքերը կարող էին հարկավոր լինել և այն ժամանակ, չերբ Պրուսիայում ապստամբություն ծագեր. — Նիկոլայը ամեն տեղ տեսնում էր ապստամբության պատրաստություն, — ինքը այդ զորքը կշարժեր՝ աներձագի դահը պաշտպանելու, ինչպես նա զորք շարժեց Ալստրիան հունդարացիների դեմ պաշտպանելու: Սահմանի վրա այդ զորքերը հարկավոր էին և նրա համար, վոր պրուսացոց թագավորին իր տված խորհուրդներին առավել ևս կշիռ ու նշանակություն տար:

«Այո, թե՛ կլինեք այժմ Ռուսաստանի վիճակը, չեթե չես չլինելի» — կրկին մտածեց նա:

— Դե, ելի թե՛ կա, — ասաց նա:

— Կովկասից սուրհանդակ, — ասաց Չերնըշովը և սկսեց ղեկուցել այն, ինչ Վորոնցովը գրել էր Հալի-Մուրադի դուրս գալու մասին:

— Այ՛ թե ինչ, — ասաց Նիկոլայը: — Կավ սկզբնավորություն:

— Ակներև է, վոր ձերդ մեծության կազմած ծրագրին իբ պրուսացիներն է սկսում տալ, — ասաց Չերնըշովը:

Նիկոլային առանձնապես ախորժիկ էին գովասանքները:

ուղղամագիտական ընդունակութիւններ յատկին, վորովհետեւ, թեպէտ նա պարծենում էր իր ուղղամագիտական ընդունակութիւններով, բայց սրտի խորքում գիտակցում էր, վոր այդ ընդունակութիւնները չկային: Յեղ աշխատում էր ավելի մանրամասն գովասանքներ լսել իր մասին:

— Դժէ ինչպէս ես հասկանում,—հարցրեց նա:

— Այսպէս եմ հասկանում, վոր, չեթե ձերը մեծութիւն ծրագրին վաղուց հետեւած լինելինք՝ աստիճանաբար, թեև դանդաղ, առաջ շարժվել, անտառները կտրելով, պաշարները վոչընչացնելով, կողկասը վաղուց արդեն հպատակված կլինեի: Հաջի-Մուրադի դուրս գալը չես միայն դրան եմ վերագրում: Նա հասկացել է, վոր այլևս դիմադրել չեն կարող:

— Ճիշտ է,—ասաց Նիկոլայը:

Չնայելով վոր անտառները կտրելու և մթերքները վոչնչացնելով թշնամու շրջանում գանդադրեն առաջ շարժվելու ծրագրերը Յերմոլովինն ու Վելիամիրնովինն էր, բոլորովին հակառակ Նիկոլայի ծրագրին. վորի համաձայն միանգամից պետք էր տիրել Շամիրի աթոռանիստին և ավազակների այլ բունը քարուքանդ անել, և վորի համաձայն 1845 թ. արշավանք էր ձեռնարկված զեպի Դարգո, վոր այնքան մարդկային կյանք արժեցալ, չնայելով դրան՝ Նիկոլայը գանդաղ առաջ շարժվելու, անտառները հետևողաբար կտրելու և մթերքները վոչնչացնելու ծրագրերը նույնպէս իրեն էր վերագրում: Թվում է, թե հավատալու համար, վոր գանդաղ առաջ գնալու, անտառները կտրելու և մթերքները վոչընչացնելու ծրագրերն իրա ծրագրերն էր, հարկավոր էր ծածկել այն, ինչ վոր հենց նա չէր պնդում 45 թ. բոլորովին հակառակը՝ պատերազմական ձեռնարկութիւն ժամանակ: Բայց նա այդ չէր թագցնում և պարծենում էր թե 45 թ. արշավանքի իր ծրագրով և թե գանդաղ առաջ գնալու ծրագրով, չնայելով վոր այդ չէր կու ծրագրերներն ակնհայտորեն հակասում էին միմյանց: Նրան շրջապատող մարդկանց մշտական, բացահայտ, ակներև զգվելի շողքորթութիւնն այնտեղն էր հասցրել նրան, վոր իր հակասութիւններն այլևս նա չէր տեսնում, իր վարմունքներն ու խոսքերը արդեն իրականութիւն, տրամաբանութիւն կամ միջնակ անգամ հասարակ առողջ բանականութիւն հետ չէր համակերպում, այլ հավատացած էր, թե իր բոլոր կարգադրութիւնները, վորքան էլ անմիտ, անարդար և անտրամաբան են, այնուամենայնիվ է՛ իմաստալից, է՛ արդարացի, է՛ միմյանց հետ համաձայն էին դառ-

նում սոսկ այն պատճառով, վոր նա չէր նրանց այդպէս դարձնողը:

Այդպէս էր և նրա վորոշումը բժշկական-անդամահատական ձեռնարանի ուսանողի գործի մասին, վոր Չերնըշովը կովկասյան գործից հետո սկսեց զեկուցել:

Բանն այն էր, վոր մի չերիտասարդ, չերկու անգամ չկարողանալով քննութիւնը տալ, քննվել էր չերրորդ անգամ և, չերք քննողը դարձյալ թողել էր նրան, հիվանդոտ-նշարդոտ ուսանողը՝ անարդարութիւն տեսնելով դրա մեջ, սեղանի վրայից վերցրել էր գմելին և մոլեգնութիւն բորբոքման ժամանակ հարձակվել էր պրոֆեսորի վրա և միքանի աննշան վերք հասցրել նրան:

— Ի՞նչպէս է ազգանունը,—հարցրեց Նիկոլայը:

— Բժեղովսկի:

— Լէ՛հ է:

— Լեհական ծագումից է և կաթոլիկ,—պատասխանեց Չերնըշովը:

Լեհերին չարիք նա շատ էր պատճառել: Այդ չարիքը բացատրելու համար հավատացած պետք էր լինել, վոր բոլոր լեհերը անպիտան մարդիկ են: Յեղ Նիկոլայը այդպէս էր համարում նրանց ու ատում էր, և ատում էր նրանց հասցրած չարիքի չափով:

— Մի փոքր սպասեցեք,—ասաց նա և, աչքերը խփելով, գլուխը կախեց:

Չերնըշովը գիտեր՝ միքանի անգամ Նիկոլայից լսած լինելով, վոր, չերք մի կարևոր հարց և հարկավոր լինում վճռել, միայն միքանի ակնթարթ է պետք կենտրոնանալու համար, և վոր այդ ժամանակ ներշնչումն էր իջնում նրա վրա, և ամենաճիշտ վճիռը կալանում էր ինքնըստինքյան, կարծես թե մի ինչ-վոր ներքին ձայն ասելիս լինել, թե ինչ պետք է անել: Այժմ նա մտածում էր, թե լեհերի նկատմամբ տածած չարութիւնը զգացմանը, վոր շարժվեց նրա մեջ այդ ուսանողի պատմութիւնից, ինչպէս լիուլի բավարարութիւն տար, և ներքին ձայնը հետևյալ վորոշումը թելադրեց նրան:

Նա վերցրեց զեկուցագիրը և իր խոշոր ձեռագրով գրեց լուսանցքի վրա:

«ԱՐԺԱՆԻ յե մահվաճ պատժի: Բայց, փառս ասուծո, մեզ մոս մահվաճ պատժ չկա: Յեղ յես հո չեմ մեցնելու: Հազար մարդու ԵԱՐԲԻ միջից 12 անգամ՝ անցկացնել: Նիկոլայ», ու իր անբնական, ահագին ստորագրութիւնը գրեց:

Նիկոլայը գիտեր, վոր 12 հազար հարվ է՛ ծը վոչ միայն հա-

վաստի, տանջող մահ էր, այլև ավելորդ անգթութիւն, վորովհետեւ հինգ հազար հարվածն էլ բավական էր ամենաուժեղ մարդուն սպանելու համար, բայց նրան հաճելի չէր անողոք կերպով խստասիրտ լինել և հաճելի չէր մտածել, վոր մեզ մոտ մահվան պատիժ չկա:

Ուսանողի մասին իր վճիռը գրելուց հետո նա թուղթը Չերնըշովին մոտեցրեց:

— Ահա, — ասաց նա, — կարդա:

Չերնըշովը կարդաց և ինչան հարգալիւր զարմանքի՝ իմաստալից վճռի առթիվ՝ գլուխը խոնարհեց:

«Ոպտավետ կլինի նրանց: Այդ հեղափոխական վոյին չես կվոչնչացնեմ, արմատախիլ կանեմ», մտածեց նա:

— Կտեմ եմ, — ասաց Չերնըշովը և, փոքր ինչ լռելուց՝ ուցցունքը շակելուց հետո, դիմեց Կովկասյան զեկուցման:

Ուրեմն ի՞նչպես կհրամայեք գրել Միխայիլ Սեմյոնովիչին:

— Հաստատ մնալ իմ սխտեմին՝ ավելի քան կարանները, վոչնչացնել պարենամթերքը Չեչնայում և անհանգստացնել նրանց արշավանքներով, — ասաց Նիկոլայը:

— Հաջի. Մուրադի նկատմամբ ի՞նչ կհրամայեք, — հարցրեց Չերնըշովը:

— Բայց չե՞ վոր Վորոնցովը գրում է, թե նրան կամենում է Կովկասում ոգտագործել:

— Արդոք վտանգավոր չի, — ասաց Չերնըշովը՝ խուսափելով Նիկոլայի հալացքից: — Վախենում եմ, վոր Միխայիլ Սեմյոնովիչը չափազանց հավատացող է:

— Իսկ դ՞եւ ինչ կասելիր, — կտրուկ հարցրեց Նիկոլայը, նկատելով Չերնըշովի դիտավորութիւնը՝ Վորոնցովի կարգադրութիւնը վատ կողմից ներկայացնելու:

— Յես կարծում եմ, վոր ավելի ապահով կլինեիր Ռուսաստան ուղարկել նրան:

— Դու կարծում ես, — հեգնորեն ասաց Նիկոլայը: — Իսկ չես չեմ կարծում, այլ համաձայն եմ Վորոնցովին: Այդպես էլ գրիւր նրան:

— Կտեմ եմ, — ասաց Չերնըշովը և, վեր կենալով, սկսեց հրաժեշտ տալ:

Հրաժեշտ տվեց և Դոլգորուկին, վոր զեկուցման ժամանակ միայն միքանի խոսք ասաց գորքի տեղափոխման մասին ի պատասխան Նիկոլայի հարցերին:

Չերնըշովից հետո ընդունվեց Արևմտյան կողմի գլխավոր-նահանգապետ Բիբիկովը, վոր չեկել էր հրաժեշտ տալու:

Ուղղափառութիւնը չընդունող և այդ պատճառով ապստամբած գլուղացիներին դեմ Բիբիկովի գործը դրած միջոցներին հավանութիւնը տալուց հետո նա հրամայեց, վոր բոլոր անհնազանդներին դատեն զինվորական դատարանով: Դա նշանակում էր նրանց շարքի միջից քշելու դատապարտել: Բացի դրանից՝ նա հրամայեց, վոր այն խմբագրին, վորը իր թերթում լուր է տպել՝ պետական գլուղացիներից միքանի հազար հոգի պալատի սեփականութիւն դարձնելու մասին, — զինվոր տանել:

— Յես այդ անում եմ, վորովհետեւ հարկավոր եմ համարում այդ. — ասաց նա: — Իսկ դատողութիւններ տալ այդ մասին՝ չես թույլ չեմ տալ:

Ունիթոռների վերաբերմամբ արած կարգադրութիւնն ամբողջ խստութիւնը Բիբիկովը հասկանում էր, հասկանում էր և պետական, այսինքն՝ միակ ազատ մարդկանց, պալատական, այսինքն՝ արքայական տոհմի ճորտերը զարձնելու անարդարութիւնը: Սակայն հակաճառել չէր կարելի: Նիկոլայի կարգադրութիւնը չհամաձայնել նշանակում էր զրկվել այն փալուն դիրքից, վոր նա ձեռք էր բերել և վաչելում էր քառասուն տարիների ընթացքում: Յե՛կ այդ պատճառով նա խոնարհութիւնը իր սե, ալիխաուն գլուխը իջեցրեց ինչան հնազանդութիւն և անգութ, անմիտ ու դրժբախտ բարձրագույն կամքը կատարելու պատրաստակամութիւն:

Բիբիկովին արձակելուց հետո Նիկոլայը լավ կատարած պարտականութիւն գիտակցութիւնը ձգվեց, ժամացույցին նայեց ու գնաց հագնվելու, վոր դուրս գար:

Ուսածոպերով, շքանշաններով և ժապավենով նշանազգեստը հագնելուց հետո նա դուրս չեկավ ընդունելութիւնը դահլիճը, ուր հարյուրից ավելի նշանազգեստներով տղամարդիկ և մերկայանջ ու մերկաթե շքեղ զգեստներով կանայք իրենց վորոշված տեղերում սրտատրոփ սպասում էին նրա դուրս գալուն:

Կենսագուրկ հայացքով, դուրս ցցված կրծքով, ձիգ կապված և ձիգ կապելու պատճառով վերեից ու ներքեից դուրս ընկած փորով՝ նա սպասողների մոտ չեկավ և, զգալով, վոր բոլորի աչքերը ստրկական չեղիւղով նրա վրայ չեն հառած, ավելի ևս հանդիսավոր տեսք ընդունեց: Աչքերով ծանոթ մարդկանց հանդիպելով և մտաբերելով, թե վորը ո՞վ է, նա կանգ էր առնում և մերթ ուսսերեն, մերթ ֆրանսերեն միքանի խոսք ասում և իր պաղ, կեն-

սագուրկ հայացքով ներթափանցելով ականջ եր դնում, թե ինչ են ասում իրեն:

Շնորհավորութունն ընդունելուց հետո Նիկոլայը չեկեղեցի գնաց:

Աստված իր սպասավորների միջոցով վողջունում եր Նիկոլային և գովաբանում, և նա, վորպես մի պարտականութուն, թեև նրան ձանձրացրած պարտականութուն, այդ վողջուններն ու գովասանքներն ընդունում եր: Այդ բոլորն այդպես ել պիտի լիներ, վորովհետև համալն աշխարհի բարորութունն ու բախտավորութունը նրանից եր կախված և, չնայելով վոր դրանից նա հողնում եր, այնուամենայնիվ նա իր աջակցութունը չեր մերժում: Յերբ պատարագի վերջում հոյակապ, սանրված սարկավազը «չերկար կյանք» մաղթեց, և չերգիչներն ել դեղեցիկ ձայներով ներգաշնակ ձայնակցեցին այդ խոսքերին, Նիկոլայը իր շուրջը նա չելով՝ նշմարեց պատուհանի մոտ կանգնած Նելիզովային՝ իր լեցուն ուսերով հանդերձ՝ և նրան չերեկվա որիորդի հետ համեմատելով՝ գտավ, վոր նրանից լավն է:

Պատարագից հետո նա կայսրուհու մոտ գնաց և միքանի բոսի անցկացրեց ընտանեկան շրջանում՝ չերեխաների և կնոջ հետ կատակներ անելով: Ապա նա Երմիտաժի միջով պալատական մինիստր Վոլկոնսկու մոտ մտավ և, ի միջի այլոց, հանձնարարեց նրան, վոր իր սեփական միջոցներից տարեկան թոշակ կապի չերեկվա որիորդի մորը: Յեվ այդտեղից նա գնաց իր սովորական գրասանքն աշխույժ:

Այդ որը հացկերույթը Պոմպեյան դահլիճումն եր. բացի վոքը վորդիներից՝ Նիկոլայից ու Միխայիլից, հրավիրված ելին—բարոն Լիվենը, կոմս Բժեուսկին, Դոլգորուկին, պրուսացոց դեսպանը և պրուսացոց թագավորի ֆրիգել-ադյուտանտը:

Մինչ սպասում ելին կայսեր և կայսրուհու դուրս գալուն, պրուսացոց դեսպանի և բարոն Լիվենի միջև հետաքրքրական խոսակցութուն սկսվեց Լեհաստանից ստացած տագնապալից լուրերի առթիվ:

— La Pologne et le Caucase ce sont les deux cathères de la Russie (Լեհաստանն ու Կովկասը Ռուսաստանի համար չերկու ուժասպառութուն են), ասաց Լիվենը: — Il nous faut 100.000 hommes à peu pris dans chaque de ces deux pays (Այդ չերկու չերկրներից յուրաքանչյուրում մենք տանվազն 100.000 մարդ պիտի ունենանք):

Դեսպանը կեղծ զարմանք արտահայտեց, վոր այդ այդպես ես — Vous dites, la Pologne (Դուք ասացիք, Լեհաստանը), — ասաց նա:

— Oh, oui, c'était un coup de maître de Maeternich de nous en avoir laissé l'embaras (Ոհ, այո, Մետերնիխի կողմից դա մի ճարպիկ քալ էր մեզ դժվարութուններ պատճառելու):

Սոսակցութան այդ տեղում ներս մտավ կայսրուհին՝ դողդոջուն գլխով ու պաղած ժպտով, նրա չետեից և Նիկոլայը: Ճաշի ժամանակ Նիկոլայը պատմեց Հաջի-Մուրադի ուսաց կողմնանցները և թե Կովկասի պատերազմը այժմ շուտով պիտի վերջանա նրա արած կարգադրութունների շնորհիվ, վոր անտառները կտրտելով և ամրութունների սխտեմով լեռնականներին նեղացնեն:

Դեսպանը, վոր դեռևս այսոր առավոտյան խոսակցութուն եր ունեցել պրուսացոց ֆրիգել-ադյուտանտի հետ Նիկոլայի իրեն մեծ ուղեմագետ համարելու դժբախտ թուլության մասին, այժմ, միմյանց վրա թուլցիկ հայացք ձգելուց հետո, շատ գովեց այդ ծրագրերը, թե մի անգամ ևս Նիկոլայի ուղեմագետական մեծ ընդունակութուններն է ապացուցանում:

Ճաշից հետո Նիկոլայը գնաց պարահանդես, ուր հարչուրավոր մերկ կանաչք, արիկո հագած՝ շրջում ելին քայլառքալ: Մեկըն ստանձնապես դուր չեկավ նրան, և, պարի զեկավարին իր մոտ կանչելով, Նիկոլայը իր գոհունակութունը հայտնեց նրան և հրամայեց, վոր ազամանդներով մի մատանի ընծային նրան:

Հետևյալ որը Չերնըշովի զեկուցման ժամանակ Նիկոլայը նորից սնդեց Վորոնցովին արած իր կարգադրութունը, վոր այժմ, չերբ Հաջի-Մուրադը դուրս է չեկել, սաստիկ նեղեն Չեչնան և ողակելով՝ սեղմեն:

Այդ մտքով ել Չերնըշովը գրեց Վորոնցովին, և մի ուրիշ սուրհանդակ, ձիերին կոտորելով և կառապանների դեմքերն արյունաշաղախ անելով՝ սլացավ գեպի Թիֆլիս:

XVI

Նիկոլայ Պավլովիչի այս հրամանագրութունը կատարած լինելու համար՝ անհապաղ, 1852 թ. հունվարին արշավանք սկսվեց գեպի Չեչնա:

Արշավանքի համար նշանակված զորախումբը բաղկացած եր չորս հետևակ զուամարտակներից, չերկու հարյուր կազակներից և ութը թնդանոթից: Ճանապարհով գնում եր գորասուլունը: Չո-

քասյունի չերկու կողմից անընդհատ շղթայով, ձորերն իջնելով և բարձրանալով՝ գնում ելին չեզերները՝ վորսկան հրացանաձիգները, բարձր կոշիկներ, կիսամուշտակներ հագած և փափախներ դրած, հրացաններն ուսերին և փոկից կախած փամփուռներով պայուսակներով: Զորախումբը, ինչպես միշտ, գնում էր թշնամու հողով, հնարավոր լուծվուն պահպանելով: Միայն չերեմն փոս տեղերից անցնելիս թնդանոթները ցնցումներից գնդգնդում ելին, կամ թե լուծվուն պահպանելու հրամանը չհասկացող թընդանոթակիր ձին էր փնջացնում ու խրխնջում, կամ խուլոտ, զրսպված ձայնով դալրացած հրամանատարն էր աղաղակում ստորագրյալներին վրա, վոր շղթան չափազանց ձգվել է կամ չափազանց մոտ կամ թե շատ հեռու չե գնում գորասյունից: Խաղաղութունը միայն մի անգամ խանդարվեց նրանով, վոր շղթայի և գորասյունի միջև գտնված փշոտ մացառներից դուրս թռավ սպիտակ փորով և գորշ մեջքով մի եգ այծյամ, և մի այգպիսի չել վորձ ալծյամ՝ դեպի մեջքը ծոված փոքրիկ պողերով: Միրուն, վախկոտ կենդանիները՝ առջևի վոտները ծալած, խոշոր վոստուններով այնչափ մոտեցան գորասյունին, վոր զինվորներից միքանիսը աղաղակներով ու քրքիջով նրանց չետեից վազեցին՝ սվիններով սպանելու: Բայց այծյամները չեա դարձան, շղթայի միջից դուրս պրծան և, միքանի ձիավոր զինվորների և վաշտի շների կողմից հետապնդվելով, սլացան դեպի սարերը:

Դեռևս ձմեռ էր, բայց արևը սկսում էր ավելի վեր բարձրանալ և կեսօրին, չերր առավոտյան վաղ դուրս չեկած գորախումբը արդեն չորս վերստ էր արել, այնպես էր տաքացնում, վոր շոգ էր անում, և նրա ճառագայթներն այնքան վառ ելին, վոր մարդու աչքեր ցավում ելին, չերր նայում էր սվինների պողպատին և այն ճաճանչներին, վորոնք փոքրիկ արեգակների պես էանկարծակի առկայծում ելին թնդանոթների պղնձի վրա:

Յետևում՝ գորախմբի նոր միայն անցած՝ արագահոտ, վճիտ գետակն էր. առջևում—վոչ խոր ձորակների մեջ հերկած արտերըն ու մարգագետիններն ելին. ել առաջ—խորհրդավոր, սև-սև սարեր՝ անտառներով ծածկված. սև սարերից դենը—դարձյալ դուրս ցցված ժայռեր և բարձր հորիզոնում հավետ չքնաղ, հավետ փոփոխական, ազամանդի պես շողշողուն ձյունապատ լեռներ:

Հինգերորդ վաշտի առջևից գնում էր սև սյուրտուկ հագած, փափախը ցցած և ուսից թուրը կախած՝ գվարդիայից նոր այգտեղ տեղափոխված, բարձրահասակ, գեղեցիկ սպա Բուտլերը, վոր

զգում էր կյանքի բերկրանքի կաշտառ զգացումը և միաժամանակ մահվան վտանգը և գործունեություն փափազը և այն գիտակցությունը, թե ինքը մասնակից է մի անագին, մի կամքով կառավարվող ամբողջության: Բուտլերը այժմ չերկրորդ անգամ էր գործի մեջ մտնում և նա կարծում էր, թե անա իսկուհն կսկսեն իրենց վրա հրացաններ արձակել, և թե նա վերևից թռչող ուռմբի տակ վոչ միայն գլուխը չի խոնարհի կամ թե գնդակների սուր լոցների վրա ուղադրություն չի դարձնի, այլ, ինչպես դեպք չեղել էր արդեն, նա գլուխը վեր կբարձրացնի և ժպտուն աչքերով կնայի ընկերներին ու զինվորներին և ամենաանտարբեր ձայնով կխոսի նրանց հետ մի վորևե բոլորովին կողմնակի նյութի մասին: Զորախումբը լավ ճանապարհից դուրս չեկավ և մտավ քիչ անցուդարձ ունեցող մի ուրիշ ճանապարհ, վոր սիմինդրի խոզանի միջից էր անցնում, և սկսեց մոտենալ անտառին, չերը—չերևաց թե ինչ տեղից—չարագուշակ շլյունով մի ուռմբ թռավ, ճանապարհի մոտ չեղած սայլախմբի մեջտեղը դիպավ և սիմինդրի դաշտում հողի մեջ փոս փորեց:

— Մկավում ե,—ուրախ ժպտալով ասաց Բուտլերը հետը գնացող ընկերով:

Յեվ արգարև, ուռմբից հետո անտառի չետեից ձիավոր չեչենների մի խումբ դուրս չեկավ՝ գրոշակներով: Խմբի մեջտեղում մի մեծ կանաչ գրոշակ կար, և վաշտի ձեռ ֆելդֆերելը, վոր շատ հեռահայաց էր, հայտնեց կարճատես Բուտլերին, թե դա, չերևի, ինքը Շամիրն է: Խումբը իջնում էր սարի ստորոտը, չերևաց նա մոտակա աջակողմյան ձորակի զլխին ու սկսեց ցած իջնել: Սև տաք սյուրտուկ հագած և սպիտակածայր փափախ գրած կարճահասակ գեներալը՝ իր կողքանց գնացող ձիով մոտեցավ Բուտլերին և հրամայեց նրան, վոր գնա դեպի աջ՝ ցած իջնող ձիավորների դեմ: Բուտլերը իր վաշտը արագ տարավ ցուց տված ուղղությամբ, բայց դեռ ձորակը չեր իջել, չերը չետեից թնդանոթի չերկու պայթյուն լսեց: Նա չետ նայեց. կապույտ ձիի չերկու ամպ բարբրացան չերկու թնդանոթի վրայից և տարածվեցին ձորակի չերկայնությունը: Խումբը, չերևի, թնդանոթաձգություն չեր սպասում, ու չետ գնաց: Բուտլերի վաշտը սկսեց կրակել լեռնականների վրա, և ամբողջ ձորակը լցվեց վառողի ձխով: Միայն ձորակի վերևում կարելի չեր տեսնել, թե ինչպես լեռնականները նահանջում են շտապով և հետամուտ չեղող կազակներից պաշտպանվում հրացանաձգությամբ: Զորախումբը շարունակեց

իր ճանապարհը՝ լեռնականոններին հետևելով, և չերկրորդ ձորակի լանջին չերևաց մի առևր:

Կազակների չտակից անմիջապես Բուսուբերը իր վաշտով վազեվազ առելը մտավ: Բնակիչներից վոչվոք չկար: Զինվորներին հրամայված էր, վոր հացը, խոտը և խրճիթները կրակ տան: Ամբողջ գյուղում աչք կուրացնող ծուխ էր կանգնած, և այդ ծխի մեջ վխտում էլին զինվորները և խրճիթներից հանում ամեն բան, ինչ վոր գտնում էլին, իսկ գլխավորապես բռնոտում կամ գնդակահարում էլին հավեր, վոր լեռնականները չէլին կարողացել տանել իրենց հետ: Սպանները ծխից հեռու նստած թե նախաճաշեցին և թե խմեցին: Ֆելդֆերելը տախտակի վրա միքանի խորխոխ մեղր բերավ: Չեչեններ ամենևին չէլին չերևում: Հրամայված էր կետրից քիչ անցած ճանապարհ ընկներ: Վաշտը գյուղից դուրս գորասուլուն կազմեց, և Բուսուբերը ստիպված մնաց վերջում: Հենց վոր շարժվեցին, չեչեններն էլ չերևացին և գորքին հետևելով՝ ուղեկցեցին նրան կրակոցներով:

Յերը գորքը դուրս չեկավ մի բաց տեղ, լեռնականները չտանացին: Բուսուբերի մարդկանցից վոչվոք չէր վիսավել, և նա վերադառնում էր ամենաուերախ ու գվարթ արամադրությամբ: Յերը գորախումբը նորից վոտքով կտրեց անցավ օտալոտյան անցած գետակը ու ձգվեց սիմինդրի արտերում և մարգերում, վաշտի չերգիչները առաջ չեկան, և չերգեր թնդացին: Քամի չկար, ողբ թարմ էր, մաքուր և այնչափ թափանցիկ, վոր հարուր վերստաչափ հեռու գտնվող ձյունապատ լեռները չերևում էլին բոլորովին մոտիկ, և չերը չերգիչները լուռ էլին, լսվում էր քայլերի հավասարաչափ դոփուլուն և թնդանոթների զնգզնոց, վորպես մի ֆոն, վորի վրա չերգը սկսվում ու կանգ էր առնում: Բուսուբերի վաշտում չերգվող չերգը մի չունկեր էր հորինել ի փառս գնդի և չերգվում էր պարերգի չեղանակով, չուրաքանչյուր տունից հետո հետևյալ վերջերգն ունենալով. «То ли де ло, то ли дело, егеря, егеря»:

Բուսուբերը գնում էր ձիով իր մերձավոր իշխանավորի՝ մաչոր Պետրովի կողքից, վորի հետ միասին և ապրում էր, և նրա ուրախությունը սահման չունեց, վոր վճռել էր գվարդիալից դուրս գալ և կովկաս գնալ: Գվարդիալից փոխադրվելու գլխավոր պատճառն այն էր, վոր նա Պետերբուրգում թղթախաղում այնպես էր տանուլ տվել, վոր մոտը վոչինչ չէր մնացել: Նա վախենում էր, վոր, չեթե գվարդիալում մնար, ուժ չէր ունենալ թղթախաղից

չէտ կենալու, իսկ տանուլ տալու համար այլևս վոչինչ չունեց: Այդ բոլորն արդեն վերջացել էր, այժմ ուրիշ կյանք էր և շատ լավ, կտրիճի կյանք: Այժմ նա իր սնանկությունն էլ էր մոռացել, իր անվճար պարաքերն էլ: Յեկ կովկասը, պատերազմը, զինվորները, սպաները, հարբած ու բարեսիրտ քաջերը, մաչոր Պետրովը, — այդ ամենը այնպես լավ էր թվում նրան, վոր չերբեմն նա չէր հավատում, թե Պետերբուրգում չէ, ծխով լի սենյակներում թղթախաղի ժամանակ անկյուններ չէ ծալում և խաղապետի դեմ խաղում, ատում նրան և գլխում ձնոց ցավ գգում, այլ այստեղ է, այս սքանչելի չերկրում, կտրիճ կովկասցիների շրջանում:

«То ли дело, то ли дело, егеря, егеря», չերգում էլին նրա չերգիչները: Այդ չերաժշտության ժամանակ նրա ձին էլ ուրախ-ուրախ էր քայլում: Վաշտի բրդոտ շունը, գորշ Տրեգորկան, կարծես հրամանատար, պոչը վոլորած, մտադրաղ տեսքով վազում էր Բուսուբերի վաշտի առջևից: Բուսուբերի հոգին գվարթ էր, անգորր և ուրախ: Պատերազմը նրա համար այն էր, վոր նա իր անձը վտանգի, մեռնելու հնարավորության էր լենթարկում և զրանով արժանանում և՛ պարգևների, և՛ այստեղի ընկերների ու ուսու մտերիմների հարգանքին: Պատերազմի մյուս կողմը՝ մահը, զինվորների, սպաների, լեռնականների վերքերը, վորքան էլ տարորինակ է ասել, նա չէր էլ չերևակայում: Նա մինչև իսկ անգիտակցաբար, վորպեսզի պահպանի պատերազմի մասին ունեցած իր բանաստեղծական պատկերացումը չերբեք չէր նայում սպանվածների և վիրավորվածների վրա: Այդպես էլ այսօր: Մեջքի վրա ընկած գեակի կողքից նա անցավ և միայն մի աչքով տեսավ մոմի պես ձեռքի տարորինակ դրությունը և գլխի մութ կարմիր բիծը և էլ չըիտեց: Նրա համար լեռնականները միայն ձիավոր ջիգիտներ էլին, վորոնցից հարկավոր էր պաշտպանվել:

— Այ, ինչպիսի բաներ կան, — ասում էր մաչորը, չերը չերգերը ընդհատվում էլին: — Ենպես չի, ինչպես ձեզ մոտ Պիտերում՝ մեկ հավասարում անջ, մեկ հավասարում ձախ: Այ, նեղություն քաշեցին, հիմի չեկ գնում են տուն: Այժմ Մաշուրկան լավ կարկանդակ, լավ շէի կտա, կյանք եմ ասում հա: Այնպես չէ: Դեհ, «Как возняжась заря», — հրամայեց չերգել նա իր սիրած չերգը:

Մաչորը ամուսնական կյանքով ապրում էր բուժակի աղջկա հետ, վոր առաջ Մաշկա չէր կոչվում, իսկ հետո Մարիա Դմիտրիևնա: Մարիա Դմիտրիևնան մի գեղատեսիլ, շիկահեր, ամբողջովին

պեպենոտ լերեսնամյա անդալակ կին եր: Ինչպես ել լիներ նրա անցյալը, այժմ նա մայրիկ հավատարիմ ընկերն եր, դաշակի պես խնամում եր նրան,— և մայրին, վոր հաճախ խմում եր գիտակցութեանը կորցնելու չափ, հենց այդ ել հարկավոր եր:

Յերը բերդը վերադարձան, ամեն ինչ այնպես չեղավ, ինչպես մայրն եր նախատեսում: Մարիա Դմիտրիևնան նրան, Բուտիբին և գորքից հրավիրած ելի ուրիշ լերկու սպալի կերակրեց իր կուշտ, համեղ ճաշով, և մայրն այնքան կերավ ու խմեց, վոր այլևս խոսել չեր կարողանում, և իր սենյակը գնաց քնելու: Բուտիբը նուշնպես հոգնած, բայց դո՛ս և, միքիչ ել ավելորդ շիտիկ խմած լինելով, իր սենյակը գնաց և հագլով կարողացավ շորերը հանել, ձեռի ափը գեղեցիկ գանգուր գլխի տակ դնելով, խորը քնեց՝ առանց լերագներ տեսնելու և արթնանալու:

XVII

Արշավանքից ավերված աուլը այն իսկ աուլն եր, ուր գիշերեց Հաջի-Մուրադը ուսանելի մոտ դուրս գնալու նախընթաց գիշերը:

Մադոն, վորի մոտ կանդ եր առել Հաջի-Մուրադը, ընտանիքի հետ սարերը գնաց, չերը ուսաները մոտենում ելին աուլին: Յերը Մադոն գլուղը վերադարձավ, իր խրճիթը նա քարուքանդ գտավ, կտուրը թափվել եր, դռներն ու ծածքի սյուները այրվել էին, իսկ ներսը սպաղանաված եր: Նրա վորդին, այն սիրուն, փայլուն աչքերով տղան, վոր Հաջի-Մուրադին նայում եր հիացած, լափնչով ծածկված՝ նրան մեծած ձիով մղկիթի մոտ ելին բերել: Նրա մեջքը սվին ելին խրել: Այն բարեկազմ կինը, վոր Հաջի-Մուրադի այցելութունների ժամանակ սպասավորում եր, այժմ լանջը պատռտած շապկով, վոր մերկացնում եր նրա ձեք, կախ ընկած ստինքները, հերարձակ կանգնած վորդու մոտ՝ լերեսը ճանկատում-արշուճոտում եր ու կոծում միալար: Մադոն՝ բահն ու թին վերցրած՝ ազգականների հետ գնաց վորդու համար գերեզման փորելու: Ծերունի պապը ավերված խրճիթի պատի մոտ նստած՝ մի փաշտ եր տաշում և, ապուշ դարձած, առջևը նայում: Նոր եր միայն նա իր մեղվանոցից վերադարձել: Այնտեղ չեղած խոտի լերկու գեղը կրակել էին, տնկած և արդեն մեծացրած ձիբանիներն ու բալենիները կարտված և խանձված ելին և, վոր գլխավորն ե, փեթակներն իրենց մեղուներով այրված ելին: Լավում եր կանանց լացն ու կոծը: Փոքրիկ լերիխաները պոռում ելին

իրենց մայրերի հետ միասին: Բառաչում եր և սովալլուկ անասունը, վորին տալու բան չկար: Չափահաս լերիխաները չեղին խաղում, այլ վախեցած աչքերով նայում էին մեծերին:

Ջրհորը ապականված եր, հավանորեն դիտմամբ, այնպես վոր այնտեղից ջուր վերցնելն անկարելի չեր: Նուշնպես սպաղանաված եր և մղկիթը, և մոլլան մութախիմների հետ մաքրում եր այն: Ռուսներին առելու մասին վոչվոք չեր խոսում: Փոքրից սկսած մինչև մեծը՝ բոլոր չեչենների ապրած զգացումը ատելութունից վեր եր: Դա վոչ թե առելութունն եր, այլ այդ ուս շներին նրանք մարդ չեղին համարում, և դա մի այնպիսի զզվանք, գարշանք և այդ ելակների անհեղեղ խոտաարտութունների առաջ մի ապշութունն եր, վոր նրանց բնաջինջ անկուր ցանկութունը, ինչպես մեծ մկներ, թունավոր մամուկներ, գալիբ վոչնչացնելու ցանկութունը, նուշնպես բնական ցանկութունն եր, ինչպես և անձնապաշտպանության զգացումը: Բնակիչները պիտի ընտրելին չերկուսից մեկը, կամ նրանք իրենց տեղերում պիտի մնալին և սարսափելի ջանքերով վերականգնելին այն բոլորը, ինչ վոր մեծ աշխատանքով եր գլուխ բերված և այնպես հեշտ ու անմիտ կերպով ավերված, ամեն մի բույե սպասելով, վոր նուշնը կրկնվի, կամ թե հակառակ կրոնական որենքների և դեպի ուսաները տածած զզվանքի ու ատելության զգացման՝ հպատակվելին նրանց:

Ծերերը ազոթեցին և միաձայն վորոշեցին Շամիլի մոտ պատգամավորութուն ուղարկել, նրանից ոգնութուն խնդրել, և անմիջապես ձեռնամուխ չեղան ավերվածները վերականգնելու:

XVIII

Արշավանքի հետևյալ որը առավոտյան՝ արդեն վոչ շուտ, Բուտիբը լեռին դռնից դուրս լեկավ փողոց՝ մտադիր լինելով դրոսնել և ոզ ծծել մինչև առավոտյան թեյը, վոր նա սովորաբար խմում եր Պետրովի հետ միասին: Արեգակը արդեն դուրս եր չեկել սարերի քամակից, և աչքերը ցավում ելին, չերը մարդ նայում եր նրանով լուսավորված սպիտակ, կավածեփ տներին, բայց դրա փոխարեն, ինչպես և միշտ, ուրախալի և հանգստացուցիչ եր նալի դեպի ձախ՝ հեռացող ու բարձրացող անտառապատ սարերին և անփայլ ձյունապատ լեռներին, վորոնք, ինչպես միշտ, թվում ելին ամպեր:

Բուտիբը նայում եր այդ սարերին, լիաթոք ող եր ծծում և ուրախանում, վոր նա ապրում և, ապրում է հենց ինքը և այն

ել այդ գեղատեսիլ վայրում: Միքիչ էլ ուրախանում եր նրա համար, վոր չերեկ գործի ժամանակ նա այնպես լավ եր պահում իրեն, թե գրոհ տալիս և թե չես նահանջելիս, չերբ կոխվը բավական տաքացել եր. ուրախանում եր հիշելով նաև այն, թե ինչպես չերեկ, արշավանքից վերադառնալուց հետո, Մաշան կամ Մարիա Դմիտրիևնան, Պետրովի կենակիցը, հյուրասիրում եր նրանց և շատ պարզ ու սիրալի չեր ամենքի հետ, բայց մանավանդ, ինչպես նրան եր թվում, սիրալի չեր իր հետ: Մարիա Դմիտրիևնան՝ իր հաստ ծամով, լայն ուսերով, բարձր կրծքով և պեպենոտ բարի դեմքի փայլուն ժպտով ակամա գրավում եր Բուտլերին, վորպես մի ուժեղ ջանել ամուրի մարդու, ու Բուտլերին մինչև անգամ այնպես եր թվում, թե նա ցանկանում ե իրեն: Բայց բարի, պարզամիտ ընկերոջ նկատմամբ նա գեշ բան եր համարում այդ և Մարիա Դմիտրիևնայի հետ վարվում եր ամենապարզ կերպով և հարգանքով, և դրա համար ինքն իրենից գոհ եր: Այժմ ել նա դրա մասին եր մտածում:

Նրա միտքը գրավեց առջևում՝ թողստ ճանապարհին լավող բազմաթիվ ձիերի ամբակների տրոփուները, կարծես արշավում ելին մի բանի մարդ: Նա գլուխը բարձրացրեց և փողոցի ծայրին տեսավ համարաքայլ մոտեցող ձիավորների մի խումբ: Մոտավորապես չերկու տասնյակ ձիավորների առաջից գալիս ելին չերկու մարդ. մեկը սպիտակ չերքեսկաչով և չալմաչապատ չերկար փափախով, իսկ մյուսը՝ ուռսաց ծառայության մի սպա, սև, կորաքիթ, հագուստի և գենքի վրա արծաթե բազմաթիվ զարդեր: Չալմաչով ձիավորի տակին մի գեղեցիկ շառատ, բաշն ու պոչը բաց գույնի նժույգ եր՝ փոքրիկ գլխով և սիրուն աչքերով՝ սպաչի տակին՝ մի բարձր, վաչելչակազմ Ղարաբաղի ձի չեր: Բուտլերը, վոր ձիերի սիրահար եր, իսկույն գնահատեց առաջին ձիու կալտառ ուժը և կանգ առավ խմանալու, թե ինչ մարդիկ ելին: Սպան գլխեց Բուտլերին:

— Այս և զինվորական հրամանատարի տունը. — հարցրեց նա՝ խոսելով առանց հոլովելու և այնպիսի առողջանությամբ, վոր մատնում եր իր վոչ ուռսական ծագումը: Բուտլերն ասաց, թե հենց այս ե:

— Իցի սո ով ե, — հարցրեց Բուտլերը, սպաչին մոտենալով և աչքերով չալմաչով մարդու վրա ցույց տալով:

— Հաջի-Մուրադն ե: Յեկել ե այստեղ. զինվորական հրամանատարի մոտ հյուր կլինի, — ասաց սպան:

Հաջի-Մուրադի և նրա՝ ուռսների մոտ գալու մասին Բուտլերը լսել եր, բայց ամենևին չեր սպասում տեսնել նրան այստեղ, այս փոքրիկ բերդում:

Հաջի-Մուրադը մտերմաբար նայում եր նրան:

— Բարե, խոշոգալղի, — ասաց նա թուրքերեն սովորած վողջուհու:

— Սաուբուլ, — պատասխանեց Հաջի-Մուրադը՝ գլխով անելով: Նա մոտեցավ Բուտլերին և ձեռը, վորի չերկու մատից մըտրակն եր կախված, մեկնեց նրան:

— Հրամանատար, — ասաց նա:

— Վոչ, հրամանատարը այստեղ ե, գնամ՝ նրան կանչելու, — ասաց Բուտլերը սպաչին դիմելով և տան աստիճանները բարձրանալով՝ գուռը հրեց:

Բայց շքամուտքի գուռը, ինչպես Մարիա Դմիտրիևնան եր կոչում, փակ եր: Բուտլերը գուռը ձեծեց և, պատասխան չառաջարկով, գնաց չետին դռնով: Իր ծառային կանչեց, բայց պատասխան չեղավ, և չերկու ծառաներից վոչ մեկին չգտնելուց հետո խոհանոց մտավ: Մարիա Դմիտրիևնան՝ գլուխը թաշկինակ կապած և կաս-կարմրած, իր լիք-լիք կոնքերի վրա թեքերը վեր քաշած, իր ձեռների պես սպիտակ կլորած խմորն եր կտրատում կարկանդակների համար:

— Ո՛ւր են կորել ծառաները, — հարցրեց Բուտլերը:

— Կոնձելու չեն գնացել, — ասաց Մարիա Դմիտրիևնան: — Ի՞նչ եք ուզում:

— Դուռը բանալ. ձեր տան առաջ լեռնականների մի ամբողջ խումբ ե կանգնած: Հաջի-Մուրադն չեկել ե:

— Ելի մի բան կհնարեք, — ժպտալով ասաց Մարիա Դմիտրիևնան:

— Յես հանաք չեմ անում, ճիշտ եմ ասում: Դուան մոտ կանգնած են:

— Մի՞թե ճիշտ ե, — հարցրեց Մարիա Դմիտրիևնան:

— Հնարելու ի՞նչ կարիք ունեմ: Գնացեք, տեսեք, նա դուան մոտ կանգնած ե:

— Այ քեզ բան. — ասաց Մարիա Դմիտրիևնան, թեքերը վրա քաշելով և իր հավաքած առատ մագերի մեջ հերկալները շոշափելով: — Ուրեմն չես կգնամ Իվան Մաթվեկիչին վեր կացնենելու, — ասաց նա:

— Չե, չես ինքս կգնամ, — ասաց Բուտլերը:

— Դե, եղ ել լավ ե,— սասց Մարիա Դմիտրիևնան և նորից ձեռնարկեց իր գործին:

Իմանալով, վոր Հաջի-Մուրադը լեկել ե իր մոտ, Իվան Մաթվեկեիչը, վոր արդեն լսել եր, թե Հաջի-Մուրադը Գրողնիում ե, ամենեկին չղարմացավ, այլ տեղից բարձրանալով՝ ծխախոտ վորեց, ծխեց և բարձր հաղալով, սկսեց հազնովել և քրթննջալ իշխանութան վրա, վոր այդ սատանային ուղարկել եր նրա մոտ: Հագնվելուց հետո նա ծառայից դեղ պահանջեց: Յեվ ծառան, իմանալով դեղը ողին ե, տվեց նրան:

— Խառնուրդից ել վատ բան չկա,— մրթմըթաց նա՝ ողին խմելուց հետո սև հացը ուտելով:— Այ, չեղեկ չիխիր խմեցի, գլուխս ցավում ե: Դեհ, այժմ պատրաստ եմ,— վերջացրեց նա և դնաց հյուրասենյակը, ուր Բուտերը արդեն բերել եր Հաջի-Մուրադին ու նրան ուղեկցող սպային:

Հաջի-Մուրադին ուղեկցող սպան Իվան Մաթվեկեիչին տվեց Հաջի-Մուրադին վերաբերող ձախակողմյան թևի զորահրամանատարի հրամանը՝ ընդունել Հաջի-Մուրադին և թույլ տալ նրան լրտեսների միջոցով հարաբերություն ունենալ լեռնականների հետ, սակայն բնավ ուրիշ կերպ դուրս չթողնել նրան, քան պահակ կազմակերպի հետ:

Թուղթը կարդալով՝ Իվան Մաթվեկեիչը ակնապիշ նաչեց Հաջի-Մուրադին և կրկին սկսեց խորատուգվել գրության մեջ: Այսպես միքանի անգամ հաջացքը թղթից Հաջի-Մուրադի վրա ձգելով, նա, վերջապես, իր աչքերը հառեց Հաջի-Մուրադի վրա և սասց.

— Յախշի, բեկ, չախշի: Թող ապրի: Այդպես ել ասա նրան, թե հրամայված ե նրան բաց չթողնել. իսկ ինչ հրամայված ե, սուրբ ե: Իսկ նրան տեղավորել— ինչպես ես կարծում, Բուտեր, գրվանատանը չտեղավորենք:

Բուտերը դեռ չէր պատասխանել, չերբ Մարիա Դմիտրիևնան, վոր խոհանոցից լեկել ու կանգնել եր դռների արանքում, դիմեց Իվան Մաթվեկեիչին.

— Ինչո՞ւ համար: Տեղավորեցիք այստեղ: Հյուրասենյակը կըտանք, մեկ ել մատանը: Գոնե մեր աչքի առաջ կլինի,— սասց նա և Հաջի-Մուրադին նաչեց, և չերբ նրանց աչքերը միմյանց հանդիպեցին, շուտ չերեսը շուտ տվեց:

— Ինչ կա, չես կարծում եմ, վոր Մարիա Դմիտրիևնան իրավացի չե,— սասց Բուտերը:

— Դե, դե, գնան, կանաչը այստեղ անելու բան չունեն,— հոնքերը կիսելով սասց Իվան Մաթվեկեիչը:

Յերբ նրանք խոսում էին, Հաջի-Մուրադը ամբողջ ժամանակ նստել եր՝ ձեռք դաշուչնի կոթի չետե դրած և թեթև հեղնանքով ժպտում եր: Նա սասց, թե իր համար մեկ ե, ինչ տեղ կընակի: Նրան միայն մի բան ե հարկավոր, և սարդաբը թուլալորել ե այդ, վոր լեռնականների հետ հարաբերություն ունենա և այդ պատճառով նա կամենում ե, վոր նրանց թողնեն ինս և այդ պատճառով նա կամենում ե, վոր նրանց թողնեն իրեն մոտ: Իվան Մաթվեկեիչն սասց, թե այդ կկատարվի, և խընդրեց Բուտերին դրազեցնել հյուրին, մինչև վոր ուտելիք կրերեն և սենյակները կպատրաստեն, իսկ ինքը գիվանատուն կգնա հարկավոր թղթերը գրելու և հարկավոր կարգադրություններն անելու:

Հաջի-Մուրադի հարաբերությունը նոր ծանոթների հետ իսկույն ևեթ վորոշվեց: Հաջի-Մուրադը Իվան Մաթվեկեիչի վերաբերմամբ, առաջին իսկ ծանոթությունից հետո, զզվանք և արհամարհանք զգաց և միշտ մեծամտորեն եր վարվում նրա հետ: Մարիա Դմիտրիևնան, վոր նրա համար կերակուր եր պատրաստում և բերում, նրան դուր եր զալխ առանձնապես: Հաջի-Մուրադը հավանում իր նրա պարզությունը և նրա՝ ոտար ազգի առանձնահատուկ գեղեցկությունը և նա բնազդորեն զգում եր, առանձնահատուկ գեղեցկությունը և դեպի իրեն: Հաջի-Մուրադը Մարիա Դմիտրիևնան ձգտում և դեպի իրեն: Հաջի-Մուրադը աշխատում եր նրան չնայել, նրա հետ չխոսել, սակայն աչքերը ակամա նրա կողմն էին գտնում և նրա շարժումներին հետևում:

Իսկ Բուտերի հետ իսկույն, առաջին իսկ ծանոթությունից հետո, մտերմացավ և չերկար ու սիրով խոսում էին իրար հետ, նրա կյանքի մասին եր հարցուփորձ անում և իրենը պատմում նրան, հազորդելով և այն տեղեկությունները, վոր լրտեսները բերում էին նրա ընտանիքի մասին, և մինչև անգամ խորհրդակցում եր նրա հետ, թե ինչ անի:

Լրտեսների հազորգած լուրերը լավ չէին: Բերդում անցկացրած չորս որվա ընթացքում նրանք չերկու անգամ նրա մոտ լեկան, և չերկու անգամն ել լուրերը վատ էին:

XIX

Յերբ Հաջի-Մուրադը ուռաների կողմը անցավ, նրա ընտանիքը վեղենո առլը բերին, և այնտեղ պահվում եր պահապանների հսկողություն ներքո, սպասելով Շամիլի վճռին: Կանաչը—

պառազ Թաթխմաթը և Հաջի-Մուրադի կիսը և նրա հինգ չերե-
խաները ապրում էլին հարչուրապետ Իբրահիմ Ռաշիդի խրճիթում՝
պահապաններին հակողութչան ներքո. իսկ Հաջի-Մուրադի 18 տա-
րեկան վորդին՝ Յուսուֆը, նստած էր բանտում, այսինքն մի սա-
փենից ավելի խոր փոսում՝ լոթը վոճրագործի հետ միասին, վո-
րոնք նրա պես իրենց վիճակի վորոշմանն էլին սպասում:

Վորոշումը ուշանում էր, վորովհետև Շամիրը բացակա չեր:
Նա գնացել էր ուսանելի դեմ արշավանքի:

1852 թ. հունվարի 6-ին Շամիրը վերադարձավ առն՝ Վի-
դենո՝ ուսանելի հետ կովիլուց հետո, ուր, ուսանելի կարծիքով,
նա ջարդվեց և Վեդենո փախավ, իսկ նրա և նրա բոլոր մյուսերի-
ների կարծիքով՝ նա հաղթութչուն տարավ և ուսանելին քշեց:
Այդ կովում, վոր շատ հազիվ էր պատահում, նա հրացան արձա-
կեց և, թուրը դուրս քաշելով՝ ուզում էր ձին ուղղակի ուսանելի
վրա քշել, բայց ուղեկցող մյուսերիցները նրան բռնեցին, չթողին:
Նրանցից չերկուսը սպանվեցին հենց այդտեղ, Շամիրի մոտ:

Կեսոր էր, չերը Շամիրը մի խումբ մյուսերիցներով շրջա-
պատված, վորոնք նրա շուրջը ջիրիզ էլին խաղում, հրացաններ
և ատրճանակներ արձակում և ընդհանուր «Լա իլլահ իլ ալլահ»
չերպում, իր բնակարանը փամանեց:

Վեդենո մեծ առելի բոլոր բնակիչները փողոցներն ու կուր-
ներն էլին դուրս չեկել իրենց հրամանատարին դիմավորելու և,
վորպես նշան հանդիսավորութչան, նուշնպես հրացաններ և ա-
տրճանակներ էլին արձակում: Շամիրը գալիս էր իր սպիտակ
արաբական նոսրիկով, վոր առնք մոտենալով ուրախ-ուրախ ձիդ
էր տալիս իր սանձը: Ձիու կարգ ու սարքը շատ հասարակ էր՝
առանց վոսկե և արծաթե զարդարանքների, — նուրը կարմիր կա-
շուց սանձ՝ մեջտեղում փոս գիծ, բաժակաձև մետաղե ասպան-
դակներ և թամբի տակ — կարմիր չափրադ: Իմամը հագել էր չերեսը
զարչնագուշն մահուրով ծածկած մուշտակ, վորի վզի մոտ և թե-
վերի վրա չերեում էր սև մորթի, բարակ ու չերկաչն իրանը ձիդ
կապված էր սև գոտիով՝ դաշուշնի հետ միասին: Գլխին մի բարձր,
ծայրը հարթ, սև փնջով փափախ էր՝ սպիտակ չալմաչով փաթաթ-
ված, վորի մի ծայրը ընկնում էր վզի վրա: Վոսաներին կանաչ
չուվակներ էլին, իսկ սրունքներին նեղ սոնապաններ, ամեն
կողմից հասարակ թելով կարած:

Առնասարակ վոչ մի պապղուն, վոսկե կամ արծաթե բան
չկար իմամի վրա, և նրա ուղիդ, բարձր ու հուժկու անպաճուշճ

զգեստով կերպարանքը մյուսերիցներով շրջապատված, վորոնք
վոսկե և արծաթե զարդարանքներ ունեչին շորերի և գենքերի
վրա, վեհութչան այն իսկ սպավորութչունն էր գործում, վոր նա
ցանկանում էր և կարողանում էր թողնել փողովրդի վրա: Գու-
նատ, շառագուշն մորուքով շրջապատված նրա դեմքը՝ մշտապես
կկոցած փոքրիկ աչքերով, բոլորովին անշարժ էր, ասես թե քա-
րից լիներ: Առելի միջով անցնելիս նա զգում էր, վոր հազարա-
վոր աչքեր են հառած իր վրա, բայց նրա աչքերը վոչվոքի չեչին
նայում: Խրճիթի մյուս բնակիչների հետ Հաջի-Մուրադի կանաչքն
էլ պատշգամ էլին դուրս չեկել իմամի մուտքը տեսնելու: Մենակ
պառավ Թաթխմաթը՝ Հաջի-Մուրադի մայրը, դուրս չեկավ: Նա
մնաց նստած իր տեղում, ինչպես վոր, ճերմակ մազերն արձակ,
նստել էր խրճիթի հատակին: Նիհար ծնկները չերկաչն ձեռներով
գրկած և, իր հրացաչտ սև աչքերը թարթելով՝ նայում էր վառա-
բանում այրվող ցախերին: Վորպու պես նա չել միշտ առում էր
Շամիրին, իսկ այժմ առավել ևս, քան առաջ, նրան տեսնել չեր
ուզում:

Շամիրի հանդիսավոր մուտքը չտեսավ և Հաջի-Մուրադի վոր-
դին: Իր մութ, հոտած փոսից նա միայն հրացանաձգութչուններն
ու չերգեցողութչուններն էր լսում և տանջվում, ինչպես ազա-
տութչունից զրկված կենսալի չերիտասարգներն են տանջվում,
չոտած փոսում նստելով և շարունակ միևնուշն թշվառ, կեղտոտ:
հլուժված և իր հետ միասին բանտարկված չար, ըստ մեծի մասին
միմյանց ատող մարդկանց տեսնելով, այժմ նա սաստիկ նախան-
ձում էր այն մարդկանց, վորոնք՝ ող, լուչս և ազատութչուն վա-
չելելով, կաշտառ ձիերի վրա հրամանատարի շուրջն էլին ճախ-
րում, հրացան արձակում և ներդաշնակ «Լա իլլահ իլ ալլահ» չեր-
գում:

Առելն անցնելուց հետո Շամիրը ներքին բակին կից մեծ
բակը մտավ, ուր նրա ապարանքն էր: Յերկու գիւնված չեզգի ա-
ռաջին բակի բաց դռների մոտ դիմավորեցին Շամիրին: Ժողովուր-
դը լցրել էր բակը: Այդտեղ կաչին հեռու տեղերից իրենց գործե-
րով չեկած մարդիկ, կաչին և խնդրարկուներ, կաչին և այնպիսի-
ները, վորոնց Շամիրն էր կանչել ավել՝ դատաստան ու վճիռ կա-
չացնելու համար: Յերը Շամիրը մտավ, բակում բոլոր գտնվողնե-
րը վոաքի կանգնեցին և ակնածութչամբ վողջունեցին իմամին,
ձեռները կրճքների վրա դնելով: Վոմանք չոքեցին և այդպես մնա-
ցին, մինչև վոր Շամիրը բակի միջով անցավ՝ մի — արտաքին դռնից

մինչև մյուսը—ներքինը: Թեպետ Շամիրը սպասողներին մեջ ճանաչեց իրեն անախորժ շատ մարդկանց և շատ տաղտկալի խնդրարկուններին, վորոնք խնամք անել են պահանջում իրենց մասին, բայց նա անփութօխ քարե դեմքով անցավ նրանց մտոխց և ներքինբակը մտնելուց հետո ձիուց իջավ իր բնակարանի պատշգամբմոտ: Արշավանքի վոչ այնքան Փիղիկական, վորքան հոգեկան լարումից հետո, վորովհետև Շամիրը, թեպետ հրապարակով իր արշավանքի հաղթութիւնն էր խոստովանում, գիտեր, վոր արշավանքնանհաջող էր, վոր չհշնաների շատ աուլներն ալրված և ավերված էլին, և փոփոխական, թեթևամիտ ժողովուրդը՝ չհշնաները, տատանվում են և նրանցից միքանիսները՝ ուսաներին ավելի մոտգտնվողները, արդեն պատրաստ էլին նրանց կողմն անցնելու,—այդ բոլորը շատ ծանր էր, դրա դեմ միջոցներ պետք էր ձեռք առնել սակայն այդ բոպելին Շամիրը վոչ մի բանի վրա մտածել չէր ուզում: Այժմ նա միայն մի բան էր ուզում,—հանգստութիւն և իր կանանցից ամենասիրելի՛ 18-ամյա սեւաչյա, արագաքայլ քիստունի Ամինեթի ընտանեկան փաշիպանքի վաղելքները ¹:

Բայց վոչ միայն չէր կարելի մտածել Ամինեթին այժմ տեսնել, վոր ալգտեղ էր՝ ներքին բակում կանանց բաժանմունքը տղամարդկանց բաժանմունքից զատող ցանկապատի մյուս կողմում (Շամիրը հավատացած էր, վոր մինչև անգամ այժմ, չէր նա իջնում էր ձիուց, Ամինեթը մյուս կանանց հետ միասին նալում էր ցանկապատի ձեղքից): Բայց վոչ միայն չէր կարելի նրա մոտ գնալ —

¹ Շամիրը չէր եք կին ունեք՝ Զայդեթ, Շուանեթ և Ամինեթ: Զայդեթը նրա առաջին, այսինքն նրա ավագ կինն էր, վորին հնազանդվում էին Շամիրի վորդեքն ու ծառաները: Յերկրորդ կինը՝ Շուանեթը, աղգով հայ էր՝ մողղոկցի մի հարուստ վաճառականի դուստրը, վոր իր ամբողջ գերդաստանով գերի յեր ընկել Շամիրը մոտ: Հայ վաճառականը հարյուր հազար ուրլի յետալիս ազատվելու համար, բայց Շամիրը՝ հավանած լինելով գեղատեսիլ որբորդին, չհամաձայնից փողով ազատութիւն տալ, այլ միայն այն պայմանով, վոր աղջկը նրա կինը լինի: Շուանեթը տալիս է իր հավանութիւնը, և ամուսնութիւնը կայանում է:

Ֆրանսիացի վիպասան Գյուման իր «La Caucase» գրքի մեջ ասում է, թե Շուանեթը պահագան հրեշտակ էր Շամիրը մոտ գտնվող գերիների և գերուհիների համար: Ծավճավճե և Որբելիտնի իշխանուհիների պահագանն էր նա և նրանց մխիթարելը՝ ձեռից յեկածն անելով նրանց համար: Յերբորդ կինը, Ամինեթը, վորին ամուսնացան պատճառով Շամիրը հետո թողեց, ամենագեղեցիկն էր: Սակայն Ամինեթը այն ժամանակ չէր Շամիրի կինը, չէր վիպակում պատճաճ յեղելութիւններն էլին կատարվում, այլ ավելի ուշ, քան — 1854 թ. («Ճուարագ», 1859, №10):

չէր կարելի նաև փախուկ գոշակներին վրա պառկել և հոգնածութիւնից հանգստանալ: Պետք էր կետորվա նամազը կատարել, վորի համար նա այժմ վոչ մի տրամադրութիւն չունէր, բայց վոչ միայն անկարելի չէր չկատարել վորպես ժողովրդի կրոնական առաջնորդ, այլ և նուշնիսկ նրա համար անհրաժեշտ էր, ինչպես ամենորջա կերակուրը: Յեւ նա կատարեց լվացման կարգն ու աղոթքը: Աղոթքը վերջացնելով՝ նա կանչեց իրեն սպասողներին:

Առաջինը ներս մտավ նրա աները և ուսուցիչը՝ մի բարձրահասակ, ալեգարդ, վալելչատես ծերունի՝ ձյունի պես ճերմակ մորուքով և կարմիր չերեսով՝ Զեմալ-Եղգինը և, ասածուն աղոթելուց հետո, սկսեց Շամիրին հարցուփորձ անել արշավանքի դեպքերի մասին և պատմել, թե նրա բացակայութեան ժամանակ ինչ և կատարվել սարերում:

Այլ և այլ անցքերի թվում — վրեժխնդրական սպանութիւնների, անասունների զոդութեան, թարիքաթի պատվիրանները չկատարելու՝ ծխելու և գինի խմելու համար մեղադրվածների, — Զեմալ-Եղգինը հաղորդեց, վոր Հաջի-Մուրադը մարդիկ և ուղարկել՝ ընտանիքը սուսների մոտ տանելու, բայց այդ բանը իմացվեց, և նրա ընտանիքը բերված և վեդեհնո, ուր պահվում է հսկողութեան տակ, իմամի վճռին սպասելով: Կողքի սենյակում հավաքված էին ծերունիներ այդ բոլոր գործերը քննելու համար, և Զեմալ-Եղգինը խորհուրդ տվեց Շամիրին այսոր ևեթ նրանց բաց թողնել, վորովհետև արդեն չէր եր ուր, ինչ նրանք սպասում էին նրան:

Իր սենյակում ճաշելով, վոր մատուցեց նրան նրա ավագ կինը՝ սրաքիթ, սև, անախորժ դեմքով և նրա չսիրած Զայդեթը, Շամիրը գնաց հյուրասենյակը:

Նրա խորհուրդը կազմող վեց մարդիկը՝ ալեուր, ալիխանն ու հրաշեկ միրուքներով ծերունիները, չայմանելով ու առանց չայմանելի, բարձր փափախներ դրած և նոր բեշմեթներ ու չերքեսկաներ հազած, գոտիից կապած դաշուշներով, վեր կացան նրան գիմալօրիլու: Շամիրը նրանցից ամբողջ գլխով բարձր էր: Նրանք ամենքը, ինչպես և նա, ձեռների ափերը դեպի վեր բարձրացրին և աչքերը լսփած աղոթք ասացին, ապա չերեսները ձեռքերով շփեցին, մորուքների վրալով ցած տարան և մեկը մյուսի հետ միացրին: Այդ էլ վերջացնելուց հետո ամենքը նստան, Շամիրը — մեջտեղում, ավելի բարձր բարձի վրա, և սկսվեց բոլոր գործերի քննութիւնը:

Վոճրագործութունները համար մեղադրվող անձանց գործերը վճռվում եյին շարիաթի համաձայն. գողութեան համար չերկուսին դատապարտեցին՝ ձեռները կտրելու, սպանութեան համար մեկին՝ զլխատելու, չերեքին ներուհն շնորհեցին: Ապա դիմեցին գլխավոր գործին՝ միջոցներ խորհել, վոր չեչենները չանցնեն ուսաների կողմը: Այդ բանին հակադրելու համար Ձեմալ-Եղզինը պատրաստել էր հետեւյալ կոչը.

«Հալխտեանկան խողադութուն եմ ցանկանամ ձեզ ամենակարող աստուծո հետ: Յես լսում եմ, վոր ուսները սիրաշահում են ձեզ և հրավիրում հնազանդութեան: Մի հավատաք նրանց և մի հպատակվեք, այլ համբերեցեք: Յեթե այս կյանքում դրա համար չվարձատրվեք, ապա հանդերձյալ կյանքում դուք կատանաք ձեր պարգևը: Մտաբերեցեք, թե ինչ էր առաջ, չերը ձեզանից խլում եյին գենքերը: Յեթե այն ժամանակ, 1840 թ., աստված ձեզ չխելօքացներ, դուք արդեն ուսս զինվորներ կլինելիք, իսկ ձեր կանայք կըրջելին առանց վարտիքների և անարգված կլինելին: Համբերեցեք, և չես դուռանով ու թրով կգամ ձեզ մոտ և ձեզ ուսաների դեմ կտանեմ: Բայց այժմ խոտիվ հրամայում եմ, վոր վոչ միայն մտադրութուն չունենաք, այլ և չմտածեք ուսաներին հպատակվելու»:

Շամիլը հավանեց այս կոչը և, ստորագրելով, վորոչեց տարածել:

Այս գործերից հետո քննվեց և Հաջի-Մուրադի գործը: Շամիլի համար այդ գործը շատ կարևոր էր: Թեպետ նա խոստովանել չեր ուզում, բայց գիտեր, վոր, չեթե Հաջի-Մուրադը՝ իր ճարպիկութեամբ, խիզախութեամբ ու քաջութեամբ իրա հետ լիներ, Ձեչնայում չեր պատահիլ այն, ինչ վոր պատահեց: Հաջի-Մուրադի հետ հաշտվել և նորից ոգտվել նրա ծառայութուններին՝ լավ էր. իսկ չեթե այն անկարելի չեր, այնուամենայնիվ չեր կարելի թուլլ տալ, վոր նա ուսաներին ոգներ: Յեվ այդ պատճառով համենայն դեպս նրան պետք էր կանչել և կանչելուց հետո՝ սպանել: Դրա միջոցն այն էր, վոր Թիֆլիս մի այնպիսի մարդ ուզարկեր, վոր այնտեղ նրան սպաներ, կամ թե այստեղ կանչեր և այստեղ վերջ տար նրան: Դրա միակ միջոցը նրա ընտանիքն էր և, գլխավորապես, վորդին, վորին, Շամիլն այդ գիտեր, Հաջի-Մուրադը սաստիկ սիրում էր: Այդ պատճառով պետք էր գործել վորդու միջոցով:

Յերբ խորհրդականները նրա մասին խոսեցին, պրծան, Շամիլը աչքերը խփեց և լռեց:

Սորհրդականները գիտելին, վոր այդ նշանակում է, թե նա այժմ ունկնդրում է մարգարելի խոսող ձայնին, վոր ասում է, թե ինչ պետք է անել: Հինգ րոպե հանդիսավոր լուսթյունից հետո Շամիլը աչքերը բացեց, ավելի ևս կկոցեց նրանց և ասաց.

- Ինձ մոտ բերեք Հաջի-Մուրադի վորդուն:
- Նա այստեղ է,— ասաց Ձեմալ-Եղզինը:

Յեվ արդարեւ, Յուսուֆը, Հաջի-Մուրադի վորդին, նիհար, գունատ, պատուտված ու գարշահոտած, բայց մարմնով և դեմքով տակավին գեղեցիկ, սևորակ աչքերով, վորոնք նուչնպես կրակուելին, ինչպես Փաթիմաթ տատինը, արդեն կանգնած էր արտաքին բակի դռան մոտ և սպասում, վոր կանչեն:

Շամիլի վերաբերմամբ Յուսուֆը այն զգացումները չուներ, ինչ վոր նրա հայրը: Բոլոր անցած-գարձածը նա չգիտեր, կամ չեթե գիտեր էլ, սակայն ինքը կրած չլինելով, չեր հասկանում, թե ինչու հայրը այդպիսի կամակորութեամբ թշնամութուն էր անում Շամիլի հետ: Նրան, վոր միայն մի բան էր ցանկանում՝ շարունակել այն թեթեւ, զվարճասեր կյանքը, վոր նա, ինչպես նախրի վորդի վարում էր Սունդախում, — Շամիլի հետ թշնամութուն անելը ըլլորովին ավելորդ էր թվում: Հակառակ և ընդդեմ՝ հորը, նա առանձնապես հիացած էր Շամիլով և դեպի նա սարելում տարածված խանդավառ չերկրպագութեան զգացմունքն ուներ: Այժմ՝ արտատրոփ ակնածութեան մի առանձին զգացումով լցված՝ դեպի իմամը՝ նա հյուրասենյակը մտավ և դռան մոտ կանգնելով՝ հանդիպեց Շամիլի կկոցած, սևեռուն հայացքին: Նա միքիչ կանգնեց, ապա մոտեցավ Շամիլին և համբուրեց նրա մեծ չերկայն, մատներով սպիտակ ձեռը:

- Դձու չես Հաջի-Մուրադի վորդին:
- Յես եմ, իմամ:
- Դու գիտե՞ս, թե ինչ է արել հայրդ:
- Գիտեմ, իմամ, և ցավում եմ այդ առթիվ:
- Դրել գիտե՞ս:
- Յես պատրաստվում եյի մոլլա դառնալու:
- Ուրեմն գրիբ հորդ, վոր, չեթե նա այժմ, մինչև Բայրամ, չես գա ինձ մոտ, չես նրան կներեմ, և ամեն ինչ առաջվա պես կլինի: Իսկ չեթե չի գա և կմնա ուսաների մոտ, ապա — Շամիլը սարսափելի խոժոռեց դեմքը — սատիղ, մորդ աուլներին կտամ, իսկ քո գլուխը կկտրեմ:

Յուսուֆի դեմքի վոչ մի մկանունքը չզոզաց: Նա գլուխը

խոնարհեց ի նշան այն բանի, թե հասկացավ Շամիրի խոսքերը:

— Այգպես ել գրիր և աուր իմ սուրհանդակին:

Շամիրը լռեց և չեղար նաեց Յուսուֆին:

— Գրիր, թե լես քեզ խղճացի և չեմ սպանիլ, այլ աչքերդ կհանեմ, ինչպես բոլոր գավաճաններինն ևմ հանում: Գնն:

Յուսուֆը Շամիրի ներկայութեանը հանդիստ եր չերևում, իսկ չերբ հյուրասենյակից նրան տարան, նա հարձակվեց տանողի վրա, դաշուհնը պատյանից դուրս քաշեց, ուղեց իրեն մորթել, բայց նրա ձեռքը բռնեցին, կապեցին և դարձյալ փոսը տարան:

Այդ չերեկո իրիկվա աղոթքը վերջացավ ու մթնեց, Շամիրը հագավ սպիտակ մուշտակը և անցավ ցանկապատի մյուս կողմը, — գնաց բակի այն մասը, ուր նրա կանաչքն ելին բնակում, և իր քայլերն ուղղեց դեպի Ամինեթի սենյակը: Բայց Ամինեթն այնտեղ չեր: Նա ավագ կանանց մոտ եր: Այն ժամանակ Շամիրը, աշխատելով աննկատելի մնալ, սենյակի դռան լեռնում կանգնեց, սպասելով նրան: Բայց Ամինեթը նրանից նեղացել եր, վոր մետաքսե կտորը նրան չընծայեց, այլ Չալգեթին: Նա տեսավ ինչպես Շամիրը դուրս չեկավ և ինչպես իրա սենյակը մտավ, իրեն փնտռելով, ու նա դիտմամբ իր սենյակը չգնաց: Յերկար ժամանակ նա կանգնած եր Չալգեթի սենյակի դռան մեջ ու, կամաց ծիծաղելով, նայում եր Շամիրի սպիտակ կերպարանքին, վոր մերթ դուրս եր գալիս, մերթ ներս մտնում: Զուր տեղը նրան սպասելուց հետո՝ Շամիրը իր սենյակը վերադարձավ արդեն կեպիշերալին աղոթքի ժամանակ:

XX

Բերդում, Իվան Մաթվեկեիչի տանը, Հաջի-Մուրադը սարեց մի շարաթ: Չնայելով վոր Մարիա Դմիտրիենան շարունակ կովում եր վորչոտ Խանեֆիի հետ (Հաջի-Մուրադը հետը միայն չերկուսին ևր վերցրել—Խանեֆիին և Ելզարին) և մի անգամ խոհանոցից դուրս քշեց նրան, վորովհետև քիչ եր մնացել նա մորթեր Մարիա Դմիտրիենային, — վերջինս հարգանքի և համակրութեան ակններև դպացումն եր տածում դեպի Հաջի-Մուրադը: Այժմ արդեն նա չեր կերակուր մատուցում Հաջի-Մուրադին. այդ հոգսը հանձնել եր Ելզարին, բայց Մարիա Դմիտրիենան ամեն մի առիթից ոգավում եր նրան տեսնելու և հաճոյանալու: Նրա ընտանիքի վերաբերյալ բանակցութուններին նա ջերմ մասնակցութուն եր ցույց տալիս, գիտեր, թե քանի կին, չերխա ուներ, քանի տարեկան ելին, և ամեն անգամ չերը լրտեսներ ելին այցելում

Հաջի-Մուրադին, նա ամեն մեկին, ում վոր կարող եր, հարցուվորձ եր անում բանակցութունների հետևանքի մասին:

Այդ շարաթ Բուտլերը բոլորովին մտերմացավ Հաջի-Մուրադի հետ: Յերբեմն Հաջի-Մուրադը նրա սենյակն եր գալիս, չերբեմն ել Բուտլերն եր նրա սենյակը գնում: Յերբեմն նրանք թարգմանի միջոցով ելին գրույց անում, իսկ չերբեմն իրենց սեփական միջոցներով՝ նշաններով և, առավելապես, ժպիտներով:

Ակներև եր, վոր Հաջի-Մուրադը Բուտլերին սիրել եր: Այդ չերևում եր և Ելզարի վերաբերմունքից դեպի Բուտլերը: Յերբ Բուտլերը Հաջի-Մուրադի սենյակն եր մտնում, Բուտլերին դիմափորում եր Ելզարն, իր փայլուն առամիտերը ուրախ-ուրախ ցցելով, և շտապ-շտապ բարձր եր գնում նրա տակը և թուրն եր հանում, չեթե վրան եր լինում:

Բուտլերը ծանոթացավ և բարեկամացավ փրչոտ Խանեֆիի՝ Հաջի-Մուրադի անվանյալ չեղոր հետ: Խանեֆին լեռնցիների չերգերից շատ գիտեր և լավ ել չերգում եր: Բուտլերին հաճույք պատճառելու համար Հաջի-Մուրադը կանչում եր Խանեֆիին և հրամայում չերգել, տալով այն չերգերի անունները, վորոնք նա համարում եր լավ: Խանեֆիի ձայնը բարձր տենոր եր, և նա չերգում եր արտասովոր պարզութեամբ ու արտահայտիչ կերպով: Այդ չերգերից մեկն առանձնապես դուր եր գալիս Հաջի-Մուրադին և իր հանդիսավոր տխուր չեղանակով զարմացրեց Բուտլերին. Բուտլերը խնդրեց թարգմանին, վոր չերգի բովանդակութունը պատմի:

Յերգը վերաբերում եր արչան վրեժխնդրութեան, — այն իսկ վրեժխնդրութեան, վոր կար Խանեֆիի և Հաջի-Մուրադի միջև:

Այգպես եր այդ չերգը:

— Այգպես ե հարկավոր: Աղաթը այգպես ե, — ասաց Հաջի-Մուրադը:

— Ե՛հ, շնորհակալ եմ, — ասաց Մարիա Դմիտրիենան, վերցնելով լավինջին: — Ասոված տա, վոր ձեր վորդուն ազատեք, — ավելացրեց նա: — Ուլան լախի, — շարունակեց նա, — ասացեք նրան, թե լես ցանկանում եմ, վոր նա ընտանիքն ազատի:

Հաջի-Մուրադը Մարիա Դմիտրիենային նաեց և գլուխը շարժեց սիրալիբ: Հետո նա թուրը առավ Ելզարից և Իվան Մաթվեկեիչին տվեց: Իվան Մաթվեկեիչը թուրը ընդունեց և ասաց թարգմանին.

— Ասա նրան, վոր իմ կուտած մոխրագուն ձին վերցնի, վոխարենը ուրիշ բան չունեմ ընծայելու:

«Հողը իմ մարմինը կվերցնի, չերկինքը հողիս կընդունի»:

Այս լերգը Հաջի-Մուրադը լսում էր միշտ փակ աչքերով, և չերբ նա չերկար ու ձիզ, մարող ձայնով վերջանում էր, միշտ ուստերեն ասում էր.

— Хорош песня, умный песня (Լավ լերգ է, խելոք լերգ է):

Լեոնական կյանքի առանձնահատուկ պոեզիան, Հաջի-Մուրադի գալուց և նրա ու նրա մուրիդների հետ մտերմանալուց հետո, ավելի ևս համակեց Բուսուբերին: Իրեն համար նա բեշմեթ, չերքեսկա, սոնապաններ ձեռք բերեց: Նրան թվում էր, թե ինքն էլ լեոնական էր և նույնպիսի կյանքով էր ապրում, ինչպես և այդ մարդիկ:

Հաջի-Մուրադի գնալու ուրը Իվան Մաթվեյկիչը միքանիսպա հավաքեց նրան ճանապարհ դնելու համար: Սպաներից վորը նստած էր թեչի սեղանի մոտ, ուր թեչ էր ածում Մարիա Դմիտրիենան, վորը մյուս սեղանի մոտ, ուր ողի կար, չիխիր և ալուատ, չերը Հաջի-Մուրադը ճանապարհորդական շորով արագ, մեզմ քայլերով սենյակ մտավ, մի վոտի վրա կազալով:

Ամենքը վոտքի կանգնեցին և, հերթով ձեռք մեկնելով, վողջունեցին նրան: Իվան Մաթվեյկիչը հրավիրեց նրան թախտի վրանստի, բայց նա, շնորհակալութունը հայտնելով, նստեց պատուհանի մոտ՝ աթոռի վրա: Նրա մտնելուց հետո տիրած լուսթյունը, չերևում էր, նրան ամենևին չեր շփոթում: Նա ուշ-ուշով նաչեց բոլորի դեմքերին և անտարբեր հայացքը կանգնեցրեց աչն սեղանի վրա, ուր դրված էին ինքնաչեռն ու ալուատները: Աշխուժ սպա Պետրոկովսկին, վոր առաջին անգամ էր տեսնում Հա-

ջի-Մուրադին, թարգմանի միջոցով հարցրեց նրան. «Ե՛հ, սառնորդից ար շարժե՞ր: Հնայնելով վոր Մարիա Դմիտրիենան շարունակ կովում էր փրչոտ Խանեֆիի հետ (Հաջի-Մուրադը հեռը միայն չերկուսին էր վերցրել—Խանեֆիին և Ելզարին) և մի անգամ խոհանոցից դուրս քշեց նրան, վորովհետև քիչ էր մնացել նա մորթեր Մարիա Դմիտրիենային,—վերջինս հարգանքի և համակրության ակներև զգացումն էր տածում դեպի Հաջի-Մուրադը: Այժմ արդեն նա չեր կերակուր մատուցում Հաջի-Մուրադին. այդ հոգսը հանձնել էր Ելզարին, բայց Մարիա Դմիտրիենան ամեն մի առիթից ոգավում էր նրան տեսնելու և հաճույանալու: Նրա ընտանիքի վերաբերյալ բանակցութուններին նա ջերմ մասնակցութուն էր ցույց տալիս, գիտեր, թե քանի կին, չերխա ուներ, քանի տարեկան էին, և ամեն անգամ չերը լրտեսներ էին այցելում

— Ի՞նչ է, չի՞ հավանել:

— Մենք մի առած ունենք,—ասաց նա թարգմանին,—չունը եշին մտով և կերակրել, եշն էլ շանը խոտով,—չերկուսն էլ քաղցած են մնացել:—Նա ժպտաց:—Յուրաքանչյուր ժողովրդի համար իր սովորութունն է լավ:

Խոսակցութունն էլ չշարունակեց: Սպաներից վորը թեչ էր լսում, վորը—ուտում: Հաջի-Մուրադը վերցրեց առաջարկված մի բաժակ թեչը ու առջևը դրեց:

— Ինչո՞ւ սեր, հաց չեք վերցնում,—ասաց Մարիա Դմիտրիենան՝ մեկնելով նրան:

Հաջի-Մուրադը գլուխը խոնարհեց:

— Այսպես, ուրեմն, գնաս բարով,—ասաց Բուսուբըրը նրա ծունկը շփելով:—Յե՛րբ կտեսնվենք:

— Մնաս բարով, մնաս բարով,—ժպտալով ասաց ուսներեն Հաջի-Մուրադը:—Կունակ բիլիր: Կունակդ պինդ է: Փամանակը հնչրա-գնաց,—ասաց նա գլուխը թափահարելով՝ կարծես աչն ուղղությամբ, ուր պիտի գնար:

Սենյակի դռան մեջ չերկաց Ելզարը՝ մի ինչ-վոր սպիտակ մեծ բան ուսին գցած և ձեռին թուր: Հաջի-Մուրադը նշանացի կանչեց նրան, և Ելզարը իր մեծ քայլերով մոտեցավ Հաջի-Մուրադին և նրան ավեց սպիտակ չափնջին ու թուրը: Հաջի-Մուրադը վեր կացավ, վերցրեց սպիտակ չափնջին և, թեի վրա ձգելով, Մարիա Դմիտրիենային մատուցեց, մի ինչ-վոր բան ասելով թարգմանին: Թարգմանը ասաց.

— Նա ասում է,—դու գովեցիր չափնջին, վեր առ:

— Ինչո՞ւ համար,—ասաց Մարիա Դմիտրիենան կարմրելով:

— Այդպես է հարկավոր: Ադաթը այդպես է,—ասաց Հաջի-Մուրադը:

— Ե՛հ, շնորհակալ եմ,—ասաց Մարիա Դմիտրիենան, վերցնելով չափնջին:—Աստված տա, վոր ձեր վորդուն ազատեք,—ավելացրեց նա:—Ուլան չախշի,—շարունակեց նա,—ասացեք նրան, թե լես ցանկանում եմ, վոր նա ընտանիքն ազատի:

Հաջի-Մուրադը Մարիա Դմիտրիենային նաչեց և գլուխը շարժեց սիրալիր: Հետո նա թուրը առավ Ելզարից և Իվան Մաթվեյկիչին ավեց: Իվան Մաթվեյկիչը թուրը ընդունեց և ասաց թարգմանին.

— Ասա նրան, վոր իմ կոտած մոխրագույն ձին վերցնի, վոխարենը ուրիշ բան չունեմ ընծայելու:

Հաջի-Մուրադը ձեռը շարժեց չերեսի առաջ, կամենալով ասել, թե նրան վոչինչ հարկաւոր չէ, և նա չի վերցնել, իսկ հետո՝ ցուց տալով սարերի ու իր սիրտը, գնաց գեպի դուռը: Ամենքը գնացին նրա լեռնից: Սենյակներում մնացած սպաները՝ թուրը հանելով, սկսեցին շեղբը զլեռնի և վճռեցին, թե իսկական գուրդա չէր (այսինքն՝ ընտիր և թանգազին տեսակից էր):

Բուտիրը դուրս չեկավ Հաջի-Մուրադի հետ միասին: Բայց այդ ժամանակ մի բան պատահեց, վոր վոչվոր չէր սպասում, և կարող էր վերջանալ Հաջի-Մուրադի մահով, չեթե նա ուշիմ, վրձուական և ճարտիկ չլինէր:

Կուսմբկների Թալա-Ղաչու (Տաշ-Կիչու) աուլի բնակիչները, վորոնք Հաջի-Մուրադին շատ ելին հարգում և շատ անգամ ելին բերդ չեկել լոկ հոչակաւոր նախրին տեսնելու, Հաջի-Մուրադի գնալուց չերեք որ առաջ պատգամաւորներ ելին ուղարկել նրա մոտ՝ խնդրելու, վոր ուրախ որ մզկիթ գա: Իսկ Թալա-Ղաչու աուլում բնակող կուսմբկների իշխանները, վորոնք Հաջի-Մուրադին ատում ելին և նրանից արջան վրեժխնդրութուն ունեցին, չերը այդ խմացան, ժողովրդին հալանեցին, թե Հաջի-Մուրադին մզկիթ չեն թողնի: Ժողովուրդը հուզվեց, և ժողովրդի ու իշխանների կողմնակիցների միջև կռիվ ծագեց: Ռուս կառավարչութունը լեռնականներին խաղաղեցրեց և Հաջի-Մուրադի մոտ մարդ ուղարկեց ասելու, վոր մզկիթ չգա: Հաջի-Մուրադը չգնաց, և ամենքը կարծում ելին, թե բանը դրանով էլ վերջացավ:

Բայց հենց այն րոպէսին, չերը Հաջի-Մուրադը դռնից դուրս չեկավ և ճանապարհ պիտի ընկներ, ձիերն էլ արդեն դռան մոտ կանգնած ելին, Իվան Մաթվեկիչի տանը մոտեցաւ՝ Բուտիրի և Իվան Մաթվեկիչի ծանոթ կուսմբկների իշխան Արսլան-խանը:

Յերը նա Հաջի-Մուրադին տեսավ, գոտիից դուրս քաշեց ատրճանակը և ուղղեց Հաջի-Մուրադի վրա: Բայց Արսլան-խանը զեռ չէր խփել, չերը Հաջի-Մուրադը, չնայելով վոր կաղ էր, կատվի պես, շեմքից իրեն գեպի Արսլան-խանը նետեց: Արսլան-խանը ատրճանակն արձակեց և չգիտավ: Բայց Հաջի-Մուրադը, նրա մոտ վազելով, մի ձեռով ձիու սանձը բռնեց, մյուսով դաշուհնը հանեց և թուրքերեն մի ինչ-վոր բան աղաղակեց:

Միաժամանակ թշնամիների մոտ վազեցին Բուտիրն ու Ելդարը և նրանց ձեռքերը բռնեցին: Ատրճանակի սպաթլունից հետո դուրս չեկավ և Իվան Մաթվեկիչը:

— Այդ ինչ էս անում, Արսլան, դու իմ տանը այդպիսի գար-

չելի բան էս անում,—ասաց նա, չերը գործի ելութունը իմացավ:—Այդ լավ չէ, չեղբայր: Դաշտում դուք ազատ էք, ինչ ուզում էք, արեք, բայց ինչո՞ւ չես իմ տանը այդպիսի կոտորած սարքում:

Արսլան-խանը, վոր սե բեղերով մի կարճահասակ մարդ էր, բոլորովին գունաթափ և գողգոջուն իջավ ձիուց, չարութամբ Հաջի-Մուրադին նայեց և Իվան Մաթվեկիչի հետ սենյակ գնաց: Իսկ Հաջի-Մուրադը՝ ծանր հեկալով և ժպտալով, ձիերի մոտ չեկավ:

— Ինչո՞ւ համար էր ուզում սպանել նրան,—հարցրեց Բուտիրը թարգմանի միջոցով:

— Նա ասում է, թե այդպես է մեր որենքը,—հաղորդեց թարգմանը Հաջի-Մուրադի խոսքերը:—Արսլան-խանը արջան վրեժ պիտի առնի նրանից,— և դրա համար սպանել ուղեց:

— Իսկ չեթե ճանապարհին վրա հասնի,—հարցրեց Բուտիրը: Հաջի-Մուրադը ժպտաց:

— Ինչ արած, չեթե սպանի, ուրեմն այդպես է Ալլահի կամքը: Ну, прощай,—ասաց նա դարձյալ ոտսերեն և, ձիու բաշը բռնելով՝ աչք ածեց բոլոր ուղեկցողներին և սիրալիբ հայացքով հանդիպեց Մարիա Դմիտրիենային:

— Прощай, матушка,—ասաց Հաջի-Մուրադը՝ դիմելով նրան:—Շնորհակալութուն:

— Աստված տա, աստված տա, վոր ընտանիքը փրկե, —կըրկինց Մարիա Դմիտրիենան:

Հաջի-Մուրադը խոսքերը չհասկացավ, բայց հասկացավ նրա կարեկցութունը և գլխով արավ:

— Տես, կուսակիդ չմոռանաս,—ասաց Բուտիրը:

— Ասա, վոր չես նրա հավատարիմ մտերիմն եմ: Յերքեր չեմ մոռանալ,—պատասխանեց նա թարգմանի միջոցով և, չնայելով իր ծուռ վոտին, ասպանդակին դիպավ թե չէ, շատ արագ ու հեշտութամբ իր մարմինը բարձր թամբի վրա դրեց և սովորական շարժումով ատրճանակը շոշափելով ու թուրը շտկելով, այն ինքնուրույն, հպարտ, չեղակի տեսքով, վոր ունենում է լեռնականը ձի հեծած, հեռացավ Իվան Մաթվեկիչի տնից: Խանեֆին ու Ելդարը նույնպես ձի նստան և տանտերերին ու սպաներին բարեկամաբար հրաժեշտ տալով արագ ընթացան իրենց մյուրըղի չետից:

Ինչպես միշտ՝ գնացողների մասին զանազան խոսակցութուններ սկսեցին:

— Կտրինճ ե, գալլի պես հարձակվեց Արսլան-խանի վրա, դեմքը բոլորովին փոխվեց:

— Բայց կխարի, չերևում ե, շատ չետ չեկածն ե,—ասաց Պետրոկովսկին:

— Աստված տա, վոր դրա պես նենգամիտ ուս շատ լինի,— հանկարծ բարկացած միջամտեց Մարիա Դմիտրիևնան.— Մի շաբաթ մեզ մոտ ապրեց, բացի լավութունից ուրիշ վոչինչ չտեսանք,—ասաց նա.— վարվեցող ե, խելացի ե արդարամիտ:

— Դուք այդ բոլորն ի՞նչպես իմացաք:

— Իմացա:

— Մերահարվել ե,—ասաց ներս մտնող Իվան Մաթվեևիչը,— եղ մեկը կա:

— Դեհ, հենց սիրահարվել եմ: Ձեզ ինչ: Ինչու համար գատապարտել, քանի վոր լավ մարդ ե: Նա թուրք ե, բայց լավ մարդ ե:

— Ճիշտ ե, Մարիա Դմիտրիևնա,—ասաց Բուտլերը:— Կեցցեք, վոր պաշտպանեցիք:

XXI

Ձեհնալի գծի վրա առաջավոր ամրոցների բնակիչների կյանքը անցնում էր առաջվա պես: Այն ժամանակից նրանք չերկուսանգամ են անհանգստացրել, վաշտերը դուրս են վազել, դուրս են թռել և միլիցիոներները, բայց չերկուսանգամ են լեռնականներին չեն կարողացել կանգնեցնել. նրանք հեռանում ելին, և մի անգամ չուր խմելու տեղից ութը կազակի ձի փախցրին և մի կազակ ել սպանեցին: Վերջին արշավանքից հետո, չերը աուլը ավերեցին, նորերը տեղի չեկին ունեցել: Միայն մի մեծ արշավանք էր պատրաստվում դեպի Մեծ Ձեհնա ձախ թևի նոր հրամանատար իշխան Բարյատինսկու նշանակվելու հետևանքով:

Իշխան Բարյատինսկին, փոխարքայի սիրելին, Կարաբղյան գնդի նախկին հրամանատարը, այժմ, վորպես ամբողջ ձախակողմյան բանակի հրամանատար, Գրոզնի ժամանելուց հետո անմիջապես գորք ժողովեց թագավորի այն ծրագրի իրագործումը շարունակելու, վորի մասին Ձերնըշովը գրել էր Վորոնցովին: Վոզգվիժենսկայում ժողոված գորքը Կուրինյան գնդի ուղղությամբ գնաց՝ դիրքեր բռնելու: Ձորքը կանգ էր առել այնտեղ և անտառք կտրում էր: Յերիտասարդ Վորոնցովը մի հույսկապ մահուղի վրանում էր ապրում, և նրա կինը, Մարիա Վասիլևնան, բանակ էր

գալիս և հաճախ մնում էր գիշերելու: Բարյատինսկու հարաբերությունը Մարիա Վասիլևնայի հետ վոչվոքի համար գաղտնիք չէր, և այդ պատճառով վոչ-պալատական սպաները և զինվորները կոպիտ կերպով հայհուում ելին Մարիա Վասիլևնային նրա համար, վոր շնորհիվ նրա բանակում գտնվելուն, գիշերները նրանց զանազան տեղեր ելին ուղարկում գաղտնի պահպանություն անելու: Լեռնականները սովորաբար թնդանոթներ ելին բերում և ունմերը արձակում բանակի վրա: Այդ ունմերը ըստ մեծի մասին չեկին դիպչում, և այդ պատճառով ուրիշ ժամանակ այդ կրակոցների դեմ միջոցներ ձեռք չեկին առնվում, բայց վորպեսզի լեռնականները չկարողանան թնդանոթներ բերել և Մարիա Վասիլևնային վախեցնել, ուղարկվում ելին գաղտնի պահակներ: Ամեն գիշեր գաղտնի պահակության գնալ նրան համար, վոր տիկնոջը չվախեցնեն, վիրավորական եր և զգվելի, և զինվորներն ու բարձր շրջաններում չընդունված սպաները Մարիա Վասիլևնային անարգում ելին վատ խոսքերով:

Բուտլերը իր ամրոցից արձակուրդ եր չեկել՝ տեսնելու այս պորախմբում հավաքված Պաժերի կորպուսի իր գասընկերներին, վորոնք Կուրինյան գնդում՝ հրամանատարների մոտ՝ աղյուտանոտների և բանբերների պաշտոններ ելին կատարում: Սկզբում Բուտլերի համար շատ ուրախալի չեր: Նա իջևանեց Պոլտորացկու վրանում և այնտեղ նա հանդիպեց իրեն ինդագին զիմավորող ծանոթների: Նա գնաց Վորոնցովի մոտ ել, վորի հետ նա միքիչ ծանոթ էր, վորովհետև նրա հետ միասին մի ժամանակ մի գրնդում ծառայել ելին: Վորոնցովը նրան շատ սիրալիք ընդունեց, ներկայացրեց իշխան Բարյատինսկուն և հրավիրեց հրաժեշտի ձաշին, վոր նա տալիս էր Բարյատինսկուց առաջ չեղած ձախ թևի հրամանատար՝ գեներալ Կոզլովսկուն:

Ճաշկերույթը հիանալի չեր: Վրանների ամբողջ շաբքեր ելին բերել ու դրել: Նրանց ամբողջ լերկայնությամբ սեղան եր բացված՝ պատկանելի սարքերով և շշերով: Ամեն ինչ հիշեցնում էր Պետերբուրգյան գվարդիայի կյանքը: Ժամը չերկուսին սեղան նստեցին: Սեղանի մեջտեղում նստել ելին մի կողմից Կոզլովսկին, մյուս կողմից Բարյատինսկին: Կոզլովսկուց դեպի աջ նստել էր Վորոնցովը, դեպի ձախ—նրա կինը: Ամբողջ լերկարությամբ, չերկու կողմից նստել ելին Կարաբղյան և Կուրինյան գնդերի սպաները: Բուտլերը նստել էր Պոլտորացկու կողքին. չերկուսան ել ուրախ-զվարթ խոսում ելին հարևան սպաների հետ և

խմում: Յերբ բանը տապալկածին հասավ, գլխվոր-սպասավորներն սկսեցին բաժակները շամպայն լցնել: Պոլտորացիներն անկեղծ-չերկուզով և կարեկցութեամբ ասաց Բուտլերին.

— Մեր «ինչպեսը» խաչտառակվելու չե:

— Ի՞նչ է վոր:

— Նա ճառ պիտի խոսի: Բայց ի՞նչ կարող է ասել:

— Այո, չեղբայր, եղ ել հո գնդակների տակ ամբուլթուեն վերցնել չի: Դեռ կողքին ել տիկին և ու պալատական պարոններ: Ճշմարիտ, նրան նայելը խղճալի չե,—ասում էլին սպաները իրենց մեջ:

Բայց ահա հանդիսավոր բոպեն հասավ: Բարչատինսկին վտառի կանգնեց և, բաժակը վերցնելով, համառոտ ճառով դիմեց Կողովսկուն: Յերբ Բարչատինսկին իր խոսքը վերջացրեց, Կողովսկին վեր կացավ և բավական հաստատ ձայնով սկսեց.

— Նորին մեծութեան բարձրագուշն կամքով, ինչպես, չեա ձեզանից հեռանում, ձեզանից բաժանվում եմ, պարոնաչք սպաներ,—ասաց նա:—Բայց միշտ ինձ, ինչպես, ձեզ հետ համարեցեք: Ձեզ, պարոններ, հայտնի է, ինչպես, այն ճշմարտութունը—դաշտում մեկը ուղմիկ չե: Այդ պատճառով ամեն բան, ինչ վոր չեա ծառայութեանս ժամանակ, ինչպես, պարզե ևմ ստացել, ամեն բան ինչպես, ինչ վոր ինձ վրա թափվել և թագավոր կայսեր մեծ առատաձեռնութունից, ինչպես, իմ ամբողջ դիրքս, ինչպես, և բարի անունս, ամեն բան, միանգամայն ամեն բան, ինչպես.—այտեղ նրա ձայնը դողաց,—չեա, ինչպես, միայն և միայն ձեզ եմ պարտական, իմ սիրելիներ,—նրա կնճռապատ դեմքը ավելի ևս խորշոմեց: Նա հեկեկաց, և նրա աչքերից արցունքներ գլորվեցին:—Ամբողջ սրտից ձեզ, ինչպես, իմ անկեղծ, սրտաբուղիս չերախտագիտութունս եմ հայտնում...

Կողովսկին իր խոսքը շարունակել չկարողացավ և, վեր կենալով, սկսեց գրկախառնվել սպաների հետ: Իշխանուհին չերեսը ծածկել եր թաշկինակով: Իշխան Սեմյոն Միխայլովիչը՝ բերանը ծոած, թարթում եր աչքերը: Սպաներից շատերը նուչնպես արտասովեցին: Բուտլերը, վոր Կողովսկուն շատ քիչ եր ձանաչում, նուչնպես չկարողացավ արտասուքը դսպել: Ամեն բան նրան չափազանց դուր եր գալիս: Ապա առաջարկվեցին Բարչատինսկու, Վորոնցովի, սպաների և գլխվորների կենացները, և հյուրերը սեղանից չեխան հարբած՝ թե խմած գլխուց և թե գլխվորական ցնծութունից, դեպի վորը առանց այն ել մասնավորապես հակված էին:

Հիասքանչ չեզանակ եր, արև, խաղաղ, թարմացուցիչ գովող: Չորս կողմում խարուչիներն էլին ճարճատում, չերգեր էլին լավում: Կարծես թե մի ինչ-վոր բան էլին տոնում: Բուտլերը ամենարախտավոր, խանդավառ տրամադրութեամբ գնաց Պոլտորացիու մոտ: Պոլտորացիու մոտ սպաներ էլին հավաքվել թըղ-թախաղի սեղան բաց արին, ազուտանտը 100 ուուրի բանկ գրեց: Բուտլերը մի չերկու անգամ վրանից դուրս չեկավ, վարտիքի գրպանում գրամնքսակը ձեռին բռնած, բայց վերջապես դիմանալ չկարողացավ և, հնայելով վոր ինքն իրեն և չեղբայրներին չխաղալու խոսք եր ավել, սկսեց խաղալ:

Չանցավ և մի ժամ, չերբ Բուտլերը կաս-կարմիր, քրտնած, կավիճով աղտոտված նստել եր՝ չերկու ձեռները սեղանին կոթնած, գրում եր անկունները ճոթած խաղաթղթերի տակ իր վեր չեկած գումարները: Նա այնքան շատ եր տանուլ ավել, վոր արգեն վախենում եր իրեն վրա գրածները հաշվել: Առանց հաշվելու չել նա գիտեր, վոր չեթե ոտձիկն ել տար, վոր առաջուց նա կարող եր վերցնել, և իր ձիու արժեքն ել տար, այնուամենայնիվ չեր կարող վճարել այն ամենը, ինչ վոր անձանոթ ազուտանտն եր գրել նրա վրա: Նա էլի կխաղար, բայց խստագեմ ազուտանտը իր ձերմակ, մաքուր ձեռներով թղթերը վար գրեց և սկսեց Բուտլերի վրա գրածների կավճա սուչը հաշվել: Ամթթահար չեղած Բուտլերը ներողամտութուն խնդրեց, վոր այժմ չի կարող լիովին վճարել տանուլ ավածը, ասաց, թե տանից կուղարկել, և չերբ նա այդ ասաց, նկատեց, թե ինչպես ամենքը նրան խղճացին, և թե ամենքը, միչև անգամ Պոլտորացիին, խուսափում էին նրա հայացքից: Այդ նրա վերջին չերեկոն եր: Արժեր, վոր նա չխաղար, այլ գնար Վորոնցովի մոտ, ուր նրան կանչում էին, և ամեն բան լավ կլիներ, մտածում եր նա: Իսկ այժմ վոչ միայն լավ չեր, այլ և սարսափելի չեր:

Ընկերներին ու ծանոթներին հրաժեշտ տալով՝ նա գնաց տուն և հասնելով՝ իսկուշն պառկեց քնելու. տասնևութը ժամ շարունակ քնեց, ինչպես սովորաբար քնում են տանուլ տալուց հետո: Մարիա Դմիտրիևնան, վորից նա հիսուն կոպեկ խնդրեց ուղեկցող կազակին բաշխելու համար, գրանից և նրա տխուր ու կարճ պատասխաններից հասկացավ, վոր Բուտլերը տանուլ և ավել և Իլյան Մաթվեյիչի վրա հարձակվեց, թե ինչու չեր նրան թողել՝ գնալու:

Հետևյալ որբ Բուտլերը գարթնեց ժամը տասերկուսին և, իր գրութունը մտաբերելով, նորից ուզեց ընկզմվել մոտացութեան

մեջ, վորից նոր եր դուրս չեկել, բայց այդ անկարելի չիր: Պետք եր միջոցներ ձեռք առնել մի անձանոթ մարդու պարտ ֆնացած 470 ուրբին վճարելու: Այդ միջոցներից մեկն այն եր, վոր չեղ-րորը նամակ գրեց, իր մեղքերը զղջալով և նրան աղերսելով, վոր վերջին անգամ 500 ուրբի ուղարկի իրեն ի հաշիվ այն աղորի-քի, վոր տակավին նրանց ընդհանուր սեփականությունն եր: Ապա նա իր մի ժլատ ազգականունուն գրեց, խնդրելով նրանից, վոր, ինչ տոկոսով ել լինի, նույն 500 ուրբին նրան պարտք տա: Հետո նա Իվան Մաթվեկիչի մոտ գնաց, իմանալով վոր նրա կամ, ավելի շուտ, Մարիա Դմիտրիենայի մոտ փող կա, խնդրելու, վոր նրան 500 ուրբի պարտք տան:

— Յեա կտալի,—ասաց Իվան Մաթվեկիչը,—հենց այժմ կտալի, բայց Մաշկան չի տալ: Նրանք, եղ կանայք, արդեն շատ պինդ են, սատանան նրանց բանը գիտի: Բայց պետք ե, պետք ե մի ձար անել, ազատվել, սատանան տանի: Են սատանի՛ նպա-րավածառի մոտ արդյոք չի՞ լինիլ:

Բայց կարիք ել չկար նաև փորձել մարկիտանտից պարտք վերցնելու: Այնպես վոր Բուսլերի փրկությունը միայն չեղորբից և այն ժլատ ազգականունուց կարող եր գալ:

XXII

Չեչնալում իր նպատակին չհասնելով՝ Հաջի-Մուրադը Թիֆ-լիս վերադարձավ և ամեն որ գնում եր Վորոնցովի մոտ և, չերբ նրան ընդունում ելին, աղաչում եր լեռնականների գերիներին հավաքել և իր ընտանիքի հետ փոխանակել: Նա ստում եր, թե ատանց դրան կաշկանդված ե և չի կարող, ինչպես կկամենար, ծառայել ուսաներին և Շամիլին վոչնչացնել: Վորոնցովը անորոշ կերպով խոստանում եր անել՝ ինչ վոր կարող եր, բայց հետա-ձգում եր, ասելով, թե գործը նա այն ժամանակ կվճուր, չերբ գեներալ Արդուեթինսկին Թիֆլիս կգա, և նա նրա հետ կխոսի: Այն ժամանակ Հաջի-Մուրադը սկսեց խնդրել Վորոնցովից, վոր թույլ տա նրան գնալ Նուխի, վոր Անդրկովկասում մի փոքրիկ քաղաք ե, առ ժամանակ ապրելու, ուր կարծում եր, թե ավելի հարմար կլինի բանակցություններ վարել Շամիլի և նրան նվիր-ված մարդկանց հետ՝ իր ընտանիքի մասին: Բացի դրանից, Նու-խում, ինչպես մահմեդական քաղաքում, մզկիթ կար, ուր ավելի հարմարություն կար մահմեդական որենքների պահանջած աղոթք-ները կատարելու: Այդ առթիվ Վորոնցովը գրեց Պետերբուրգ

բայց և այնպես թուլլատրեց, վոր Հաջի-Մուրադը Նուխի տեղա-փոխվի:

Վորոնցովի, Պետերբուրգի իշխանությունների, ինչպես և ուսու մարդկանց մեծամասնության համար, վորոնք Հաջի-Մուրա-դին ճանաչում ելին, այդ պատմությունը կովկասյան պատերազ-մի մի բարեբաստիկ փոփոխությունն եր ներկայանում կամ թե մի հետաքրքրաշարժ գեպքը, իսկ Հաջի-Մուրադի համար, մանա-վանդ վերջին ժամանակներս,—նրա կյանքի մի սարսափելի շըր-ջադարձն եր: Լեռներից նա փախավ, իր անձը փրկեց, մասամբ Շամիլին ատելուց և, վորքան ել վոր դժվար եր այդ փախուստը, նա իր նպատակին հասավ, և սկզբում հաջողությունը ուրախաց-նում եր նրան, և նա անդադար Շամիլի վրա հարձակվելու ծրագիր եր խորհում: Բայց բանից դուրս չեկավ, վոր նրա ընտա-նիքի դուրս գալը, ինչպես նա չեր կարծում, վոր հեշտ գլուխ կգա, սակայն ավելի դժվար եր, քան թե նա կարծում եր: Շամիլը նրա ընտանիքը ձերբակալեց և, գերի պահելով, խոստացավ կանանց առններին բաժանել, իսկ վորդուն կուրացնել կամ սպանել: Այժմ Հաջի-Մուրադը Նուխի չեր տեղափոխվել այն մտադրությամբ, վոր Դադստանում՝ իրեն նվիրված մարդկանց միջոցով—խորամանկու-թյամբ կամ բռնի ուժով, ընտանիքը դուրս կորգեր Շամիլի ձե-ռից: Նուխում՝ նրա մոտ չեկած վերջին լրաբերը հաղորդեց, թե նրան նվիրված ավարացիները պատրաստվում են նրա ընտանի-քը հափշտակելու և ընտանիքի հետ միասին ուսաների մոտ գալու, իսկ դրա համար պատրաստ մարդիկ քիչ են և թե նրանք չեն վստահանում անել այդ ընտանիքի բանտարկման տեղում, Վե-գենուցում, բայց այդ կանեն միայն այն գեպքում, չեթե ընտանի-քը Վեգենուցից մի ուրիշ տեղ փոխադրեն, այն ժամանակ նրանք խոստանում են այդ անել ճանապարհին: Հաջի-Մուրադը պատ-վիրեց ասել իր բարեկամներին, թե ընտանիքն ազատելու համար նա խոստանում ե չերեք հազար ուրբի:

Նուխում Հաջի-Մուրադին հատկացված եր հինգ սենյակից բաղկացած մի փոքր տուն, մզկիթից և խանի ապարանքից վոչ հեռու: Այդ իսկ տանը բնակվում ելին նրա մոտ նշանակված սպաները, թարգմանը և նրա նոքարները: Հաջի-Մուրադի կյան-քը անցնում եր սարից չեկող լրտեսներին սպասելու և ընդունել-լու և քաղաքի շրջակայքում ձիով զբոսնելու մեջ:

Ապրիլի 8-ին զբոսանքից վերադառնալուց հետո Հաջի-Մու-րադն լմացավ, վոր իր բացակայություն ժամանակ Թիֆլիսից,

Վորոնցովի կողմից, մի աստիճանավոր ե լեկել: Չնայելով իր ամբողջ ցանկութեան՝ իմանալու, թե աստիճանավորը ինչ ե բերել իր համար, Հաջի-Մուրադը՝ նախ քան այն սենյակը գնալու, ուր պրիստոպիտ աստիճանավորի հետ սպասում էլին նրան, գնաց իր սենյակը և կեսորվա աղոթքը կատարեց: Յերբ աղոթքը վերջացրեց, նա գնաց մյուս սենյակը, վոր թե հյուրասենյակ եր և թե ընդունարան: Թիֆլիսից չեկած աստիճանավորը, պետական խորհրդական Կիրիլլովը, Վորոնցովի ցանկութեանը հաղորդեց Հաջի-Մուրադին, վոր ամսի 12-ին Թիֆլիս գա Արդութինսկու հետ սեռակցելու:

— Յախշի, — բարկացած ասաց Հաջի-Մուրադը:

Աստիճանավոր Կիրիլլովը նրան դուր չեկավ:

— Իսկ փող բերե՞լ ես:

— Բերել եմ, — ասաց Կիրիլլովը:

— Այժմ չեղև շարաթվանը, — ասաց Հաջի-Մուրադը և ցուց տվեց առաջ տասը մատը և ապա՝ ելի չորսը: — Տնու:

— Իսկուչն կտանք, — ասաց աստիճանավորը՝ ճանապարհորդական պալատակից դրամաքտակը հանելով: — Յեվ ինչո՞ւ համար ե նրան պետք փող, — ասաց նա ուսերեն, կարծելով, թե Հաջի-Մուրադը չի հասկանում, բայց Հաջի-Մուրադը հասկացավ և զայբացած նայեց Կիրիլլովին: Փողը հանելու ժամանակ Կիրիլլովը, կամենալով Հաջի-Մուրադի հետ խոսել, վորպեսզի վերադառնալուց հետո բան ունենա իր իշխան Վորոնցովին ասելու, թարգմանի միջոցով հարցրեց նրան, թե արդո՞ք տխուր չի՞ ալստեղ: Հաջի-Մուրադը կողքից արհամարհաբար նայեց փոքրիկ, հաստիկ մարդուն, վոր քաղաքացիական հագուստով եր ու առանց զենքի, և վոչինչ չպատասխանեց: Թարգմանը հարցը կրկնեց:

— Ասա նրան, վոր չես նրա հետ խոսել չեմ ուզում: Թող փողը տա:

Այս ասելով՝ Հաջի-Մուրադը կրկին նստեց սեղանի մոտ, պատրաստվելով փողը համրել:

Յերբ Կիրիլլովը փողը հանեց և յոթը սլուն շարեց տասըտասը վոսկուց (Հաջի-Մուրադը որը հինգ վոսկի չեք ստանում), փողը նա Հաջի-Մուրադին մոտեցրեց: Հաջի-Մուրադը վոսկիները չեքքեկակալի թեքն ածեց, վեր կացավ և ըղրըղովին անսպասելի լսվեց պետական խորհրդականի կնդին ու դուրս չեկավ սենյակից: Պետական խորհրդականը վեր թռավ և հրամայեց թարգմանին ասել, վոր նա իրավունք չունի այդ անելու, վորովհետև գնդապետի աստիճան ունի: Նուչնը հաստատեց և պրիստավը:

Բայց Հաջի-Մուրադը գլուխը շարժեց՝ կամենալով ասել, թե նա գիտի, և նա սենյակից դուրս չեկավ:

— Ի՞նչ կարելի չե անել դրա հետ, — ասաց վերակացուն: — Դաշուչնը կխրի և պրծավ: Այս սատանաներին համոզել չի լինիլ: Տեսնում եմ, վոր դիվանաբլի է:

Հենց վոր մութը կոխեց, սարեց չեղև լրաբեր չեկան՝ մինչև աչքերը բաղշով փաթաթված: Պրիստավը նրանց տարավ սենյակ՝ Հաջի-Մուրադի մոտ: Լրաբերներեց մեկը մի մոտ, սև թավլեցի չեք. մյուսը՝ մի վախ ծերունի: Նրանց բերած լուրերը Հաջի-Մուրադի համար ուրախալի չելին: Նրա բարեկամները, վորոնք հանձն էլին առել ընտանիքն ազատել, այժմ ուղղակի հրաժարվում էլին՝ չեղևուղ կրելով Շամիլից, վոր ամենահոնելի պատիժներ եր սպանում այն մարդկանց, վորոնք կողմեն Հաջի-Մուրադին: Լրաբերների պատմածները լսելուց հետո Հաջի-Մուրադը ձեռները կոթնեց ծալապատիկ արած վոտներին և, փափախով գլուխը կախած, չեղևար լուս մնաց: Հաջի-Մուրադը մտածում եր և մտածում եր վճռողբար: Նա գիտեր, վոր այժմ վերջին անգամն և մտածում, և անհրաժեշտ եր մի վորոշում: Հաջի-Մուրադը գլուխը բարձրացրեց և՛ չեղևու վոսկի հանելով՝ մի-մի տվեց լրաբերներին և ասաց.

— Գնացեք:

— Ի՞նչ պատասխան կլինիլ:

— Պատասխանը կն կլինի, ինչ վար աստված կտա: Գնացեք: Լրաբերները վեր կացան ու գնացին, իսկ Հաջի-Մուրադը մնաց գորգի վրա նստած՝ արմունկները ծակներին հենած: Յերկար նա այսպես նստած մտածում եր:

«Ի՞նչ անեմ: Հավատով Շամիլին և վերադառնալ նրա մոտ», — մտածում եր Հաջի-Մուրադը: — Նա ազվես ե, կխարի: Յեթե մինչև անգամ նա չխարի չել, նրան՝ հրաչեկ խարեբալին, հպատակվել անկարելի չե: Չի կարելի նրա համար, վոր նա այժմ ինձ, քանի վոր ուսներեի մոտ չեղել եմ, չի հավատալ, — մտածում եր Հաջի-Մուրադը:

Յեվ նա մտաբերեց թավլեցիներեի մի հեքիաթը բազելի մասին, վոր բռնվել, ապրել եր մարդկանց մոտ և հետո վերադարձել սարերը՝ լուրաչիներեի մոտ: Նա վերադարձավ, բայց կապանքներով, և կապանքների վրա բոժոժներ էլին մնացել: Յեվ բազեները նրան չընդունեցին: — Թուր: — ասացին նրանք, — գնա այնտեղ, ուր քեզանից արծաթի բոժոժներ կն կախել: Մենք բոժոժներ

կընքում թոչուններ և տեսել և գոչել նրանց. «Դուք, չվող թըւ-
չուններ, մեր տները թռեք և ասացեք մեր քուլերին, մայրե-
րին և սպիտակ աղջիկներին, թե ամենքս մեռանք խաղալավի
համար: Ասացեք նրանց, թե մեր թիակները գերեզմաններում չեն
պառկելու, մեր վոսկրները քաշքշելու և կրծիլու չեն ազահ գալ-
լերը և մեր աչքերը կհանեն սև ազուսները:

Յերգը վերջանում էր այս խոսքերով, և այդ վերջին խոսքե-
րին, վոր չերգվեցին տխրագին լեզանակով, միացավ ուրախ Խան-
Մահոմալի աշխուժ ձայնը, վոր չերգից հետո խսուլցն գոռաց. «Լա
իլլահ իլ ալլահ» և զիլ կլկլացրեց: Հետո ամեն ինչ լռեց, և կրկին
լավեց սոխակների սուլոցն ու ճովողը պարտեղից, և դռան չետից
քարերի վրա արագ սահող չերկաթի հալասարաչափ Փշոցը և
չերբեմն շշուռը:

Հաջի-Մուրադը մտածմունքների մեջ այնպես խորասուզվեց,
վոր չնկատեց, թե ինչպես կուժը ծռեց և ջուրը թափեց: Գլուխն
որորելով ինքն իրեն նկատողութուն արավ և իր սենյակը մտավ:
Առավոտյան նամազն անելուց և զենքերը նաչելուց հետո Հաջի-
Մուրադը նստավ անկողնի վրա: Անելու ուրիշ գործ չկար: Բա-
ղաքից դուրս գալու համար պետք էր խնդրել պրիստավին: Իսկ
դուրսը դեռևս մուժն էր, պրիստավն էլ քնած:

Խանեֆիի չերգը նրան հիշեցրեց մի ուրիշ չերգ, վոր հորինել
էր իր մայրը: Այդ չերգը պատմում էր իսկական չեղելութուն, վոր
տեղի չեր ունեցել այն ժամանակ, չերը Հաջի-Մուրադը նոր էր միայն
ծնվել, բայց այն բանի մասին էր չերգը, ինչ վոր մայրը պատմել
էր իրեն:

Յերգն այսպես էր.

«Պողպատի դաշույնդ պատուեց սպիտակ մարմինս, բայց չես
իմ արեգակս, իմ տղաս վերքիս վրա դրի, տաք արյունովս նրան
բլացի, և վերքս առանց խոտերի ու արմտիքի ապաքինվեց, և
տղաս մեծացավ, չիգիտ դարձավ»:

Այս չերգի խոսքերը ուղղված էին Հաջի-Մուրադի հորը, և
չերգի իմաստն այն էր, վոր, չերը Հաջի-Մուրադին մայրը ծնեց,
խանի կինն էլ մյուս չերխան՝ Ումմա-խանին բերավ և պահան-
ջեց, վոր Հաջի-Մուրադի մայրը ծծմայր գնա նրանց մոտ, վորով-
հետև նա մեծ վորդուն՝ Արունունցալ-խանին էլ կերակրել էր:
Բայց Փաթիմաթը այս վորդուն չուզեց թողնել և ասաց, թե չի
գնալ: Հաջի-Մուրադի հայրը բարկանում և և հրամայում, վոր գնա:
Յերը մայրը նորից հրաժարվում է՝ դաշույնով խփում և նրան, և

կապաներ, չեթե մորը նրա ձեռքից չխլելին: Այդպես նա չերխա-
լին չավեց, կերակրեց և մեծացրեց, և այդ զեպքի մասին հորի-
նեց այս չերգը:

Հաջի-Մուրադը մտաբերեց մորը, չերը նա խրճիթի կտրին,
իր կողքին, մուշտակի տակ քնելու պառկեցնելով, այդ չերգն էր
չերգում նրան, և վորդին խնդրում էր նրանից ցուց տալ մարմնի
այն տեղը, ուր մնացել էր վերքի հետքը: Մորը նա տեսնում էր
կենդանի, աչքի առջև կանգնած—վոչ այնպես խորշոմած, ձերմա-
կած, ցանցառ ատամներով, ինչպես թողել էր նրան այժմ, այլ
ջահել, գեղեցիկ, այնքան ուժեղ, վոր, չերը ինքը հինգ տարեկան
էր արդեն ու ծանր, նա իրեն՝ քթոցով մեջքին դրած՝ սարերով
պապի մոտ էր տանում:

Յեվ հիշեց նա կնճոտ, սպիտակամորուս պապին, ինչպես
նա ջգոտ ձեռներով արծաթ էր կարում և թոռին աղոթքներ ասել
տալիս: Մտաբերեց նա սարի տակի աղբյուրը, ուր նա, մոր վար-
տիքից բռնած, նրա հետ միասին ջրի չեր գնում: Հիշեց և լղար
շունը, վոր լիզում էր իր չերեսը, և մանավանդ ծիխ և մածունի
հոտը, չերը մոր հետ գնում էր չարդախը, ուր մայրը կովերն էր
կթում և կաթը տաքացնում: Հիշեց, ինչպես առաջին անգամ նրա
գլուխը թրաշեցին և ինչպես պապուն պղնձե լագանի մեջ, վոր
պատից կախված էր, դարմացած տեսավ իր կլոր՝ կապտին տվող
գլուխը:

Յեվ իրեն վոքը հասակում հիշելով՝ նա հիշեց իր սիրելի
Յուսուֆ վորդուն, վորի գլուխը առաջին անգամ ածիլեց նա ինքը:
Այժմ այդ Յուսուֆը դեռատի սիրուն ջիգիտ էր: Նա վորդուն
մտաբերեց այնպես, ինչպես վերջին անգամն էր տեսել նրան: Այդ
այն որն էր, չերը նա Յելմեից դուրս էր գալիս: Վորդին ձին
մոտեցրեց և իրավունք խնդրեց իրան ճանապարհ ձգելու: Նա
հագնված էր և զինված և բռնել էր իր ձիու սանձը: Յուսու-
ֆի կարմրաթուշ, մատղաշ, գեղեցիկ դեմքի և նրա ամբողջ բարձր
ու նուրբ կազմվածքից (հասակով նա հորից բարձր էր) բուրում
էր խիզախութուն, ջահելութուն և կյանքի բերկրութուն: Չնա-
չելով մատաղ հասակին՝ նրա լաչն թիկունքը, շատ լաչն պատա-
նեկական կոնքը և բարակ ու չերկար իրանը, չերկար, ուժեղ ձեռ-
ները և ուժը, ճկունութունը, բոլոր շարժվածքների ճարտարու-
թյունը միշտ ուրախացնում էին նրան, և նա միշտ գմայլում էր
վորդով:

— Դու, լավ և, մնա: Տանը այժմ դու չես մեռակ: Մորը ու
տատիս պահպանիր,— ասաց Հաջի-Մուրադը:

Յեւ Հաջի-Մուրադը մտաբերում էր կարիճութեան և գոտոգութեան այն արտահայտութիւնը, յերբ Յուսուֆը կարմրեց բաւականութեամբ, ասելով, թե, քանի վոր նա վողջ է, վոչվոք նրա մորն ու տատին վատութիւնն չի անիլ: Բայց և այնպէս Յուսուֆը ձի նստավ և մինչև գետակը ճանապարհ ձգեց նրան: Գետակի ափից նա տուն վերադարձավ, և այն ժամանակից Հաջի-Մուրադը չէր տեսել վոչ կնոջը, վոչ մորը և վոչ էլ վորդուն:

Յեւ ահա այդ վորդուն Շամիլն ուզում էր կուրացնել: Իսկ թե ինչ կանեն կնոջը՝ նա դրա մասին մտածել անգամ չէր ուզում:

Այս մտքերը այնպէս հուզեցին Հաջի-Մուրադին, վոր նա այլևս չկարողացավ նստել: Նա վեր թռավ և կաղալով մոտեցավ դռանը, բաց արավ և Նլըարին ձայն տվեց: Արևը տակավին դուրս չէր լեկել, բայց արդեն բոլորովին լույս էր: Սոխակները շարունակում էին լերգել:

— Գնա՛, ասա պրիստավին, թե չես կամենում եմ դրոսնելու գնալ, և ձիերը թամբեցեք, — ասաց նա:

XXIV

Բուսուլերի միակ մխիթարութիւնը այդ ժամանակ ուղմական պոեզիան էր, վորին նա անձնատուր էր լինում վոչ միայն ծառայութեան ժամանակ, այլև մասնավոր կյանքում: Չերքեսները շոր հագած՝ նա ձիով ջիգիտութիւն էր անում, և Բողղանովի չի հետ չերկու անգամ գնաց դարանամուտ լինելու, թեպէտ չերկու անգամ էլ վոչվոքի չէլ չըոնեցին և վոչվոքի չսպանեցին: Հայտնի քաջ Բողղանովի չի հետ ունեցած այդ մերձավորութիւնն ու մտերմութիւնը մի ինչ-վոր գուրեկան և կարևոր բան էր թվում նրան: Իր պարտքը նա թափեց, ահագին տոկոսով հրեայից պարտք վերցնելով, այսինքն՝ միայն հետաձգեց և հեռացրեց անորոշ դրութիւնը: Իր գրութեան վրա նա աշխատում էր չմտածել և բացի ուղմական պոեզիայից, աշխատում էր իրեն մոռացութեան տալ նաև գինով: Որեցոր նա ավելի ու ավելի չէր խմում և որեցոր բարոյապէս ավելի չէր թուլանում: Մարիա Դմիտրիևնայի համար նա այլևս Հովսեփ գեղեցիկը չէր, այլ, ընդհակառակը, նա սկսեց կոպիտ կերպով հետամուտ լինել նրան, բայց իզարմանս իր՝ վճռական ընդդիմադրութեան հանդիպեց, վոր ամոթահար արավ նրան:

Ապրիլի վերջին բերդը չեկավ մի վաշտ, վորին Բարչատինսկին նշանակել էր անանցանելի համարվող ամբողջ Չեչնայի միջով նոր շարժումն կատարելու համար: Այդտեղ կային Կարարդեան գնդից չերկու վաշտ, և այդ վաշտերը, Կովկասում ընդուն-

ված սովորութեան համաձայն, Կուրինյան գնդի վաշտերի կողմից ընդունվեցին վորպէս հյուրեր: Չինվորները բաժանվեցին զորանոցների վրա, և նրանց հյուրասիրում էին վոչ միայն ընթրիքով՝ քաշովիով ու մսով, այլև ողիով, իսկ սպաները տեղավորվեցին սպաների մոտ: Յեւ, ինչպէս ընդունված էր, տեղացի սպաները հյուրասիրում էին չեկվորներին:

Հյուրասիրութիւնը վերջացավ հարեցութեամբ՝ չերգիչներով հանգերձ, և Իվան Մաթվեյիչը սաստիկ հարբած, արդեն վոչ թե կարմիր, այլ գունատ-գորշ չերեսով աթոռն էր հեծել և պատանից հանած թրով կոտորում էր չերեակալական թշնամիներին կամ հայհոյում, կամ հրհոսում, կամ գրկախառնվում մեկի ու մյուսի հետ և կամ իր սիրած չերգը՝ «Шамиль начал бунтоваться в прошедшие годы, трай-рай рататай, в прошедшие годы» չերգել տալիս ու պարում: Բուսուլերն էլ այդտեղ էր: Իրա մեջ էլ նա աշխատում էր ուղմական պոեզիա տեսնել, բայց սրտի խորքում Իվան Մաթվեյիչին խղճում էր, և վոչ մի հնարք չկար նրան կանգնեցնելու: Բուսուլերը, տեսնելով վոր պինին միքիչ խփել է գլխին, կամաց դուրս չեկավ և գնաց տուն:

Կիւլուսինը իր լույսը փռել էր սպիտակ տների և ճանապարհի քարերի վրա: Այնպէս լույս էր, վոր ամեն մի խիճ, շուղ, թրիք չերևում էր ճանապարհին: Տանը մոտենալիս Բուսուլերը պատահեց գլուխն ու վիրը թաշկինակով ծածկած Մարիա Դմիտրիևնային: Մարիա Դմիտրիևնայի ցուլց տված ընդդիմադրութեանից հետո Բուսուլերը, ամաչկոտութեանից, խուսափում էր նրան հանդիպելուց: Իսկ այժմ, լուսնի լուսով և խմած գինու ազդեցութեան տակ, Բուսուլերն ուրախացավ, վոր նրան պատահեց և նորից ուղեց գգվանք ցուլց տալ նրան:

— Ո՛ւր էք գնում, — հարցրեց Բուսուլերը:

— Գնում եմ ձերուկիս տեսնելու, — մտերմաբար պատասխանեց նա: Բուսուլերի հետամուտութիւնը նա մերժել էր միանգամայն անկեղծ և դրականապէս, բայց նրա համար անախորժ էր, վոր վերջին ժամանակներս Բուսուլերը խուսափում էր իրենից:

— Նրան տեսնելու ինչ կարիք կա, կգա:

— Կգա՞ արդ՞ուք:

— Թե վոր չգա, — կրերին:

— Են և վոր՝ եղ լավ չի: Ուրեմն չգնամ, — ասաց Մարիա Դմիտրիևնայն:

— Չե, մի գնաք: Ավելի լավ է, տուն գնանք:

Մարիա Դմիտրիենան չես դարձավ և Բուսուրիի հետ տուն չեկավ: Լուսինը աչնպես սրարզ եր լուսավորում, վոր ճանապարհի կողքից շարժվող սովերի մոտ՝ նրա գլխի շուրջը լուսո փայլ էք շարժվում: Բուսուրը նայում եր այդ փայլին և ուզում եր ասել նրան, թե նա առաջվա պես ելի դուր և գալիս իրեն, բայց չեք իմանում ինչից սկսեր: Մարիա Դմիտրիենան սպասում եր, թե նա ինչ կասի: Այդպես անխոս գրեթե տուն ելին հասել նրանք, չերը անկյունից ձիավորներ դուրս չեկան: Յեկողը մի սպա չեր իր պահակախմբով:

— Յեկողը ո՞վ ե, —ասաց Մարիա Դմիտրիենան և ճանապարհ տվեց:

Լուսինը չեկողին քամակից եր լուսավորում, աչնպես վոր Մարիա Դմիտրիենան նրան ճանաչեց աչն ժամանակ միայն, չերը նա համարյա թե հավասարվեց իրենց: Դա սպա Կամենեն եր, վոր առաջ Իվան Մաթվեյևիչի հետ եր ծառայում, և այդ պատճառով Մարիա Դմիտրիենան նրան ճանաչում եր:

— Պյոտր Նիկոլայևիչ, դ՞ո՞ք եք, — դիմեց նրան Մարիա Դմիտրիենան:

— Յես ինքս եմ, — ասաց Կամենեն: — Ա՛, Բուսուր, բարև: Դեռ քնած չե՞ք, Մարիա Դմիտրիենայի հետ գրոսնո՞ւմ եք: Տեսե՞ք հո, Իվան Մաթվեյևիչից կուտեք: Ո՛ւր ե նա:

— Ա՛յ, լսո՞ւմ եք, — ասաց Մարիա Դմիտրիենան, դեպի աչն կողմը ցույց տալով, ինչ տեղից թուլում ընդի չերած շտուկիան և երգերի ձայներ ելին գալիս: — Քե՞ք են անում:

— Այդ ինչ ե, ձե՞րոնք են քե՞ք անում:

— Վոչ, Խասավ-Յուրթից են չեկել, և ահա նրանց հլուրասիրում են:

— Լավ բան ե: Յես ել կհասնեմ: Յես նրա մոտ միայն մի րոպեկով եմ չեկել:

— Ի՞նչ ե վոր, գո՞րծ կա, — հարցրեց Բուսուրը:

— Մի փոքրիկ գործ կա:

— Լս՞վ թե վատ:

— Նայելով՝ ում համար: Մեզ համար լավ ե, վո՞մանց համար

վատ:

Յե՞վ Կամենենը ծիծաղեց:

Այդ ժամանակ թե հետևակները և թե Կամենենը մոտեցան

Իվան Մաթվեյևիչի տանը:

— Չիխիրև, — գոչեց Կամենենը կազակին, — դեսը, մոտ արի:

Դո՞նեցի կազակը դուրս չեկավ մյուսների միջից և մոտեցավ: Նրա հագինը սովորական, դո՞նեցի կազակի համազգեստ եր, չեր-կարածիտ կոշիկներ, վերարկու և թամբի չետեում մի խուրջին:

— Դե, մի աչն բանը հանիր, — ասաց Կամենենը ձիուց իջնելով:

Կազակն ել ձիուց իջավ և խուրջինից մի տուպրակ հանեց մի ինչ-վոր բանով: Կամենենը կազակի ձեռից ստավ տուպրակը և ձեռը ներս կոխեց:

— Ուրեմն նորութուն ցույց տամ ձեզ: Դուք չվախենաք, — դիմեց նա Մարիա Դմիտրիենային:

— Ինչ վախենալու բան կա, — ասաց Մարիա Դմիտրիենան:

— Ահա, — ասաց Կամենենը, մի մարդու գլուխ հանեց և բըռնեց լուսնի լուսի տակ, — ճանաչո՞ւմ եք:

Դա մի սպրդնած գլուխ եր, աչքերի վրա կառավոր դուրս ցցված, խուզած սև միրուքով և խուզած բեղերով, մի աչքը բաց, մյուսը կիտարաց, արյունաշողախ, կտրտած և չջախջախված աձելած գանգով, սև արյունը քթի մեջ չորացած: Վիզը փաթաթված եր արշուճաթաթախ սրբիչով: Չնայած գլխի բոլոր վերքերին՝ կապտած շրթունքների ծալքում կար մանկական բարի արտահայտություն:

Մարիա Դմիտրիենան նայեց և առանց խոսք ասելու չերեսը շրջեց և արագ քայլերով գնաց տուն:

Բուսուրը աչքը չեր կարողանում հեռացնել այդ զարհուրելի գլխից: Դա աչն իսկ Հաջի-Մուրադի գլուխն եր, վորի հետ մոտանցյալում մտերմական գրույցներ անելով՝ չերեկոսներն եր անցկացնում:

— Այդ ինչպիս չեղավ: Ո՞վ նրան սպանեց, ինչ տեղ, — հարցրեց նա:

— Փախել եր ուզում, բռնեցինք, — ասաց Կամենենը և գլուխը կազակին տվեց, իսկ ինքը տուն մտավ Բուսուրիի հետ միասին:

— Քաջի պես մեռավ, — ասաց Կամենենը:

— Բայց ախր ի՞նչպես պատահեց այդ բոլորը:

— Միքիչ սպասեցեք, Իվան Մաթվեյևիչը կգա, և չես բոլորը մարամասն կպատմեմ: Դրա համար ել չես ուղարկված եմ: Տանում եմ բոլոր ամբոցներն ու առևները և ցույց տալիս:

Մարդ ուղարկեցին Իվան Մաթվեյևիչին կանչելու, և նա չեկավ հարբած, չերկու նուշնպես սաստիկ խմած սպաների հետ, ու սխեց գրկախառնվել Կամենեի հետ:

— Իսկ չես ձեզ համար, — ասաց Կամենենը, — բերել եմ Հաջի-Մուրադի գլուխը:

— Սուտ ես ասում: Սպանեցի՞ք:

— Այո, փախել եր ուզում:

— Յես ասում եյի՛ կխարի: Բայց գլուխը ճւր ե: Դե ցուցա-
տուր:

Կազակին կանչեցին, և նա տոպրակը բերավ: Գլուխը հանե-
ցին, և Իվան Մաթվեյեիչը հարբած աչքերով չերկար ժամանակ
նրան եր նայում:

— Բայց և այնպես կտրիճ եր,—ասաց նա:—Տուր, չես նրան
մի համբուրեն:

Յերբ բոլորն ել նայեցին գլուխը, ավին նորից կազակին:
Կազակը դրեց տոպրակը, աշխատելով այն հատակի վրա դնել այն-
պես, վոր վորքան կարելի չեր թուշլ ձայն հաներ:

— Իսկ ի՞նչ ես ասում, Կամենև, չերբ ցուց ես տալիս,—ա-
սաց սպաներից մեկը:

— Չե, թող չես նրան մի պաչեմ, նա ինձ թուր ե նվիրել:—
պտուտ եր Իվան Մաթվեյեիչը:

Բուռտերը սենյակից դուրս չեկավ: Դրսի դռան չերկրորդ աս-
տիճանի վրա նստած եր Մարիա Դմիտրիևնան: Նա նայեց Բուռ-
տերին և իսկույն չերեսը շուռ ավեց:

— Ի՞նչ ե պատահել, Մարիա Դմիտրիևնա,—հարցրեց Բուռ-
տերը:

— Դուք բոլորը մարդասպաններ եք, տանել չեմ կարող, մար-
դասպաններ, ճշմարիտ,—ասաց նա վեր կենալով:

— Նույնը կարող ե պատահել ամենքին,—ասաց Բուռտերը,
չխմանալով թե ինչ ասել:—Դրա համար ել պատերազմ ե:

— Պատերազմ: Ի՞նչ պատերազմ: Մարդասպաններ եք, ավե-
լի վոչինչ: Մեռած մարմինը հողին պետք ե հանձնել, իսկ սրանք
հոնուտ են: Մարդասպաններ, ճշմարիտ,—կրկնեց նա և աստի-
ճաններից իջնելով՝ չետին դռնով գնաց տուն:

Բուռտերը վերադարձավ սենյակ և Կամենևին խնդրեց ման-
քամասն պատմել, թե գործը ինչպես չեղավ:

Յեվ կամենևը պատմեց:

— Բանն անավասիկ այսպես եր չեղել:

XXV

Հաջի-Մուրադին թուշլատրված եր ձիով գրոսնել քաղաքի մո-
տակաչքում և անպայման կազակ պահակներին ուղեկցութլամբ: Նու-
խում բոլոր կազակները մոտավորապես հիսուն հոգի ելին, վո-
րոնցից իշխանավորները վերցրել ելին մի տասը մարդ, իսկ մնա-

ցլալներին, ինչպես հրամայված եր, չեթե տասը-տասը մարդ ու-
ղար չելին, որամեջ տասը հոգի պիտի նշանակվեր: Այդ պատճա-
ռով առաջին որը տասը կազակ ուղարկեցին, իսկ ապա վորոշե-
ցին հինգ-հինգ մարդ ուղարկել, խնդրելով Հաջի-Մուրադից, վոր
բոլոր նոքարներին հետը չտանի:

Սակայն ապրիլի 25-ին Հաջի-Մուրադը բոլոր հնգի հետ գնաց
գրոսնելու: Այն ժամանակ, չերբ Հաջի-Մուրադը ձի չեր հատում,
դինվորական կառավարիչը նկատեց, վոր բոլոր հինգ նոքարները
պատրաստվել են Հաջի-Մուրադի հետ գնալու, և ասաց, թե նրան
չի թուշլատրված բոլորին հետը տանել, բայց Հաջի-Մուրադը
ձեացրեց, թե չլսեց, ձին շարժեց, և դինվորական կառավարիչն
ել չպնդեց: Կազակների հետ եր Գետրգի շքանշան ունեցող ու-
ղյաղնիկ շիկահեր Նազարովը, վորի ճակատի և ծոծրակի մազերը
խուզված ելին փակագծի պես, և վորը ջահել եր, քաջառողջ, և
թշերից ասես արջուն եր կաթում: Հին հավատի մի ընտանիքից
լինելով՝ նա տան մեծն եր, մեծացել եր անհաչր և կերակրում եր
պառավ մորը՝ չերեք աղջիկներին և չերկու չեղբայրներին հետ միասին:

— Տես, Նազարով, հեռու չթողնես,—գոչեց դինվորական
կառավարիչը:

— Կտեմ եմ, ձերդ ազնվութլուն,—պատասխանեց Նազարովը
և ասպանզակների վրա կանգնելով, մեջքի հրացանը բռնելով՝ ա-
րագորեն քչեց իր լավ, խոշոր շառատ կոտած ձին: Նրա հետ չորս
կազակ եր գնում: Ֆերապոնտովը, վոր բարձրահասակ եր, նիհար,
առաջին գողն և ավարառուն,—հենց նա, վոր Համգալուին վա-
ռող եր ծախել: Իգնատովը, վոր ծառայութլունը վերջացնում եր,
ջահել չեր, ատող ռամիկ եր, և պարծենում եր իր ուժով: Միշկինը՝
մի թուշամորթ, դեռահաս պատանի, վորի վրա ամենքը ծիծաղում
ելին, և Պետրակովը, վոր չերիտասարդ եր, շիկահեր, մոր միակ
զավակը, միշտ սիրալիր և ուրախ:

Առավոտից մեզ եր, բայց կեսորին չեղանակը պարզվեց, և
արեգակը փայլում եր թե նոր միայն բացված տերևների, թե մատ-
ղաշ, կուսական արտախ, թե դեռարուչս հացարուչսերի, թե արա-
զահոս վեռ-վեռ դետի վրա, վոր չերևում եր ճանապարհի ձախ
կողմում: Հաջի-Մուրադը գնում եր քայլով: Կազակներն ու նո-
քարները, չեռ չմնալով, հեռուում ելին նրան: Քայլ-քայլ գնալով
դուրս չեկան ամրոցի չետեի ճանապարհը: Պատահում ելին կա-
նալը՝ կողովները գլխներին, դինվորներ՝ սալներին նստած և գո-
մեշներ լծած ճոնչան արաբաներ: Մի չերկու վերստ հեռանալուց

հետո Հաջի-Մուրադը մտրակեց իր կարարդական սպիտակ ձինս. նա աչնպես արագ եր քշում, վոր նրա նոքարները, չետ չմնալու համար, իրենց ձիերը վազեցնում էին: Այդպես ել քշում էին կազակները:

— Եիս, տակինը լավ ձի չե,—ասաց Ֆերապոնտովը.— Թե վորեն ժամանակ լիներ, չերբ հաշտ չեր, չես նրան կիջեցնելի:

— Հա, չեղբայր, Թիֆլիսում ել եդ ձիու համար չերեք հաբուր մանեթ էին տալիս:

Իսկ չես իմ ձիովս նրա առաջը կկտրեմ,—ասաց Նազարովը:

— Ինչպես չե, առաջը կկտրես,—ասաց Ֆերապոնտովը:

Հաջի-Մուրադը ընթացքը շարունակ արագացնում եր:

— Ե՛յ, կուճակ, եղպես չի կարելի: Կամաց,—գոռաց Նազարովը՝ Հաջի-Մուրադին հասնելով:

Հաջի-Մուրադը չետ նայեց և, առանց մի խոսք ասելու, առաջվա պես շարունակեց արագ գնալ. ընթացքը չզանդաղեցնելով:

— Տես, եդ սատանաները մի ինչ-վոր բան են մտածել,—ասաց Իգնատովը.— Տես, թե ինչպես են քշում:

Այսպես մի վերստի չափ գնացին դեպի սարերը:

— Ասում եմ, չի կարելի,—նորից գոռաց Նազարովը:

Հաջի-Մուրադը չպատասխանեց և չետ ել չնայեց, բայց միայն ընթացքն եր արագացնում. այժմ նա գնում եր սրարշավ:

— Միալում ես, չես փախչիլ,—աղաղակեց Նազարովը, իրեն սաստիկ վիրավորված զգալով:

Նա մտրակեց իր խոշոր շառատ կոտածը և ասպանդակների վրա թեթևակի բարձրանալով և դեպ առաջ թեքվելով՝ ձիու գլուխը բաց թողեց Հաջի-Մուրադի լետեից:

Յերկինքը աչնպես պարզ եր ու վճիտ, ողը աչնպես թարմ եր, Նազարովի հոգում կյանքի ուժերն աչնպես բերկրալից էին խալտում, չերբ նա, ամբողջ ելուժյամբ միաձուլված իր ուժեղ ձիու հետ՝ թռչում եր Հաջի-Մուրադի լետեից, վոր նրա մտքովն ել չեր աչնցնում, թե կարող ե մի վորեե տիրալի կամ սարսափելի բան պատահել: Նա ուրախ եր, վոր ամեն մի վոստրուճով մոտենում եր Հաջի-Մուրադին և հասնում նրան: Մոտեցող խոշոր ձիու տրոփուճից Հաջի-Մուրադը հասկացավ, վոր կազակը շուտ վրա չե հասնելու և, աջ ձեռով ատրճանակը բռնելով, ձախով սկսեց թեթև սանձահարել իր տաքացած ձին, վոր նուճնպես ձիու գոփուճն եր լսում իր լետեում:

— Չի կարելի, ասում եմ,—աղաղակեց Նազարովը, վոր հե-

տըղհետե բոլորովին հավասարվել եր Հաջի-Մուրադին և ձևոր մեկ-նեկ նրա ձիու սանձը բռնելու: Բայց նա դեռ չկարողացավ սանձը բռնել, չերբ տրաքոց լավեց:

— Եդ ի՞նչ ևս անում,—գոռաց Նազարովը և կուրճքը բռնեց:— Տղերք, խփեցեք դրանց,—ասաց նա և չերերվելով ընկավ թամբի ալեղի վրա:

Բայց լեռնականները կազակներից առաջ զենքի դիմեցին և սկսեցին ատրճանակ արձակել նրանց վրա ու թրերով կոտորել: Նազարովը կախ եր ընկած ձիու պարանոցից, վոր նրան ման եր ածուճ ընկերների շուրջը: Իգնատովի տակի ձին ընկավ և նրա վոտը ճնշեց: Լեռնականներից չերկուսը թրերը պատչանից հանած՝ ձիերից չիջնելով, հարվածներ եր վոր տեղում էլին նրա գլխին ու ձեռներին: Պետրակովը, վոր վազել եր ընկերոջն ուղնելու, հենց այդտեղ չերկու գնդակի հարված ստացավ՝ մեկը մեջքին, մյուսը կողքին՝ և նա տալրակի պես գլորվեց ձիուց:

Միշկինը ձիու գլուխը շուտ տվեց և դեպի բերդը սրացավ: Խանեֆին Խան-Մահոմադի հետ նրա լետեից ընկան, բայց նա արդեն շատ եր առաջ գնացել, և լեռնականները չկարողացան հասնել նրան:

Խանեֆին ու Խան-Մահոման, տեսնելով, վոր կազակին հասնել չեն կարող, չետ վերադարձան: Իգնատովին դաշուճնով վերջ տալուց հետո Համգայոն Նազարովին ել ձիուց վեր ձգեց և մորթեց: Խան-Մահոման սպանվածների վրայից հանեց փամփուշտների պաշուսակները: Խանեֆին ուզում եր վերցնել Նազարովին, բայց Հաջի-Մուրադը աղաղակեց նրան, թե հարկավոր չե, ու ճանապարհը շարունակեց: Նրա մյուսերիցները ձիերը վազեցրին նրա լետեից, չետ քշելով Նազարովի ձին, վոր վազում եր նրանց լետեից: Նուխուց նրանք չերեք վերստ հեռացել էին արդեն և բրնձի արտերումն էլին, չերբ բերդի աշտարակից կրակոց լսեցին. դա նշան եր, թե վտանգ կա:

Պետրակովը՝ կտրատված փոքրով, փախած եր գետնին՝ Չահել դեմքը դեպի չերկինք դարձրած և, ձկան պես, բերանը բաց ու խուճի անելով՝ մեռնում եր:

— Վա՛յ ինձ, եդ ի՞նչ եք արել,—գոռաց բերդապետը գլուխը բռնելով, չերբ Հաջի-Մուրադի փախուստն իմացավ:— Գլուխս կտրեցիք: Բաց եք թողել, ավազակներ, —գոռում եր նա Միշկինի գեկուցումը լսելով:

Ամեն տեղ մարդկանց վոտքի կանգնեցրին, և վոչ միայն

ներկա գտնվող կազակներն ուղարկվեցին փախչողներին չետեից, այլ և խաղաղ աուլներին հավաքեցին բոլոր ժամանակավոր զինվորներին, վորոնց կարելի չէր հավաքել: Հայտարարվեց, թե հազար ուրբի նվեր կտանա այն մարդը, վորը Հաջի-Մուրադին կրերի վողջ կամ մեռած: Յեվ չերկու ժամ անց՝ նրանից հետո, չերը Հաջի-Մուրադն իր մարդկանցով փախավ կազակների մոտից, չերկու հարյուր հոգուց ավելի ձիավորներ, պրիստավի առաջնորդութամբ, սլացան փախչողներին փնտռելու և բռնելու:

Մեծ ճանապարհով միքանի վերստ անցնելուց հետո Հաջի-Մուրադը իր ծանր հեացող և քրտնքից գորշացած սպիտակ ձին սանձահարեց և կանգ առավ: Ծանապարհի աջ կողմում չերեում էլին Բեկարջիկ աուլի մինարեթն ու խրճիթները, իսկ ձախ կողմում—արտեր, վորոնց ծայրին նկատվում էր գետը: Չնայելով վոր սարերը տանող ճանապարհը անցնում էր աջ կողմից, բայց Հաջի-Մուրադը ծոեց հակառակ կողմը՝ դեպի ձախ, այն հաշվով, վոր նրան հետամուտ չերողները հենց դեպի աջ կզնան: Իսկ ինքը, առանց ճանապարհի, Ալազանն անցնելուց հետո, դուրս կգա մեծ ճանապարհը, ուր նրան վողջվող չի սպասի, ու այդ ճանապարհով անտառը կհասնի և ապա միայն՝ նորից գեան անցնելով, գաղտուկ սարերը կզնա: Այդ վորոշումը կայացնելով՝ նա ծոեց դեպի ձախ: Բայց մինչև գետը գնալն անհնարին էր: Բրնձիարտը, վոր նա պիտի անցներ, ինչպես դարնանը միշտ անում են, նոր էր միայն ջրով լցված և ճահիճ դարձած, և նրա մեջ ձիերը խրվում էլին կոճից բարձր: Հաջի-Մուրադը և նրա նոքարները փորձում էլին գնալ դեպի աջ, դեպի ձախ, կարծելով, թե ավելի չոր ճանապարհ կգտնեն, բայց այդ արտը, ուր նրանք ընկել էլին, ամբողջովին հավասարաչափ ջրով լի չէր, և հողն էլ ջրով ծծված: Չիերը խցանների տրաքոցի պես դուրս էլին հանում կաշող տղմի մեջ խրված իրենց վոտները և միքանի քալ անելուց հետո՝ ծանր հեարով, կանգ էլին առնում:

Այսպես նրանք այնքան չերկար չարչարվեցին, մինչև վոր սկսեց չերեկոյանալ, բայց նրանք դեռևս գետը չէին հասել: Չախ կողմում նորբաց թփերի մի կզգի կար, և Հաջի-Մուրադը վճեց այդ թփերի մեջ մտնել, տանջված ձիերին հանգստութուն տալ և մինչև գիշեր այնտեղ մնալ: Մտնելով թփերի մեջ, Հաջի-Մուրադը և նրա նոքարները ձիերից իջան և, նրանց վոտներին կապանքներ դնելով, թողին արածելու, իսկ իրենք կերան իրենց հետ վերցրած հացն ու պանիրը: Մահիկը, վոր սկզբում լուսավո-

րում էր, սարերի չետեը մտավ, և տիրեց խավար գիշեր: Նուխում սոխակներ շատ կալին: Այս թփերում էլ չերկուսը կար: Քանի դեռ Հաջի-Մուրադն իր մարդկանց հետ աղմուկ էլին հանում թփերը մտնելիս, սոխակները լուռ էլին, բայց չերը մարդիկ լոեցին, նրանք նորից, միմյանց ձայնակցելով, դալալեցին: Հաջի-Մուրադը՝ գիշերվա ձայներին ականջ դնելով, ակամա նրանց էլ ականջ էր դնում:

Յեվ նրանց ճովողը հիշեցրեց Համզաթի մասին չեղած այն չերզը, վոր նա լսեց այս գիշեր, չերը դուրս չեկավ ջուր տանելու: Այժմ նա ամեն մի բոպե կարող էր Համզաթի դրութան մեջ լինել: Նրա մտքովն անցավ, թե այդպես էլ լինելու չե, և հանկարծ լրջութուն տիրից նրա հոգում: Նա չափնջին փոեց և նամազ կատարեց: Հաղիվ միայն նամազը վերջացրել էր, չերը թփերին մոտեցող ձայներ լսեց: Դա բազմաթիվ ձիերի վոտների ձայներն էլին, վորոնք չփչփում էլին ճահճում: Մրատես Սան-Մահոման դուրս չեկավ թփերի մի ծայրը և աղջամղջում տեսավ ձիավոր ու հետեակ մարդկանց սովերներ: Մի այդպիսի խումբ էլ Սանեֆին տեսավ մուս կողմում: Դա Դորդանովը էր, գավառի զինվորական կառավարիչը, իր միլիցիոներների հետ:

«Ի՞նչ կա, Համզաթի պես կմեռնենք», մտածեց Հաջի-Մուրադը:

Յերը վոտանգի նշանը տրվեց, Դորդանովը՝ հարյուր միլիցիոներների ու կազակների հետ, Հաջի-Մուրադի չետեից ընկավ, բայց վողջ մի տեղ վողջ նրան, վողջ էլ նրա հետքերը գտավ: Դորդանովն արգեն հուսը կտրած տուն էր վերադառնում, չերը իրիկ-նապահին նրան մի ձերունի պատահեց: Դորդանովը ձերունուց հարցրեց, թե ձիավորներ հո չի տեսել: Մերունին պատասխանեց, թե տեսել է: Տեսել է, ինչպես վեց ձիավոր բրնձի արտում պտտում էլին և այն թփերը մտնում, ուր նա փայտ էր հավաքում: Մերունուն հետը վերցնելով՝ Դորդանովը չեա վերադարձավ և վոտնակապ ձիեր տեսնելով՝ հավաստիացավ, վոր Հաջի-Մուրադը այդտեղ է: Այդ իսկ գիշերը շրջապատեցին թփերը և սկսեց սպասել լուսը բացվելուն, վոր Հաջի-Մուրադին բռնի վողջ կամ մեռած:

Հաջի-Մուրադն էլ՝ հասկանալով, վոր շրջապատված էր, թփերի մեջտեղում ջրի մեջ մի հին խանդակ տեսնելով, վորոշեց նստել այնտեղ և պաշտպանվել, քանի գնդակներ ու վառոդ և ուժ կունենա: Նա այդ հայտնեց իր ընկերներին և պատվիրեց, վոր

առվի ալզ փոսում պատնեշ շինեն: Յեվ նոքարներն անհապաղ սկսեցին ճյուղեր կտրատել, դաշուհնով հողը փորել և հողակուլտ շինել: Հաջի-Մուրադն էլ աշխատում էր նրանց հետ միասին:

Հենց վոր սկսեց լուսանալ, թփերին մոտեցավ միլիցիոններ-ների հարյուրապետը և աղաղակեց.

— Ե՛յ, Հաջի-Մուրադ, անձնատուր լեղիր: Մենք շատ ենք, դուք քիչ:

Իբրև պատասխան առվի խանդակից ծուխ շերեաց, հրացա-նը ճալթեց, և գնդակը կալով զինվորի ձիուն, վոր լերերվեց նրա տակ և ընկավ: Դրանից հետո թփերի ծալրին կանգնած միլիցիո-ներներն հրացանները ճալթեցին, և նրանց զնդակները սուլելով և դժժալով, ծառերի տերևներն ու ճյուղերը կտրտելով՝ զիպչում էին պատնեշին, սակաչն պատնեշի լիսեում նստած մարդկանց չեկին կաշում: Կպան միայն Համզալուի հեռացած ձիուն: Նրա գլուխն էր վիրավորվել. նա վալը չընկավ, այլ վոտներն կապը կտրատելով և թփերը կտրատելով մյուս ձիերի մոտ վազեց, սեղ-մըվեց նրանց, իր արյունով նորարույս խոտը թրջելով: Հաջի-Մուրադը և նրա մարդիկը միայն աչն ժամանակ էին հրացան արձակում, չերը զինվորներից մեկն ու մեկը առաջ էր գալիս, և հազիվ էին վրիպում: Զինվորներից չերեք մարդ վիրավորվեց, և մնացելները մոչ միայն չեկին վստահանում հարձակվել Հաջի-Մուրադի և նրանց մարդկանց վրա, այլ ավելի և ավելի էին հե-ռանում նրանցից և հեռվից էին հրացան արձակում՝ առանց նշանի:

Այդպես տեեց մի ժամից ավելի: Արևը կես ծառի չափ բար-ձրացել էր, և Հաջի-Մուրադը մտածում էր ձի նստել և փորձել նրանց միջից դեպի գետն անցնել, չերը լավիցին նորեկ մի մեծ լամբի աղաղակները: Դա մեհթուրեցի Հաջի-աղան էր իր մարդկանց հետ: Նրանք մոտավորապես չերկու հարյուր հոգի էին: Մի ժամանակ Հաջի-աղան Հաջի-Մուրադի մտերիմն էր և նրա հետ ապրում էր սարերում, բայց հետո ուռաների կողմն անցավ: Նրանց հետ էր և Անմեդ-խանը, Հաջի-Մուրադի թշնամու վորդին: Դորդանովի պես Հաջի-աղան էլ սկսեց նրանով, վոր աղաղակեց Հաջի-Մուրադին՝ անձնատուր լինել, բայց, ինչպես և առաջին անգամ, Հաջի-Մու-րադը պատասխանեց հրացանաձուլությամբ:

— Թրերով, տգեք, — բղավեց Հաջի-աղան՝ իրը հանելով, և լավեցին հարյուրավոր մարդկանց ձայներ, վորոնք ճիչ բարձրացրած՝ նետվեցին դեպի թփերը:

Միլիցիոններները դեպի թփերը վազեցին, բայց պատնեշի լիսեից, մեկը մյուսից հետո, միքանի կրակոց լավեց: Յերեք մարդ ընկան, և հարձակվողները թփերի ծալրին կանգ առան և նույն-պես սկսեցին հրացան արձակել: Նրանք արձակում էին և կա-մաց-կամաց պատնեշին մոտենում, մի թփից դեպի մյուսը վազե-լով: Վոմանք կարողանում էին վազել, վոմանք Հաջի-Մուրադի և նրա մարդկանց զնդակների տակ էին ընկնում: Հաջի-Մուրադը անվրեպ էր խփում. նույնպես հազիվ էր պատահում, վոր Համզա-լուի զնդակները դուր անցնեն, և նա ուրախ-ուրախ ճչում էր ա-մեն անգամ, չերը տեսնում էր, վոր զնդակները դիպչում են: Դուրբանը փոսի լեղերքին նստած «Լա իլլահ իլ ալլահ» էր չեր-գում և, առանց շտապելու, հրացան էր ձգում, բայց հազիվ էր կպչնում: Ելդարը ամբողջ մարմնով դողում էր անհանգստությու-նից, թե չերը պիտի դաշուհնով հարձակվի թշնամիների վրա և կրակում էր հաճախ ու աչն էլ ինչպես պատահեր, անդադար Հաջի-Մուրադի վրա նայելով և պատնեշից դուրս ցցվելով: Փրշտա-Սանեֆին ալստեղ էլ քշտած թեքերով ծառալի պաշտոն էր կա-սարում: Նա լցնում էր Հաջի-Մուրադի և Դուրբանի ավամ հրա-ցանները, չերկաթե ձողիկով ներս խրելով չուղոտ փալասներով փաթաթած զնդակները և վառողամանից չոր վառոդ էր ածում չախմախի վրա: Իսկ Սան Մահոման ուրիշների պես խանդակում չեր նստում, այլ փոսից ձիերի մոտ էր վազում, ավելի ապահով տեղ քշելով նրանց, անդադար ձչում էր և առանց նեցուկի հրա-ցան արձակում: Առաջինը նրան վիրավորեցին: Գնդակը կալով նրա վզին, և նա նստավ հետուքի վրա, արյուն թեքելով ու հի-շոցներ տալով: Ապա վիրավորվեց Հաջի-Մուրադը: Գնդակը ծա-կել էր նրա ուսը: Հաջի-Մուրադը բեշմեթից բամբակ պոկեց, կո-խեց վերքի մեջ և շարունակեց կրակել:

— Թրերով կավենք, — չերրորդ անգամ ասաց Ելդարը:

Նորից նա պատնեշից դուրս ցցվեց, պատրաստ թշնամիներ-րի վրա հարձակվելու, բայց այդ իսկ վալրկյանին զնդակը կալով նրան, նա չերերվեց և չերան ի վալը ընկավ Հաջի-Մուրադի վոտ-ների վրա: Հաջի-Մուրադը նալեց նրան: Վոչխարի գեղեցիկ աչ-քերը լուրջ և անքթիթ նայում էին Հաջի-Մուրադին: Դուրս ըն-կած շրթունքով բերանը, ինչպես չերխաներինն է լինում, ցընց-վում էր, բայց չեր բացվում: Հաջի-Մուրադը վոտը հանեց նրա տակից և շարունակեց նշան դնել: Սանեֆին կոացավ սպանված Ելդարի վրա և սկսեց նրա չերքեակացից հանելով՝ ջոկել շար-

ձակված գնդակները: Մինչդեռ Ղուրբանը դարձյալ չեղբուս էր, հրացանը դանդաղ լցնելով և նշան բռնելով:

Թշնամիները՝ աղմկով ու ճչով մի թփից դեպի մյուսը վազելով, ավելի և ավելի մոտենում էին: Մի գնդակ էլ դիպավ Հաջի-Մուրադի ձախ կողքին: Նա պառկեց առվի փոսում և, դարձյալ բեշմեթից մի կտոր բամբակ պոկելով, վերքը խցեց: Կողքի այդ վերքը մահացու չեր, և նա զգում էր, վերմեռնում է: Նրա չերե-վակայութչան մեջ հիշողութչուններն ու դեմքերը արտասովոր արագութչամբ փոխարինում էին միմյանց: Նա իր առջև տեսնում էր կամ քաջակորով Աբունունցալ-խանին, թե ինչպես նա՝ մի ձեռով կտրած ու կախ ընկած այտը բռնելով, մյուսով դաշուհնը բռնած՝ թշնամու վրա չեր հարձակվում, կամ տեսնում էր թուլ, արյունը ցամաքած Վորոնցովին՝ խորամանկ սպիտակ դեմքով և նրա մեղմ ձայնը լսում, կամ Յուսուֆ վորդուն էր տեսնում կամ Սոփիաթ կնոջը կամ իր թշնամի Շամիլի գունատ, հրաշեկ մորուքով ու կկոցած աչքերով դեմքը:

Յեզ այս բոլոր հիշողութչունները սլանում-անցնում էին նրա չերակայութչան մեջ, առաջ չերերելով վոչ մի զգացում, վոչ մի շարութչուն և վոչ մի ցանկութչուն: Այդ բոլորը այնպիսի չընչին բաներ էին համեմատած այն բանի հետ, ինչ վոր սկսվում էր և ինչ վոր արդեն սկսվել էր իր համար: Վերջին ուժը նա հավաքեց, պատենելի չեռեից վեր կացավ և ատրճանակից կրակեց մոտ վազող մի մարդու վրա, և կպավ: Այդ մարդը ընկավ: Հետո նա բոլորովին դուրս չեկավ փոսից և դաշուհնը ձեռին, կաղալով գնաց ուղղակի թշնամիների դեմ: Լավեց մի քանի կրակոց. նա չերերվեց ու ընկավ: Միլիցիոներներից մի քանի հողի հաղթական ձայներով վազեցին ընկնող մարմնի մոտ: Բայց ինչ վոր նրանց մեռած մարմին էր թվում, հանկարծ շարժվեց: Սկզբում բարձրացավ արյունաշաղախ, առանց փափախի, աժեղած գլուխը, ապա իրանը և, ծառից բռնելով, ամբողջովին վոտքի կանգնեց: Նա այնչափ սարսափելի չեր թվում, վոր մոտ վազողները չեռ քաշվեցին: Բայց նա հանկարծ ցնցվեց, ծառից չեռ քաշվեց և իր ամբողջ հասակով, հնձած մագարիկոնի պես, փռվեց չերեսն իվալը և այլևս չշարժվեց:

Նա չեր շարժվում, բայց տակավին զգում էր: Յերբ առաջինը նրա մոտ վազող Հաջի-Աղան մեծ դաշուհնով հարվածում էր նրա գլուխը, նրան թվում էր, թե մուրճով տալիս են գլխին, և նա չեր կարողանում հասկանալ, թե ով է այդ անում և ինչու:

համար: Դա նրա գիտակցութչան վերջին կայն էր մարմնի հետ: Այնուհետև նա այլևս վոչինչ չեր զգում, և թշնամիները կոխկոտում էին այն, ինչ վոր արդեն ընդհանուր վոչինչ չուներ նրա հետ: Հաջի-Աղան վոտքը նրա մեջքին դրեց և չերկու հարվածով նրա գլուխը կտրեց և, զգուշութչամբ, վորպեսզի չուվակեցր արյունով չկեղտոտի, վոտով գլորեց նրան մի կողմ: Վզի չերակներեց ցայտեց վարդապուչն արյուն, իսկ գլխից՝ սև, ու վողողեց խոտը:

Թե Ղորդանովը, թե Հաջի-Աղան, թե Ահմեդ-խանը և թե բոլոր զինվորները, ինչպես վորսորդը սպանված գազանի մոտ, խըմբվել էին Հաջի-Մուրադի և նրա մարդկանց (Սանեֆիին, Ղուրբանին և Համգալովին կապեցին) մարմինների շուրջը և վոտոգի ծխով պատած թփերի մեջ կանգնած՝ ուրախ-ուրախ զրուցելով՝ տոնեցին իրենց հաղթանակը:

Հրացանաձողութչան ժամանակ լուսած սոխակները կրկին ճըրվողեցին, նախ մեկը՝ մոտիկ տեղում, ապա ուրիշները—հեռավոր ծալրին:

Անավասիկ հենց այս էր, վոր ինձ հիշեցրեց դաշտի մեջ տրորված մագարիկոնը:

1896—1898. 1901—1904.

1896 թ. սկսելով «Հաջի-Մուրադ» վիպակը՝ Լ. Տորտոչը
 քրոնի և առաջին հատվածը, ջնջում և, անմիջապես գրանից հետո,
 նույն տետրակում, գալիս և II հատվածը:

1.

Այդ վաղ եր, սրանից 70 տարի առաջ, չերը սկսվեց ուս-
 ների պատերազմը Կովկասի լեռնականների դեմ: Այդ ժամանակ
 լեռնականների մի փոքրիկ մասը հպատակվում եր ուսաներին,
 մյուսն ազատ ապրում եր սարերում, չեր ընդունում և վոչ մեկի
 իշխանութուն, և չերրորդ մասը մերթ առ չերես հպատակվում
 եր ուսաներին, չերը նրանց հետ կովի չեր կարողանում, մերթ նո-
 րից ապստամբում և պատերազմում եր նրանց դեմ: Այդպես ելին
 այն ժամանակ Դաղստանի բոլոր ժողովուրդները: Դաղստանը մի
 լեռնոտ չերկիր ե՝ բարձրաբերձ սարերի և Կասպից ծովի միջև:
 Դաղստանում ամենաուժեղ ժողովուրդը ավարացիներն ելին: Ա-
 վարացիներին այդ ժամանակ կին եր կառավարում՝ հանգուցյալ
 խանի ալրին, Պախու-Բիլի խանունին: Խանունին չափահաս վոր-
 գիք ուներ, սակայն խելացի պատամի ինքն եր կառավարում չեր-
 կիրը և ինքն եր բանակցութուններ վարում ուսաների և սահ-
 մանակից խաների հետ, Մենթուլայի և Կյուրիի խաների հետ: Խա-
 նութուններից մեկում նրա չերգվյալ թշնամի Ահմեդ-խանն եր
 իշխում (սա ներել չեր կարողանում, վոր խանունին իր Սալթա-
 նեթ գուստրը նրան կնության չավից, այլ ավից թարկովցի Շամ-
 խալին), մյուսում տիրապետողը մեռել եր, խանունին կամենում
 եր տիրել այդ խանութունը և այդ նպատակի համար ուսաներից
 ոգնութուն եր խնդրում և այդ պատճառով նրանց հետ բարեկա-
 մութուն եր անում:

11.

1.

Հաջի-Մուրադը ծնվել է Կովկասում աչն ժամանակ, չերք ուուսներն սկսել են նրան նվաճել: Նա ծնվել է Գաղստանում՝ Սուու-զախ աուուում: Նրա մայրը՝ գեղեցկուուհի լիզգի Փաթիմաթը, դրա-նից մի տարի աուաջ Սուլթան-Ահմեդ-խանի մոտ ծծմայր եր լե-զել: Իր Ոսման տղան բերած լինելով՝ նա խանի լերկրորդ վոր-դուու եր ծիծ տալիս: Ոսմանը մեծացավ տատի շնորհիվ, նա նրան կերակրեց: Այժմ, չերք Փաթիմաթը չերրորդ լերխան՝ Հաջի-Մուրադին եր բերել, Պախու-Բիլե խանուուհին կրկին նրա լետեից մարդ ուղարկեց՝ գալ լերկրորդ լերխալին ծիծ տալու, վոր Հա-ջի-Մուրադից միքիչ ուշ եր ծնվել: Բայց Փաթիմաթը չուղեց, և նրա հայրը, բարեպաշտ հաջի Ալի-Գիրեյը, այդ կողմից պաշտպա-նեց նրան: Ալի-Գիրեյը, վոր գեուես նախկին Ոմար-խանի գեմ կովել եր, ասուում և արհամարհուում եր ալժմյան Սուլթան-Ահմեդ-խանին նրա համար, վոր Սուլթան-Ահմեդը հպատակվել և լերդ-վել եր անհավատ ոուսներին:

2.

Փաթիմաթը վոչ մի վորդուու աչնպես չեր սիրուում, ինչպես Հաջի-Մուրադին, և չեր կարելի չսիրել սեորակ, ինչպես... աչքե-րով, կալտուու, վաուողի պես արապավազ սիրուուն տղալին: Ծերու-նի պապը բոլոր լերխաներից ամենից շատ նրան եր սիրուում և նրա անուուը գրել եր «լետացող ջուր»: Մայրը վորդուուց չեր բա-ժանվուում և թե խոտ, թե արտ հնձելու և թե փալտ բերելու հա-մար անտուու գնալիս նրան միշտ տանուում եր հետը:

3.

Պապը տղալին թե տաճկերին և թե արաբերին կարգալ-գրել եր սովորեցնուում և հաուաջագիմուլջան համար, չերք նա 10 տարե-կան լեղավ, մի արծաթապատ դաշուուց և հրացան ընծալեց տղալին:

4.

Նա նրան իրեն հետ տանուում եր և աչն ժամանակ, չերք սա-րերն եր գնուում՝ բարեկամների մոտ: Մի ալդպիսի ուղևորուլջան ժա-մանակ Հաջի-Մուրադը աուաջին անգամ ոուես գինվորներ տեսավ:

Նա տեսավ, թե ինչպես նրանք իրենց թալանած աուլից վերա-դաուուում են լերգելով ու պարելով, հարբած, իսկ աուլում նա տեսավ սպանված լերխաներ ու կանալք: Այդ տեսարանը նրա հիշողուլջուունից վոչ մի կերպ դուրս չեր գալիս: Յեկ այդ որից ի վեր նա ոուսներին ատելով ասուում եր: «Ինչու լեն լեկել նրանք», — հարցրեց նա պապին: — «Ալլահն և նրանց մեր գլխին պատուեսա ուղարկել», — պատասխանեց պապը:

5.

Յերք տղան 13 տարեկան լեղավ, նա դաշուուցը ձուուին հար-ձակվեց մի չափահաս պատանու վրա և կսպաներ, լեթե նրան չվիրավորելին և չկապելին: Այդ տեղի ուեսեցավ աղբուրի մոտ: Տղերքը հանաքներ ելին անուում, և նրանցից մեղը Հաջի-Մու-րադի մոր մասին կատակ արավ և ասաց, թե Ոսմանը խանի վոր-դին ե, վոչ թե հորը: Հաջի-Մուրադը բուսկեց և կսպաներ նրան, լեթե տղաները չհարձակվելին նրա վրա և դաշուուցը ձուուրից չխը-լելին:

6.

Պապը ոուուսնական և սուրբ մարդկանց մոտ եր գնուում և մի անգամ ել Հաջի-Մուրադին տարավ Ոմար-մուլլալի մոտ, վոր մի խուլ տեղուում եր ապրուում և շարխաթի, թարաքաթի և մարա-ֆաթի մասին եր խոսուում: Մարաֆաթին անկարելի լե հասնել: Հաջի-Մուրադը վճուեց, վոր ինքը կհասնի: Յեկ նա ակեսց սովո-րել ու աղոթել: Բայց այդ ժամանակ նա Սանուումին սիրեց: Յեկ նա տրաքվուում եր: Սոստացան նրան ամուսնացնել: Նրան ամուս-նացրին: Նա պարծեսուում եր, վոր տղամարդ եր, սիրուում եր Սա-նուումի հետ լինել: Այդ ժամանակ ամենից շատ նրան աչն եր գրաղեցնուում, վոր նա ջիգիտ եր: Ջրաղեցնուում եր և աչն, թե ու-րիշների աչքուում ինքը ինչպես եր... հագուուտը: Ամեն բանուում նա աուաջինն եր՝ թե կովելիս, թե վաղելիս և թե արշավելիս: Բայց այդ բոլորը նրան զգլեցրել եր:

7.

Այդ ժամանակ գործով հուուրեր ելին լեկել, մեկը մի ծանոթ ձուուուի լեր, իսկ մյուսը, վոր աուաջ լերբեք չեր լեղել, — մի մու-լա: Մուլլան ասուում եր, թե մուսուլմանները աստծու մոտացել են, անհավատների հետ հարաբերուլջուուն են ուեսնուում, և միակ վորը-

կությունը խաղալովն է: Հաջի-Մուրադը հիշեց ուսուների ավերած առելը և վճռեց, վոր մշուրիդ լինի: Նա վճռեց Ղազի-մուլլայի մոտ գնալ:

III.

Յերբ Ասլան-բեկի կինը՝ Փաթիմաթը, չերկրորդ չերեխան՝ Հաջի-Մուրադին բերեց, և արդեն չերկու շարաթ կլիներ, վոր նրան կերակրում էր, Ավարիայի Ոմար-խանի կողմից նրանց տունը զեսպաններ չեկան: Դեսպանները պահանջում էին, վոր Փաթիմաթը գնա Ոմարի չերկրորդ վորդու ծծմալը լինի: Փաթիմաթը ծիծ էր ավել խանի վորդկերանցից մեկին, չերբ նա իր անդրանիկ Ոսման աղան էր բերել, և այժմ Պախու-Բիկե խանուհին կամենում էր, վոր Փաթիմաթը չերկրորդ աղային էլ ծիծ տար:

— «Ուրիշ ծծմալը չես չեմ ուզում»,—ասաց խանուհին պաններին:— «Ամբողջ Դադաստանում Փաթիմաթը ամենագեղեցիկ, ուժեղ և համեստ կինն է: Նրան սիրում եմ քրոջ պես և ամեն բան, ինչ վոր թանգ է սրտիս համար, չես կտամ նրան, միայն թե նա զա կերակրելու»:

— «Արեք ինձ հետ, ինչ վոր ուզում եք»,—պատասխանեց Փաթիմաթը խանուհու դայակին,—«բայց չես իմ աննման մարդաքիտը չեմ կարող թողնել: Խանուհուն չես սիրում եմ և պարզեի համար շատ շնորհակալ եմ, բայց նա իր չերեխան վոչվոքի չի տալ, այնպես էլ չես իմ չերեխաս չեմ տալ: Հաջի-Մուրադը մի առող և, վոր չերկնքից է ընկել ինձ համար: Նա աչքիս լույսն է, առող և, վոր չերկնքից է ընկել ինձ համար: Նա աչքիս լույսն է, և վոր սեռայա Հաջի-Մուրադին չես ստար մարդկանց չեմ տալ: Ավելի շուտ դաշուհնով չերկու ծիծս կկտրեմ, քան թե կգնամ ուրիշի չերեխային ծիծ տալու»:

Յեվ վորքան մարդը համողում էր կնոջը, ինչպես և խանուհու կողմից ուղարկված մարդիկը զգեստներ և վոսկե իրեր էլին խոստանում նրան, Փաթիմաթը իր խոսքից չետ չեր կանգնում և չեր համաձայնվում գնալ ծծմալը լինելու: Ապա Ասլան-բեկը ասաց խանի ուղարկած մարդուն. «Նա իշի պես համատ է և իր խոսքից չետ չի կանգնիլ, սակայն չես գիտեմ, թե ինչ կանեմ: Յերեխային չես պապի ու տատի մոտ կտանեմ, չերբ նա կգնա ջուր բերելու, և այն ժամանակ մենք նրան կհամոզենք»:

Այդպես էլ արին: Հենց վոր Փաթիմաթը իրիկնապահի ազոթքից առաջ իր գավակին որորոցի մեջ դրեց, իսկ ինքը սափորները վերցնելով զեպի աղբյուրը գնաց, Ասլան-բեկը խանի նորքաների և խանուհու դայակի հետ միասին մանուկը վերցրին

և բակը տարան: Մուրադն նրանք զեռես նրան չեչին տեղավորել թամբի չեռեսում՝ կողովի մեջ, չերբ Փաթիմաթը առանց սափորների վերադարձալ: Յերբ նա մոտեցավ աղբյուրին, նրա գլխում մի միտք ծագեց՝ միողոցե աղային առանց իրեն տանեն: Յեվ հենց վոր այդ միտքը հղացավ նրա գլխում, նա սափորները թողեց աղբյուրի մոտ և արագ-արագ վազեց զեպի իրենց տնակը:— «Վազիր, Փաթիմաթ»,—կարեց գոռաց նրա հարևանուհին,— «աղայիդ տանում են»:

Փաթիմաթը վազեվազ տուն մտավ, պատից դաշուհնը վերցըրեց և ինքն իրեն բակը նետեց: Նոքարը տակավին ուշքի չեր չեկել, չերբ մայրը դաշուհնով խփեց նրա ձեռքին, բռնեց չերեխան ու տուն վազեց: «Ինձ մոտեցողին կսպանեմ»,—ասաց նա՝ մի ձեռքով չերեխային կրծքին անդմելով, իսկ մյուսով դաշուհնը թափահարելով:

Նոքարի վերքը թեթև էր, կապեցին: Բայց ծերունի Ալի-Դիրեյը՝ Փաթիմաթի հայրը, առելի պատկառելի ծերունին, նոքարների հետ գնաց խանի մոտ՝ խնդրելու, վոր Փաթիմաթին ազապի ծծմոր պարտականություններից:

Այսպես Փաթիմաթը իր Հաջի-Մուրադին ուրիշներին չտվեց և չերկրորդ անգամ չգնաց խաների մոտ ծծմալը լինելու: (Գլ. XI).

IV.

Վոչվոք չիմացավ, թե Հաջի-Մուրադը ինչու ուսուների կողմնանցավ և հետո ինչու փախալ: Կարծում էլին, թի ալոտեղ մի խորամանկություն կար, թե նա ուզում էր տեսնել ուսուաց ամբությունները, փախել և ապա՝ իմանալով ուսուաց դիրքերը, ավելի հաջող դործել: Այդպիսի բան չկար: Նա ուսուների մոտ փախավ այն պատճառով, վոր առում էր Շամիլին և կամենում էր նրանից վրեժխնդիր լինել, իսկ հետո փախավ այն պատճառով, վոր մտաբերեց իր նախկին կյանքը, իր չերիտասարդությունը: Արիս-Մելիքովը ստիպեց, վոր նա իր պատմությունն անի իրան: Նա կորիս-Մելիքովին ամեն բան պատմեց, ինչ վոր ուսուներին հարկավոր կարող էր լինել իմանալու: Սակայն պատմելիս նա մտաբերեց իր ամբողջ կյանքը, հիշեց իր նախկին չերկու դավաճանությունը խաղալովն և այն ամբողջ վիշտը, վոր դրա պատճառով կրել էր ինքը: Այդ պատճառով նա չեղրակացրեց, վոր այժմ դավաճանությունը ավելի ևս վիշտ կպատճառի: Յեվ նա վճռեց չետ դաճնալ: Նա տատանվում էր, բայց մոր մասին առամ չուրը և Մաֆիդինի չերգը հարցը վճռեցին նրա համար: Նա պի-

տի փախչելը, պիտի վերադառնար Շամիրի մոտ, կամ մորը պիտի փրկեր, կամ պիտի կորչեր: Յեվ կորավ: (Գլ. XII):

V

ՀԵՂԻՆԱԿԻ ԲԱՅ ԹՈՂԱԾ ՀԱՏՎԱԾԸ: «ԽԱԶԱՎԱԹ» ԽՈՍՔԻ ԲԱՅԱՏՐՈՒԹՅՈՒՆԸ:

— Ի՞նչ բան է, խաղաղաթը և ի՞նչ բան է մյուրիդը,—հարցրեց Լորիս-Մելիքովը:

— Բայց միթե դու չգիտես:

— Գիտեցի, բայց կուզեցի բոլորը սկզբից իմանալ:

— Սկզբում մոլլա Մահմեդն է չեղել: Յես նրան չեմ տեսել:

Նա սուրբ մարդ է չեղել, մյուրիդ: Նա ասում էր.

«Ժողովուրդ: Մենք վոչ մահմեդական ենք, վոչ քրիստոնյա, վոչ ել կռապաշտ: Ճշգրիտ մահմեդական որեւքը անավասիկ ինչ է. մահմեդականները անհավատների իշխանութեան ներքո լինել չեն կարող. մահմեդականը վոչվոքի ստրուկ լինել չի կարող և վոչվոքի հարկ պիտի չվճարե, մինչև անգամ և մահմեդականի: Ով վոր մուսուլման է, նա ազատ մարդ պիտի լինի, և բոլոր մուսուլմանների միջև հավասարութուն պիտի լինի: Ով վոր իրեն սուլթաններ է միջև հավասարութուն պիտի լինի: Ով վոր իրեն մուսուլման է համարում, նրա համար առաջին գործը խաղաղաթը պիտի լինի, պատերազմ անհավատների դեմ, իսկ ապա շարիաթը պիտի հուսմ ենք հյուրեր ենք, մենք ամենքս մեր իսկական տեղը պիտի տեղափոխվենք, վորպեսզի այնտեղ փրկութուն գտնենք: Ահա թե ինչ է ասում մարգարեն. «Նա չե իմ մուսուլմանը, ով վոր վոչ կյանքն է խնայում, վոչ գույքը, վոչ ընտանիքը, ով վոր կատարում է զուրանի կամքը և շարիաթը: Ով վոր գործում է իմ պատվիրանների համաձայն, նա այն աշխարհում մինչև այժմ չեղած բոլոր սրբերից վեր կկանգնի»:

«Ժողովուրդ: Յերգվեցեք, վոր կթողնեք ձեր նախկին արատները և մեղքերից կհեռանաք: Գիշեր-ցերեկ աղոթեցեք, լացեք և խընդկացրեք, Չերմեռանդութեամբ աստծուն աղոթեցեք, լացեք և խընդկացրեք նրանից, վոր նա վողորմի ձեզ: Իսկ չերբ կղա անհավատների դեմ զինվելու ժամանակը, վերին ներշնչումով չես այդ կիննամ և ձեզ կհայտնեմ: Բայց մինչև այդ վողբացեք և աղոթեցեք: Աշխարհիս ամենամեղավոր մարդը չես եմ: Ներեցեք ինձ, բոլոր աշխարհալին բաներից չես արդեն հրաժարվում եմ»:

— Սկզբում նա աչքակա եր ասում, բայց հետո, չերբ Մահմեդը ամեն ինչ նրան հայտնեց, նա ասաց.

«Մարգարեցի անունով հրամայում եմ ձեզ. գնացեք ձեր հայրենիքը, հավաքեցեք ժողովուրդը, կարգացեք նրանց իմ խրատները, զինվեցեք և խաղաղաթի գնացեք, թշնամիներին բնաջինջ արեք և ձեր մուսուլման լեղբայրներին ազատեցեք: Ով վոր թըշնամուն սպանել է կամ ինքն է կռվի մեջ ընկել, — դրախտն է նրա պարգևը. իսկ չեթե դուք կռվի գաշտից փախչեք, կամ թե փողի և սուա խոստումների միջոցով ձեզ հպատակեցնեն, այն ժամանակ ձեր մզկիթները չեկեղեցիներ կդառնան, դուք առ միշտ ողովյալ կլինեք, ձեզ համար փրկութուն չկա, և աստուծո բարկութունից վախեցեք: Դուք ամուր տեղերում եք ապրում, դուք քաջ եք: Մի մուսուլման տասը անհավատի դեմ պիտի գնա և թիկունքը դեպի թշնամին պիտի չդարձնի: Ով վոր աչքակա կվարվի, նա սուրբ կլինի և դրախտի վայելքները կհաշակի: Ահա ձեր պարտականութունը: Դրանք կատարելու համար չես որհնում եմ ձեզ:

— Յեվ ահա Ղազի-մոլլան խաղաղաթը սկսեց, նրանից հետո Համզաթը, իսկ սրանից հետո՝ Շամիրը:

— Ահա այսպես այն ժամանակից իվեր, չերբ չես մյուրիդին սպանեցի, սկսեցի խաղաղաթի մասին մտածել: Այն ժամանակ չես դեռևս մյուրիդ չեղա: Մինչև անգամ այն մյուրիդի խոսքերը չես մոռացել ելի: Յես միայն հետո հիշեցի: Բայց այդ ժամանակ Ղազի-մոլլան շուտով սպանվեց, և նրա տեղը Համզաթը բռնեց: (Գլ. XI)

VI.

Նա մտաբերեց և ասաց չերբը:

Աչքակա եր չերբը.

«Պողպատե դաշուեղ սպիտակ կուրծքս կտրեց, և չես իմ աքեզակս, տղաս, նրան սեղմեցի, տաք արչունովս նրան լվացի, և վերքը առանց խոտերի և արմտիքների ապաքինվեց: Մահից չես չվախեցա, չի վախենալ և Չիգիտ-տղաս»:

— Ահա հենց այդ իսկ մայրս այժմ Շամիրի մոտ է և հենց նրան պետք է ազատել, — ասաց Հաջի-Մուրադը:

Նա մտաբերեց սարի տակի աղբյուրը, ուր նա՝ մոր շարվարը բռնած, նրա հետ ջրի չեր գնում: Մտաբերեց, ինչպես նա առաջին անգամ իր գլուխը ածելեց, և ինչպես ինքը պատից կախած պսպղուն լազանում իր կրո՛ կապույտին տվող գլուխը տեսավ:

զարմացած: Նա մտաբերեց և լղար շունը, վոր նրա չերեսն եր լի-
վում, և ծխի ու մածունի առանձին հոտը, չերը մաչըը նրանե
բլիթներ եր տալիս: Նա մտաբերեց, ինչպես մաչըը՝ նրան քթո-
ցի մեջ դրած, շալակած, սարերով տանում եր ագարակը պապի-
մոտ: Մտաբերեց կնճռապատ, սպիտակամիրուք պապին, ինչպես
նա իր ջլոտ ձեռքերով արծաթ եր կտրում և թուփն սախլում,
վոր ազոթքներ ասի: (Գլ. XI):

VII.

ՀԵՂԻՆԱԿԻ ԲԱՅ ԹՈՂԱԾ ՀԱՏՎԱԾՆԵՐԸ:

1.

Դա այն իսկ Չերնըշովն եր, վորին Ռաստոպչինը իր կատա-
կով գրոշմեց, չերը Պետական Սորհրդարանում քննվում եր դեկ-
տեմբերի 14-ի համար աքսորված Չախար Չերնըշովի բոլոր կալ-
վածները զինվորական մինիստր Ալեքսանդր Չերնըշովին հանձ-
նելու հարցը: Իմեծ զարմանս Սորհրդարանի բոլոր անդամների, վո-
րոնք գիտեչին, թե Ալեքսանդր Չերնըշովը՝ զեկաբրիտների գոր-
ծի դատավարութան մասնակցելով, ամենից շատ եր աշխատում
Չախար Չերնըշովին կորցնել տալ, Ռաստոպչինը այն կարծիքը
հալտնեց, վոր աքսորչալի կալվածները Ալեքսանդր Չերնըշովին
տան: Յերը Ռաստոպչինին հարցրին, թե ինչի վրա չե նա հիմ-
նում իր կարծիքը, ասաց, թե մի հին սովորութիւնն կա, վորի
համաձայն մահապարտվածի գոտին ու գլխարկը միշտ դահիճն և
ստանում:

Չերնըշովը գիտեր այդ գիտեր, վոր առհասարակ նրան չեն
սիրում, բայց ամենակին չեր կարծում, թե պակասութիւններ
համար չեն սիրում: Ընդհակառակը, նա կարծում եր, թե բարձր
հատկութիւնների համար չեն սիրում, վորոնք նրան սվել են
հաջողութիւն, և նախանձում են:

Նա այսպես եր կարծում այն պատճառով, վորովհետև ինքը
բոլոր բարձր չեղողներին նախանձում եր: Այսպես, նա նախան-
ձում եր և վորոնցովին:

2.

Չերնըշովից և Դուրդուրուկից հետո նեղս մտավ մի կարճա-
հասակ, փափրիկ մարմնով ծերուկ՝ քաղաքացիական նշանադրես-
տով Պետական Սորհրդարանում անց կացած որենքները զե-
կուցանելու: Դա Բլուզովն եր, զեկաբրիտների բարեկամը, նախ-

կին մինիստրը, այժմ որենսդրութան դիվանատան 2-րդ բաժան-
մունքի կառավարիչը:

Նա միքանի զեկուցում եր բերել նոր որենքների, գրաքըն-
նական հանձնաժողովի և ծերունի գրաքննիչի՝ պետական խոր-
հրդականի մասին, վորը զինվորական բանտարկութան եր չն-
թարկված նրա համար, վոր մի ամսագրում մինիստրի կարգադրու-
թիւնը դատափետոյ հոգված եր թուլյատրել տպագրելու:

Իր ավանդութիւններով Բլուզովը այն մարդկանց շրջանին եր
պատկանում, վորոնք ձգտում են դեպի լուսավորութիւն. նրան
ցավ էլին պատճառում Նիկոլայի՝ լուսավորութիւնը ձնշող կար-
գադրութիւնները. ուսանողների թիվը մինչև չերք հարյուրի
սահմանափակելը. արտասահման գնալու արգելքը. գրաքննու-
թիւն անմիտխտութիւնը. լրտեսութիւնը. տպագրական և մին-
չև անգամ բերանացի խոսքերի համար աքսորն ու պատիժը:
Բլուզովը այդ բաներին ցավակցում եր գաղտնի, մտերիմների
շրջանում, այս գործողութիւնները խստիվ դատապարտելով,—բայց
առ չերես հպատակվում եր: Նիկոլայը այդ տեսնում եր և գրա
համար էլ նրան արհամարում եր: Նիկոլայը բնագրմամբ զգում
եր, վոր Ռուսաստանին իշխանութիւնն է հարկավոր, այնպիսի
իշխանութիւն, վոր նա ուներ և վորը չեր կարող միասին
լինել այն իշխանութիւն հետ, ինչ վոր Բլուզովը, Յելենա Պալ-
լովան, ամեն տեսակ պրոֆեսորներ—Trissotius¹—ինչպես նա
չեր նրանց անվանում, լուսավորութիւնն էլին համարում: Այդ
պատճառով նա լուսավորութիւնն չեր համարում այն, ինչ վոր
ամենքը, լուսավորութիւնն էլին համարում, այլ լուսավորութիւն
եր համարում այն ամենը, ինչ վոր համաձայնում եր իրա իշխա-
նութիւն և ինչ վոր նրան զուր եր գալիս: Յեվ նա այդ անում
եր ուղղակի, աշկարա: Նա տեսնում եր, վոր Յեվրոպայում իշխա-
նավորներից շատերը կարևոր են համարում զիջումներ անել այն
բանին, ինչ վոր մարդիկ լուսավորութիւնն էլին համարում. այդ
զիջումները վճանք անում էլին ժողովրդականութիւնն ձեռք բե-
րելու համար, ինչպես Լյուի Ֆիլիպպը, վորին նա ստում եր. մյուս-
ները—հասարակութիւնից չերկուղ կրելով, ինչպես նրա աներ-
ձազը, պրուսացոց թագավորը: Բայց իր և Ռուսաստանի բարիքի
համար՝ նա այդ հարկավոր չեր համարում անել:

¹ Trissotin—Մուլեի «Femmes savantes» կոմեդիայի գործող անձինք-
ներից մեկն է: Դա մի ինքնահավան բանաստեղծ-արտիստ տիպ է, վորի
վտանաւորների գնահատողները մի փոքրիկ խումբ եր՝ միշտ պատրաստ նրանց
հափանութիւն տալու: Ծան. ոտս խմբ.

իրեն և Ռուսաստանի բարիքի համար նա հարկավոր եր համարում վոչ թե համալսարաններ, ամսագիրներ, հոգվածներ, գիտութիւններ, ուսումնականներ, բանաստեղծներ և լուսավորութիւն, այլ կարգապահութիւն: Յե՛վ դրա համար նա միայն մի բան եր պահանջում, վոր ամենքն անտրտունջ հպատակվին իրեն, Նրա կարծիքով՝ ամենքի չերջանկութեան համար ավել ուրիշ բան հարկավոր չեր— վոչ միայն ուսաների, այլև գերմանացիների, Ֆրանսիացիների, տաճիկների և ուրիշների համար,— վոչինչ հարկավոր չեր: Նա ամեն բան կանխ:

Յե՛վ այդ պատճառով այն մարդկանց, ինչպես Բլուզովը և լուսավորութիւն ուրիշ կողմնակիցներն ու պաշտպանները, վորոնք միայն լուսավորութեան բացակայութեան ժամանակ հնարավոր իշխանութեան բարիքներից ոգտովում ելին, մինչդեռ նրանք լուսավորութիւնն ելին պաշտպանում,— նա խորապես նրանց արհամարհում եր և չերեք չեր ընդունում նրանց ներկայացրածները, վորոնց նպատակը լինում եր լուսավորութեան խոչընդոտները հեռացնելը: Այսպես, այժմ նա իր համաձայնութիւնը չաւրվեց Բլուզովի բարեխոսութեան՝ ձերուսի գրաքննիչին զինվորական բանտից ազատելու:

3.

Յե՛վ իր պաշտանատեղին գնալուց հետո, սրտում հավանութիւն չտալով Նիկոլայի գործ գրած միջոցներին, նա հետևողականորեն, ճշտութեամբ կատարեց Նիկոլայի հրամանագրած բոլոր անգութ ու անարդար միջոցները, վորոնք վոչ միայն մարդկանց բարիքն ու խաղաղութիւնը արժեկին, այլ և նրանց կյանքը. վորոնք վոչ միայն մարդկանց կյանքն ու բարիքն արժեկին, այլև մարդկանց անբարոյականացում ելին, կարծրացում ելին նրանց սրտերը և վոչնչացնում մարդկային լավագուշն հատկութիւնները: (Գլ. XV):

VIII.

Բայց չերբ հացկերութի կեսին խոսակցութիւն բացվեց թագաժառանգ Ալեքսանդր Նիկոլայիչի անցյալում կովկաս գալու և այն գործի մասին, վորի համար նա Գեորգիի խաչ ստացավ, և Բարչատինսկին սկսեց պատմել, թե ինչպես չեղավ այդ, նրանք

լուցին և ականջ դրին, թե ինչ են ասում: Լուրեր կալին, թե այդ գործը պատրաստել եր կամակատար մեծ Վորոնցովը: Բայց Բարչատինսկու պատմածով ուրիշ բան եր դուրս գալիս: Նա պատմում եր, թե լեռնականները, վորոնց հետ թագաժառանգը ընդհարումն ունեցավ, թեպես խաղաղ լեռնականներ չեյին, բայց խաղաղ դիտավորութիւններով ելին դուրս չեկել— միայն մեծ թագավորի ժառանգին տեսնելու, վորի վերաբերմամբ սարեցիները մի առանձին հարգանք ելին տածում, գրեթե պաշտում: Լեռնականները խումբ-խումբ դուրս ելին չեկել սարերից և կանգնել ելին թագաժառանգի ճանապարհից հեռու: Թագաժառանգը ձիով գնում եր գորքի առջևից: Նրա կողքից գնում եր թարգման Բաթան, և Բաթան ասաց նրան, թե այդ լեռնականները, վոր չերևում են, խաղաղ չեն: Յերբ վոր թագաժառանգը իմացավ, վոր խաղաղ չեն, թարգմանի և ուղեկից կազակները հետ գնացին նրանց վրա: Կազակները հրացաններ արձակեցին, մի սարեցի սպանեցին, մնացյալները թագ կացան:

— Յերբ չես մոտ չեկա,— պատմում եր Բարչատինսկին,— թագաժառանգը ուզում եր հետեւել փախչողներին, բայց չես նրան լոնեցի:

— Արդյոք այդպէս եր, ձերդ պայծառափայլութիւն, — ասաց Կողլովսկին:— Յես ուրիշ բան եմ լսել: Լեռնականները, ինչպես, կարող ելին, ինչպես, նորին բարձրութեան վրա հրացան արձակել: Կարող և լինել, ինչպես, և ուղարկված են չեղել:

— Վոչ, հավանական ե, վոր դրանք միայն հետաքրքրվողներ ելին,— ասաց Բարչատինսկին:

— Ա՛յ ինչպես,— ասաց Պորտրացկին Բուտլերին:— Բայց Կողլովսկու վրա նայելը, խաչտառակվելու չե:

— Ինչո՞ւ համար,— հարցրեց Բուտլերը:

— Ինչպես չե, այս բոպելիս նրա կենացն են խմելու, և նա ճառ պիտի լոտի:

— Դեհ, մի կերպ կասի,— ասաց Բուտլերը:

— Այ, դու կտեսնես, վոր խաչտառակվելու չե,— ասաց Պորտրացկին, անկեղծ չերկուղ կրելով քաջ գեներալի համար:

Բայց պատահեց այն, ինչ վոր վոչվոր չեր սպասում: (Գլ. XXI):

ՀԵՂԻՆԱԿԻ ԲԱՅ ԹՈՂԱԾ ՀԱՏՎԱԾԸ

Արդեն չերրորդ գեղերն եր, վոր Հաջի-Մուրազը չեր քնել: Հենց վոր նա գնում եր իր սենյակը, ուր քնում եր, իսկուչն նրան ներկայանում եր այն ամենը, ինչ վոր կրել եր, և այն, ինչ կարող եր վիճակվել նրա մերձավորներին: Նրան կամ պարզ ներկայանում ելին կինը՝ չեչենուհին, բարակ, քնքուշ Սամպանեթան մի կոշտ ու կոպիտ ավարացու ձեւին, վորին և նրան կտան. կամ ներկայանում եր վորդին, վորի աչքերը դաշուչնով կհանեն և հատակի վրա կձգեն, ինչպես Քերիֆն այդ արավ նրա աչքի առաջ: Յեվ նա վորդուն պատկերացնում եր այնպես, ինչպես վերջին անգամ տեսել եր նրան: Սարերից նրա դուրս գալու նախընթաց որն եր այդ: Նա արդեն ամեն ինչ պատրաստել եր: Նրա հավատարիմ հինգ մշուրիդները նրա հետ դուրս ելին գալիս ու նրա ձին Արդունի մոտ պիտի բերելին: Տանից նա վոտով, միայն մի բեշմեթով պիտի դուրս գար: Յեվ ահա այդ որը վերջին անգամ նա խրճիթից գեպի գետակը իջավ, վոտները լվաց և, սարերի քամակում մալր մտած արևի ստվերում, գորզը փոսց ու սկըսեց աղոթել: Նոր միայն նա չոքել եր, բութ մատները ականջները խրել և ցուցամատներով աչքերը ծածկել, չերը քալելի ձայն լսեց, բայց չեր կամենում լետ նայել. սակայն բազեներ կանչող սուլոց լսելով՝ նա այն սուլոցով ճանաչեց իր վորդուն՝ Մահոմաչին, և չկարողացավ իրեն զսպել, ու լետ նայեց:

Մահոման գեպի սարն եր գնում, իր բարակ ու չերկայն վոտներով բարձրանում եր հեշտությամբ, գեպի ուսը ծոած ձախ թևի վրա ձեռնոցով մի բազե չեր տանում, իսկ մշուսով գետնից վերցրած փոքրիկ քարեր եր նետում: Մահոմաչի հագին միայն կապուշտ բեշմեթ եր, կաշա գոտի կապած՝ դաշուչնով հանդերձ, գլխին ել փափախ եր՝ չետևի կողմից ներս խրված: Յեվ տասնևհինգամյա մատղաշ, կարմիր չերեսը և պատանու ամբողջ բարձր հասակը, բարակ իրանը (նա հորից միքիչ ցածր եր) շատ գեղեցիկ եր՝ լեռնականների հատուկ գեղեցկությամբ: Չնայելով վոր ջահել եր, նրա լայն թիկունքը, պատանեկական շատ լայն կոնքը և բարակ ու չերկայն իրանը, չերկայն, վաչելչակազմ և ուժեղ վոտները և ուժը, բոլոր շարժումների մեջ նա ձկուսություն, ճարտարություն ուներ: Յերը պատրաստվում եր քար ձգելու, նա կանգ եր առնում, գեղեցիկ գլուխը լետ տանում և իր լոլոր հո-

գերով պտուտակած և ձգվելով և թեթևակի վեր թռչելով, քարը նետում եր հեռու և բարձր—սարից ել բարձր: Յերը նա քարը ձգեց, բազեն նրա ձեռից ընկավ և թևերը թափահարելով, ճչալով ու բոժոժները գնդգնդացնելով փոկից կախվեց: Մահոման մի ճարպիկ շարժումով կրկին նրան վեր բարձրացրեց, սուլեց և նորից կոացավ քարեր ջոկելու: Իսկուչն նա վեր բարձրացավ, և Հաջի-Մուրազը այլևս նրան չեր տեսնում: Նա լում եր նրա քրոջ՝ ձայնը և վալի-Մահոմաչի ուրախ ու զիլ քրքիջը:

Վերջին անգամ այսպես նա նրան տեսավ ու լսեց այս սիրելի, գեղանի և անհագ պատանուն: Հաջի-Մուրազը աչքով հետևեց նրան մինչև այն տեղը, ուր ճանապարհը ծովում եր, և ապասկսեց աղոթել, և աղոթելուց հետո ցած գնաց իր սոքարների մոտ, վորոնք նրան սպասում ելին: Յեվ այն որից նա վոչ կնոջն եր տեսել, վոչ ել վորդուն: (Գլ. XXIII):

ՆԻԿՈՒԱՅ ՊԱՎՂՈՎԻԶ
(Հեղինակի բաց թողած մի գլուխը)

Այն ժամանակ, չերը Նիկոլայը Մեծ թատրոնի տառանիշ ոթչակում նստած միաժամանակ զարմանում եր պարող կանանց, շարդաս մարդությունների վրա, վորոնք միանվազ ութսուն ջլապինդ՝ տրիկոլով ձիգ պատած վոտներ կլին բարձրացնում, հիանում եր և այդ պարողների կանացի ձևերի վրա, այդ իսկ ժամանակ հարչուրավոր, հազարավոր, տասնյակ հազարավոր մարդիկ—մալրեր, կանաչք, հալրեր ու չերեխաներ,—տանջվում կլին, այդ միակ մարդու կարգադրությամբ, զարհուրելի բարոյական ծանր չարչարանքներ կրելուց:

Բարի, կրթված, խելոք, լավագուչն ուսու մարդիկ տարիներով տառապում կլին, խելագարվում կամ բերդի ստորերկրաբանտերում թոքախտից մեռնում, և նրանց հանցանքն այն եր, վոր ուզում կլին Արակչեչենների ու նրա նմանների ինքնակամությունից Ռուսաստանն ազատել և, ի վրաս իրենց շահերի, ազատություն տալ միլիոնավոր ու միլիոնավոր ճորտերի, վորոնց ամարդի կալվածատերերը հասցրել կլին անասնական վիճակի: Տասնյակ հազարավոր լեհացիներ ստորերկրա բանտերում, արգելաբաններում, աքսորավայրերում սառապում կլին և կորչում:

դարձալ իրենց հասարակութեան լավագուէն մարդիկը, և նրա համար, վոր կամենում էին ապրել իրենց ժողովրդի դարավոր ավանդութիւններէ համաձայն, սիրում էին իրենց հայրենիքը և պատրաստ էին, այդ նպատակին հասնելու համար, ամեն ինչ գոհ ընել: Հազարավոր գանահարված մարդիկ էին մեռնում նրահամար, վոր իրենց հայրերի հավատն էին դավանում և չէին անցնում այն հավատին, վորի հետ իշխանութիւնն էր միացնում նրանց:

Հարուր-հազարավոր գինվորներ էին կորչում անմիտ վարժութիւններում, գորահանգեաններում, ուղղափորներում և ավելի ևս անմիտ պատերազմներում՝ ընդգեմ այն մարդկանց, վորոնք Ահաստանում, Հունգարիայում և Կովկասում իրենց ազատութիւնն էին պաշտպանում: Այդ ամենը միակ այդ մարդու կամքովն էր կատարվում: Այդ բոլորի պատճառը նա, անկասկած նա չէր և այդ նա չէր կարող չիմանալ, վորովհետեւ գիտեր, թե այդ բոլոր արհավիրքները իր հրամանով էին կատարվում: Յերբ մի վորեւէ բան նրա հրամանով չէր կատարվում, նա կարող էր դադարեցնել այն, ինչ վոր կատարվում էր: Յեւ չեթե նա չէր դադարեցնում, չէր կանգնեցնում, ապա նա չէր կարող չիմանալ, վոր բոլոր կատարված շարագործութիւններէ պատճառը ինքն էր: Անկասկած նա չէր կատարվող բոլոր գորհուրելի շարագործութիւններէ պատճառը և միևնուէն ժամանակ նա լիովին անկեղծ հավատացած էր, վոր նա վոչ միայն շարագործ չէր, այլ իր ժողովրդի ու ամբողջ մարդկութեան բարեբարն էր և անձնվերաբար ծառայում էր թե իր ժողովրդին և թե ամբողջ մարդկութեան: Ինչպէս էր այդ լինում: Ի՞նչպէս կարող էր այդ մարդու հոգու մեջ բուն զնել այդ սոսկալի խավարը, վոր ստիպում էր նրան իր չարագործ կյանքը անձնվեր սխրագործութեան և առաքինութեան որինակի տեղ ընդունել:

Ճիշտ այդպէս էլ իրեն մեծ էր համարում նրա բարեբարը Կոչվող ստապատիր, հեշտասեր, անգութ փարիսեցի, **արհնչալ*** հայրասպան-չեղբայրը, վոր Արակչեյի միջոցով հազարավոր մարդիկ էր մեռցրել ծեծելով, վորն ասում էր, թե Չուգալից մինչև Պետերբուրգ ճանապարհը գիտկներ կփոխ նախ, քան զինվորական շեների անհեղեղ մտքից կհրաժարվի: Յեւ զժբախտ, անխելք հայրն էլ իրեն ճիշտ այդպէս էր համարում: Վոչ միայն այդպէս, այլ և աշխարհիս բոլոր մարդկանցից իրեն հարուրասպատիկ լավ

* Նոտրածը հեղինակինն է:

ըին միայն փառասիրութիւնն ու պառավական պագշոտութիւնն էր զեկավարում, վորին հաճոյանում ու գովում էին բոլոր շրջապատողները: Ճիշտ այնպէս էլ իրեն անմեղանշական և մեծ էր համարում հիմար գերմանացին, Նիկոլալի պապը, վոր խելքը, ինչպէս և նրանք ամենքը, իշխանութիւնից և նրան ուղեկցող շողորթութիւններից թոցրել էր և սպանվեց իր անառակ կնոջ սիրողների ձեռքով: Այդպէս էլ վոչ միայն ամթահար էին լինում իրենց վատշվեր կյանքից, այլ պարծենում էին նրանով այն բոլոր սեզելս, հիմար և անգրագետ կանայքն ու աղջիկքը, վորոնք Պյոտրից հետո՝ մինչև նրա ժամանակը թագավորել էին: Ավելի ևս հավատացած էր, վոր ինքը բոլոր մարդկանցից գերագանց էր, այն միշտ հարբեցողը, ցոփաբարո, գաղղիական ախտով վարակված, անաստված Պյոտրը, վոր գվարճութեան համար սեփական ձեռքով կտրտում էր աղեղնավորները գլուխները և ավետարանի ձեռով ողու շտոֆների համար շինած արկղով և... ձեռով չիբուխներից շինած խաչով ժողովրդի մեջ էր պտտում սրբակատակութեամբ Քրիստոսին փառաբանելու. նա, վոր լիովին հավատատացած, ինքն իրեն իր ժողովրդի բարեբարն էր համարում:

Այդպէս էլ Նիկոլայն էր հավատացած: Բանի վոր ժողովուրդը այնպիսի դրութեան մեջ և գտնվում, վոր նրա հասարակական կյանքի համար այնպիսի իշխանավորներ են հարկավոր նրան, վորոնք պատրաստ են մարդկանց տանջելու, կողոպտելու և սպանելու, ապա այդպիսի մարդիկ էլ պիտի լինեն: Իսկ նրա համար, վոր մարդիկ կարողանան այս գորհուրելի գործերն անել, մտքով ու սրտով այնպէս ապականված պիտի լինեն, վոր չտեսնեն այն բոլոր չարիքը, վոր նրանք անում են, և բարի գործեր համարեն այն անուշիկ և անզուժ գործերը, վոր պիտի գործադրեն մարդկանց վրա՝ նրանց կառավարելու համար:

Այս գարմանալի չերեուլթը միայն մի բացատրութիւն ունի ինչ-վոր մարդկանց աչքում մեծ է, աստուծո առջև պղծութիւն է: Յեւ վոչ թե պատահաբար է լինում, վոր մարդկանց աչքում մեծը, այսինքն՝ վեհութեան գագաթին կանգնած մարդիկ աշխարհիս վատթարագուէն մարդիկն են լինում, այլ այն, վոր դա հավիտենական աներկրայելի որենք է, վոր աշխարհիս վեհութեան գագաթին կանգնածը խորապես ապականված մարդ պիտի լինի, և վոր այդ ուրիշ կերպ լինել էլ չի կարող: Եր համարում նրա գորհուրելի, աչրասպան, պոռնիկ տատը, վոր

Մարդիկ-իշխանավորներ, վորոնք կառավարում են ուրիշներին, սովորաբար կառավարվողներին ներկայանում են առանձնապես աչքի ընկնող, մեծ մարդիկ: Այդ տեղի չե ունենում և այն շողորքը-թուփյան պատճառով, վորով այդ մարդիկ միշտ շրջապատված են լինում և վորը նրանց մահից հետո չեկ շարունակվում ե ի հաճույս նրանց ժառանգների. ապա և ստորագրվողների բնական ձգտման պատճառով, վորպեսզի իրենց ստորութունը նվազեցնեն այն մարդկանց մեծացնելով, վորոնց նրանք հպատակվում են: Իսկ, իրոք,—ինչպես ասած ե ավետարանում, ինչ վոր մարդկանց առջ մեծ ե, աստուծո առջ պիղծ ե,—ուրիշների վրա իշխանութուն ունեցող մարդիկ վոչ միայն լավագույն մարդիկ չեն լինում, այլ, ընդհակառակը, անպատճառ ամենավատ մարդիկը պիտի լինեն, հասարակութան ամենազեղխաբարո, մոլորված մարդիկը, և վորքան բարձր, այնքան վատ: Այդ ուրիշ կերպ ել լինել չի կարող:

Յերբ վոր շարքում, փայտը ձեռին կանգնած գլինվորը՝ շարքի միջից անցկացող մահապարտվածին խփում ե, այդ գլինվորի բարոյական մեղավորութունը գրեթե աննշան ե: Յեթե նա հրաժարվի ձեռնալուց, նրան կձեռնեն: Յեվ այդ պատճառով իր չեղբայրակցին ձեռող գլինվորի բարոյական պատասխանատվութունը համարյա թե գոյութուն չունի: Իսկ սպան, վոր համանման գործին մասնակցում ե, արդեն ավելի չե պատասխանատու: Իրավ ե, նա կկորցնի իր, համեմատաբար, սպանով և պատվավոր դերքը, չեթե դաժան գործին մասնակցելուց հրաժարվի, բայց նա մարմնական բռնութան չի չենթարկվում և, սպալութունից բացի, կարող ե գոյութան ուրիշ միջոցներ գտնել, թեպետ և ավելի վատը: Յեվ այդ պատճառով սպան ավելի պատասխանատու չե և, իրեն արդարացնելով, վոր չար գործին մասնակցում ե, նա արդեն բարոյական անկման պիտի չենթարկվի: Վորքան կառավարիչը բարձր ե, վորքան նրա գրութունը սպանով ե, վորքան հեշտ նա կարող ե իր կյանքը կարգավորել՝ մահապարտութան մասնակցելուց հրաժարվելով, այնքան ել նրա խելքն ու միտքը անբարոյականացած պիտի լինեն: Իսկ մի մարդ, ինչպես թագավորն ե, վոր խստասիրտ, չար գործերից հրաժարվելուց վոչինչ չի կորցնում և նրանցից վոչ մի շահ ել չի ստանում, բայց թուլլատրում ե, պահանջում ե, չար գործեր և հրամանագրում, ինչպես Նիկոլայը ուսանողի մահապարտութունը հրամանագրեց և հազարավոր ուրիշ չար գործեր,—բանականությամբ բոլորովին ապականված և քարացած սրտով մի ելակ պիտի լինի:

Այդպես են չեղել և այդպես են բոլոր իշխանակալները, և վորքան շատ են նրանք ինքնակալ, այնքան ավելի այդպես են. և գերագույն աստիճան այդպես եր և Նիկոլայ Պակինը¹, ինչպես նրան այդ անունը կպցրել եին:

Այդ ժամանակ ուս ժողովրդի գլուխը մի այդպիսի մարդ անցած լինելու համար հարկավոր եր, վոր այդ մարդը մարդկային ամեն ինչ կորցրած լիներ. խաբեբա, անաստված, անգութ, ազկտ, բթամիտ, վոր վոչ միայն այդ չնմանար, այլ հավատացած լիներ, վոր ինքը արդարութան և ազնվութան ասպետ եր, իմաստուն կառավարիչ, իր ժողովրդի բարերարը: Յեվ այդպես եր Նիկոլայը: Ուրիշ կերպ նա չեր ել կարող լինել: Նրա ամբողջ կյանքը մի պատրաստութուն եր այդպիսին լինելու համար:

Իր ծննդյան առաջին իսկ սրից և մինչև իր թագավորութան վերջին տարիները, ավելի քան 50 տարվա ընթացքում, նա արտակարգ բախտավոր եր՝ բախտի այն աշխարհային մտքով, վոր ինչպես իր ցանկութունների բավարարութուն և համարվում, առողջութուն, հարստութուն, նախանձելի դիրք և ձեռնարկութունների հաջողութուն:

Նույնիսկ Նիկոլայի ծնունդը—չորս աղջկանից հետո արու գավակ—մոր համար մեծ բախտավորութուն եր, վոր իր մեծ՝ Ալեքսանդր և Կոնստանտին գավակներից զրկվել եր, վորովհետև նրանց Յեկատերինան եր վերցրել, և այդ պատճառով մանուկի համար ել բախտավորութուն եր, վոր մոր սիրելին չեղավ:

Մի ուրիշ բախտավորութունն ել այն եր, վոր մանուկը անսովոր գեղեցիկ եր—մեծ, գեր, սպիտակ, լիք-լիք, ասես թե թելով կապած վոտներով և ձեռներով: Մանուկը այնչափ սիրուն եր, վոր հետեկալ որը Յարսկոյե Սելո չեկած Յեկատերինան, չերխաչին բարձրացնելով լուսի դեմ, նախանձարար շարժեց գլուխը, իրր թե մտածելով, արդոք այդ թոռին ել չվերցնի, բայց թուր բարձր, գալրացած ազալակեց, և նա չերխաչին մորը տվեց: Նա նրան չվերցրեց, վորովհետև հարկավոր չեր իրեն: Մեծերը 18 և 17 տարեկան ելին: Ալեքսանդրին նա նոր եր միայն պսակել, և նրանից ժառանգ եր սպասվում: Յեկատերինեն պատրաստվում եր և չերկրորդին ամուսնացնել և այդ պատճառով նա չեր ել կարող մտածել, վոր այդ մանուկը վորպես ժառանգ կհարկավորվի: Յեվ Նիկոլայը մնաց իրեն պաշտող մոր և Լիվինի ձեռին, իսկ սա անձնավեր սիրով խնամում և չերես եր տալիս նրան: Այդ ել Նիկոլայի

¹ Նորը հեղինակինն ե: Պակին—Գավազանյան, Մահակյան:

բախան եր: Նիկոլայի ծնված տարին Յեկատերինան մեռավ. Պավելը սպանվեց, չերբ Նիկոլայը հինգ տարեկան եր: Յեկ այս հանգամանքներն ել բախտավորութուն ելին Նիկոլայի համար: Իր փոփոխական չերիտասարդ սիրականներով, պատավ անառակի փոխարեն և խելացնոր, դաժան ու անհրապույր հոր փոխարեն՝ Նիկոլայը բարի, գրավիչ մեծ չեղբոր՝ Ալեքսանդր կայսեր իշխանութւան և ազդեցութւան տակ ընկավ:

Հոր սպանման մասին Նիկոլայը միայն հետո իմացավ:

Գարնանային մի պաշտառ որ եր, չերբ մայրը արտասովակաւած աչքերով փոքրիկ չերեխաների սենյակը մտավ և դողդոջուն ծնոտով ասաց, թե նրանց հայրը մեռել և: Նիկոլայը չհասկացավ, թե ինչ և նշանակում մեռել և, բայց հասկացավ, վոր մայրը տանջվում և, մոտեցավ նրան և, նրա մեծ ձեռք բռնելով, վախեցած աչքերով նրա չերեսին նայեց: Մայրը նրա գլուխը բռնեց, իրեն սեղմեց ու լաց չեղավ: Նիկոլայը նուշնպես լաց չեղավ: Միխայիլը նուշնն արավ: Ապա մայրը՝ ինքն իրեն գաղթելով, արտասուքը սրբեց և չերեխաներին զրոտնելու ուղարկեց: Արդեն քառորդ ժամից հետո մանուկները ուրախ-զվարթ վազվզում ելին նավակի չեակից, վոր, չերերվելով և սառցի կտորներից առաջ ընկնելով, սահում եր կամրջի տակից հոտող արագընթաց վտակի վրա:

Նիկոլային դեռևս Պավելը նշանակել եր Կիրասիրների և ապա Իզմայիլյան գնդի պարագլուխ, և մանուկը ճանաչում եր այդ չերկու գնդի նշանազգեստները. նա ուրախանում եր, չերբ պատահում եր նման հագուստով մարդկանց, և չերջանիկ եր, չերբ նրան Իզմայիլյան գնդի նշանազգեստը հագցրին:

Նա փոքրիկ հրացան ու փոկրիկ թուր ուներ, և զինվորի պես քայլ առ քայլ գնում եր և հրացանաձգութւան վարժութւուններ ու հրամանատարութւուն անում իր չեղբայրներին և Աղելբերդ ու Վելիեզորսկի ընկերներին և ուրիշներին, և վորովհետև նա ուժեղ եր, ժիր և զինվորական գործը հասկացող, այդ պատճառով այդ ամենը նա շատ լավ եր անում, ուրիշներից ավելի լավ, և այդ կողմից ել նա չերջանիկ եր:

Նիկոլայի տղաութւունը նուշնքան բախտավոր եր, վորքան և մանկութւունը:

ՄԻ ԱՆՍԿԻՉԲ ՀԱՏՎԱԾ.

... և անորոշ կերպով զգում են այդ: Մարդ կարող և կյանքի որենքների հետ անհամաձայն ապրել միայն այն ժամանակ, չերբ նա իր որինազանցութւունը քողարկում և ստութւյամբ: Իսկ ստութւյամբ իր որինազանցութւունը թագցնելով, մարդ ավելի ևս հեռանում և որենքից. իսկ որենքից շեղվելով՝ նա ավելի ևս մեծ, ավելի ևս թանձրամած, նրա մեղքը ծածկող ստի կարիք և ունենում: Կավ և, չերբ այդ սուտը ընդունում են միայն այն մարդիկ, վորոնք այդ ստի կարիքն ունեն, իսկ լոյրը շրջապատողները չեն ընդունում և սուտը մերկացնում են: Ազգայի ստութւյուն ընդունում և այն մարդը, ում վոր նա հարկավոր և, և զաղարում և նրան հավատալ ու ճշնում և իր կյանքի որենքը չպահպանելը **ՎՈՆԿԱԿՏԵՆ**, վոր քողարկված եր այդ ստով: Բայց լինում են այնպիսի դրութւուններ, չերբ շրջապատողներն այդ սուտը վոջ միայն ընդունում են, այլ և սաստկացնում են: Յեկ այն ժամանակ ստութւյունը՝ որինազանցութւուն պահանջելով, ինչպես ձյունի մի գունդ, անուկի ծավալ և ստանում, այդ ստից ստորացած մտրդուն չենթարկում և ավելի և ավելի շեղվել ճշմարտութւան որենքից և հասցնում և լրակատար խելագարութւան և խորին հոգեկան տանջանքների:

Այսպես եր Նիկոլայ Ի-ի կյանքը 27 տարի թագավորելուց հետո: Չնայելով իր արտաքին ամբողջ վեհութւան, վորի հավասարը չկար այն ժամանակ ամբողջ Յեկրոպայում, նա խորապես մենակ եր և զժբախտ: Դան բարձրանալուց հետո նրա ամբողջ կյանքը ամեն մի մարդու կյանքի որենքն անընդհատ չպահպանելն եր, հեռաբար և անընդհատ ստութւյուն:

Նրա թագավորութւունը սկսվեց ստութւյունով, վորովհետև զեր խողալով՝ նա, ամեն մի պատեն կամ անպատեն զեղջում, ամենքին հավատացնում եր, թե չգիտի, վոր Ալեքսանդրը իրեն զահաժառանգ և նշանակել և թե գահ չի կամենում: Այդ սուտ եր:

Իշխանասեր, սահմանափակ, անկիրթ, կոպիտ և այդ պատճառով անձնավստահ զինվոր լինելով, նա չեր կարող իշխանութւուն չսիրել և իշխանութւունով եր միայն հետաքրքրվում և մի բան եր ցանկանում—վոր իշխանութւունը սաստկանար: Կոնստանտինին չերդում տալը, վորից նա և նրան շողոքորթողները անձնվիրութւան սխրագործութւուն չինեցին,— չերկուցից եր: Չեռ-

քում չունենալով գահաժառանգութեան վկայագիրը և Կոնստանտինի վորոշումը չիմանալով, իրեն կայսր հռչակելը՝ գահընկեց, սպանված լինելու վտանգին եր չենթարկում, և նա Կոնստանտինին ստիպված պիտի չերգվեր: Իսկ չերը Կոնստանտինը վերըստին հրաժարվեց, ապստամբութուն բռնկեց, վորի նպատակն այն եր, վոր մարդիկ կամենում էին թեթևացնել իւր թե նրան ճնշող բեռը: Յեւ զբան նա գնդակներով պատասխանեց, լավագույն ուս մարդկանց աքսորելով և տաժանակիր աշխատանքների չենթարկելով: Ստութեանը մարդասպանութուն առաջ բերեց, մարդասպանութունը՝ սաստկացած ստութեան:

Բայց այն աշխարհ սուտը, վոր այն ժամանակ ստում եր, հավատացնելով, թե իշխանութունից ճնշվում և, նրա 27-ամյա սարսափելի թագավորութունից հետո, անողոք, պատուհասող ճշմարտութուն դարձավ: Իշխանութեան այն ծանրութունը, վորից այն ժամանակ նա հրաժարվում եր, հոգու ամբողջ կարողութեամբ դեպի այդ իշխանութունը ձգտելով, նրա թագավորութեան և կյանքի վերջում արդարև սոսկալի ճնշող ծանրութուն չեղավ: Նա չեր կարող խոստովանել, թե սուտ եր այն ճանապարհը, վորով 27 տարի նա գնացել եր, մինչդեռ նույն ճանապարհը շարունակելով՝ նա զգում եր, վոր ավելի ու ավելի դժբախտ և, և նա վոչ մի միջոցութուն չուներ: Ընտանիք չկար: Չնայած կնոջ հետ ունեցած հարգանքի ու սիրո ստապատիր հարաբերութուններին, նա իր տոհմաբնակից կոպտարար հագուրդ եր տալիս, բացի նելիգովայից, առաջին պատահած կնկա հետ և գիտեր, վոր կինն իմանում եր այդ, հետևաբար և նա նրա կինը, այնպես ընկեր լինել չեր կարող, ինչպես առաջին ժամանակն եր: Սուտ կինն նրանց հարաբերութունները: Յերեխաները: Մեծը վորպես ժառանգ նրան հետաքրքրում եր, բայց նա տեսնում եր, վոր վորպին արդեն նրան դատում և և իր թագավորութեան սպասում՝ վոչ թե շարունակելու, այլ հոր արածը խորտակելու: Ապատամիտ մտքեր կինն տոգորում նրան: Նա վոչ միայն սիրում եր, հիմար վտանաավորներ կարում, այլ և ծխում եր, և նրան գապել չեր կարելի:

Մտերիմները, ոգնականները: Բայց դրանք ամենքը փոչ մարդիկ էին՝ Չերնըշովից սկսած մինչև Կիլիմիսիլը: Նույնիսկ ամենալավերը ստոր շողոքորթներ էին, վորոնք նրանից վախենում էին և պատրաստ էին նրան դավաճանելու, չեթե շահավետ լիներ: Նա բարկանում եր, վոր այդ այդպես եր, և չեր հասկանում, թե իրա կողմից իշխանասիրութեամբ նրան կարող էին ծառայել միայն անպետք և կողմիտ մարդիկ:

Նրա միակ և վոչ ստոր մտերիմը՝ Միխայիլ չեղապարհ եր, վոր նրան սիրում եր և կատակներով զվարճացնում: Նա մեռավ, ու վոչվոք չմնաց:

Կրոնը: Բայց չե վոր ամբողջ այդ կրոնը նրա իշխանութեան ներքո չեր, և այդ պատճառով նրան հենվելը՝ ինքն իրեն հենվել եր նշանակում:

Գիտութունները, արվեստները: Բայց չե վոր գիտութունները միջոցներն են խորտակելու այն կարգը, վոր նա ներմուծել ու պահպանում եր: Գրեթե նույնն էին և արվեստները. դրամատիկ արվեստը հերոսներին ու մեծ մարդկանց հռչակագուրդ անելու միջոց եր. բանաստեղծներն անհանգիստ ու վնասակար մարդիկ էին: Գիտութունների մեջ կար միայն մի հարկավոր գիտութուն—դինավորական գիտութունը, իսկ արվեստներից—ուրախ չերաժառութունը, արագընթաց ձիարշավը և զավեշտները, բայց թե մեկը և թե մյուսը արդեն ճանձրացրել եր նրան:

Իշխանութունը: Ռուսաստանում իշխանութունը ամենակարող եր, բայց դրան ել նա այնպես եր ընտելացել, վոր այդ իշխանութունն այլևս նրան չեր ուրախացնում, իսկ իշխանութունը սկզբունքով, իշխանութունը Յեվրոպայում անհուսալի կերպով վտանգված եր. և 48 թ. հեղափոխութունը, և Նապոլեոն I-ի ընտրութունը ընդհանուր քվեարկութեամբ, և սահմանադրութունը, վոր աներձագը՝ պրուսացոց թագավորը, խոստացել եր տալ ժողովրդին... Այն իշխանութունը, վոր նրա միակ նեցուկն եր և բարոյական ու առողջ մտքից վեր բարձրացնողը, այդ իշխանութունը սկզբունքով սկսել եր տատանվել...

«ՀԱՋԻ-ՄՈՒՐԱՒ»

ՎԻՊԱԿՈՒՄ ՊԱՏԱՀՈՂ ՄԻՔԱՆԻ ԹՈՒՐՔԵՐԵՆ ԲԱՌԵՐԻ
ԲԱՑԱՏՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ.

Ադաթ—սովորութիւն, չգրված որենք:

Ալեյքումսալամ—տես՝ սալամ ալեյքում:

Ամանաթ—պատանդ:

Աչա—աչո, հա:

Աուլ—գլուղ:

Բայրամ—մուսուլմանների գլխավոր տոնը:

Բար—կա:

Բարանչուկ—չերիսա:

Բեշմեթ—չերկաչն կապա կամ արխալուղ:

Բուխարի—պատի մեջ շինված ոջախ, վառարան:

Գլաուր—արհամարհական կոչում բոլոր վոչ—մահմեդական-
ների համար:

Յախշի—լավ:

Յափնջի—չերիճաղ, թաղիքից շինած վերարկու:

Յոք—չկա:

Թավիցիք—հյուսիսային Դաղստանում բնակող լեռնական-
ների ցեղը:

Թարիքաթ—Մահմեդի բարձրագույն հոգևոր վարդապետու-
թյունը, վոր քարոզում և հրաժարվել աշխարհային բո-
լոր բարիքներից, հոգով միշտ աստուծո հետ լինել և
իր չեղբայրներին սիրել:

Թեպեք—աթար, չորացրած աղբ, վոր գործ և անվում իբրև
վառելիք:

Թուլումբազ—առճկական մեծ թմբուկ, վոր մի փայտով ևն
խփում:

Իմամ—ժողովրդի հոգևոր և հասարակական կյանքի գերա-
գույն ղեկավարողը:

Լեզլի—հարավային Դաղստանում բնակվող լեռնցիների ցեղը:

Լա իլլահ իլ ալլահ—չկա աստված, բացի աստծուց:

Սազավաթ—պատերազմ անհավասանների գեմ:

Խողբը— չեք քեզ սկսել չեք կու. կողմից կրճ. քի վրա կարած հրա-
 ցանի վտամփուշաների և վտտողի համար ակզեր, վրազմա:
 Խուրջին— ուսին ձգելու չեք կրերան տողրակ:
 Խոշ գլալի— բարով չեկար:
 Կումգուն— կուլա, ծորակով կուժ:
 Կումըկ— Դաղստանի շրջանում ապրող ժողովուրդ:
 Կունակ— հյուր, զոնաղ, բարեկամ:
 Հալղա— գնահ:
 Հաջի— արարական հորջորջումն և աչն մարդկանց, վորոնք
 ուխտալնացուծյուն են արել Բյար, մուսուլմանների
 գլխավոր սրբավայրը:
 Դոչաղ— քաջ, կտրիճ, ճարպիկ:
 Մինարիթ— մզկիթին կից աշտարակը:
 Մյուրիդ— թարիքաթի հետևողը:
 Մյուրշիդ— թարիքաթը քարոզող, վարդապետող:
 Մութալիմ— աշակերտ:
 Մուեզին— մզկիթի սպասավոր, վորի պարտականուծյունն
 և որը չեք ք անգամ աշտարակ բարձրանալ և բարձրա-
 ձաչն աղոթել, վոր բոլոր հավատացյալների համար
 նշան է՝ իրենց տանը աղոթելու:
 Նալիբ— գավառի կառավարիչը:
 Նամաղ— աղոթք, վոր մուսուլմանները որը չեք ք անգամ
 անում են:
 Նոքար— ծառա, թիկնապահ:
 Շարիաթ— զուլանի վրա հիմնված մուսուլմանների գրավոր
 որենքը:
 Շեյխ— սուրբ:
 Ուրան չախշի,— քաջ, կտրիճ, լավ:
 Չեչեն— թերեքի շրջանում բնակող ժողովուրդը:
 Չերքեսիա— լեռնականների վերնազգեստը՝ մահուկից կարած:
 Չյուրեք— սիմիոզրի ալյուրից թխած տափակ և կլոր հաց:
 Չիխիր— Կովկասի թունդ կարմիր գինի:
 Չուվչակ— կակուղ հողաթափ, առանց կրունկների:
 Ջիգիտ— կտրիճ, քաջ, ճարպիկ մարդ:
 Ջիգիտուծյուն— ձի հեծած ժամանակ չափազանց ճարպիկ
 շարժումներ անել, որինակի համար՝ չերք ձին սրըն-
 թաց արշավում և, դետնից մի վորեկ իբ վերցնել և
 ալլա: Լեռնականները Ջիգիտուծյուն անելով կչին դի-
 մավորում պատվավոր հյուրերին ու դեսպաններին

Սալամ ալեյքում— վողջուն քեղ, բարե, վորին սովորաբար
 պատասխանում են՝ ալեյքում սալամ:
 Սաուբուլ— վողջ լիբ:
 Սարղար— փոխարքա:
 Փեշքեշ— ընծա:
 Փիլլիշ— խմորեղեն:
 Բոշեր— հողաթափի պես կոշիկներ, վաչափ կրունկներով:
 Բիսա— կովկասյան ժողովուրդ, վոր ապրում և Արզունի և
 Մակալլոնի ձորերում:

Վ Ր Ի Պ Ա Կ Ն Ե Ր

Եջ	Տող	Տպված է	Պիտի լիցի	
2	10	վարից	գուրս քշելով	գուրս քշելով
7	12	վերից	չորությամբ	չարությամբ
11	10	վարից	ճակներից ճաքավոր կոշիկներ	ճակներից հետ ճաքավոր կոշիկներ
12	1	վերից	քայլում էլին	փայլում էլին
12	14	»	— Ուղղակի հողի մեջ:	— Ուղղակի հողի մեջ:
20	2	վարից	չեղել	չեղել
27	15	վերից	կարիճներ	կարիճների
27	7	վարից	թուխ-աչքեր ձին	թուխ-աչքետ ձին
28	10	վերից	գորաշղթայում գծով	գորաշղթայի գծով
37	2	վարից	գլորվում էր	գալարվում էր
40	8	վերից	սառնամանիքների	սառնամանիքի
45	6	վարից	նա նրանց աչքի առջև գնդապետ Զոլոտու- խինին գրեթե սպա- նեց	նա գրեթե նրանց աչքի առջև գնդա- պետ Զոլոտուխի- նին սպանեց
47	18	վերից	կնոջ ասպետական հարգանքով	կնոջ հետ ասպե- տական հարգան- քով
78	1	»	Սալթըվովի	Սալթըկովի
79	1	վարից	գովասանքները	գովասանքները
91	11	»	Բուտլերը լեռին գոնից	Բուտլերը բերդի լեռին գոնից
102	10	վերից	Այդ չերեկո իրիկվա ադոթքը	Այդ չերեկո, չերը իրիկվա ադոթքը
112	15	վարից	լեռնապանների գերի- ներին	լեռնապան գերի- ներին
115	19	վերից	մի-մի տվեց	մի-մի հատ տվեց
127	15	վարից	վերցնել Նազարովին	վերցնել Նազա- րովի ձին

Բացի այս վրիպակներից, 149-րդ էջի առաջին տողը սխալ-
մամբ ընկել է նույն էջի վերջը:

INDEX

1	1	1
2	2	2
3	3	3
4	4	4
5	5	5
6	6	6
7	7	7
8	8	8
9	9	9
10	10	10
11	11	11
12	12	12
13	13	13
14	14	14
15	15	15
16	16	16
17	17	17
18	18	18
19	19	19
20	20	20
21	21	21
22	22	22
23	23	23
24	24	24
25	25	25
26	26	26
27	27	27
28	28	28
29	29	29
30	30	30
31	31	31
32	32	32
33	33	33
34	34	34
35	35	35
36	36	36
37	37	37
38	38	38
39	39	39
40	40	40
41	41	41
42	42	42
43	43	43
44	44	44
45	45	45
46	46	46
47	47	47
48	48	48
49	49	49
50	50	50
51	51	51
52	52	52
53	53	53
54	54	54
55	55	55
56	56	56
57	57	57
58	58	58
59	59	59
60	60	60
61	61	61
62	62	62
63	63	63
64	64	64
65	65	65
66	66	66
67	67	67
68	68	68
69	69	69
70	70	70
71	71	71
72	72	72
73	73	73
74	74	74
75	75	75
76	76	76
77	77	77
78	78	78
79	79	79
80	80	80
81	81	81
82	82	82
83	83	83
84	84	84
85	85	85
86	86	86
87	87	87
88	88	88
89	89	89
90	90	90
91	91	91
92	92	92
93	93	93
94	94	94
95	95	95
96	96	96
97	97	97
98	98	98
99	99	99
100	100	100

INDEX





ԳԻՆԵ 1 ԹԻՒՆ.

1-111 N 1-111

«Ազգային գրադարան»



NL0325125

14.137

